Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ltn
1218

1999

№ 907

ՀԱՌԱՔՕՍՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՄԱՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

ՆԵՐՍԻՍԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ

ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆ ՄԷՋ

1869 թուականի հոկտեմբերի 12ին,

Հանդերձ Դպրոցի ուսուցիչների քանի մի գիտական աշխատութեամբք, դամբանական ճառախօսութեամբ հանգուցեալ Հոգաբարձուի, Մ՝ իքայէլի Տէր Գրիգորեանի դագաղի վերայ,

Այլև

ՀԱՄԱՌՕՏ ՅՈՒՅԱԿ

Ներսիսեան հոգեւոր ազգային դպրոցի մէջ ասանդուած ուսանելի նիւթերի:



ԹԻՖԼԻՍ.

1870

Ի Տպարանի Հ. Էնֆիաճեանց և ընկ.

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ ЯАНВАРЯ 10 1870 Г.
ТИФЛИСЪ.

Հ Բ 1222

Գ 1218·60

ԼԵՕՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Արժանապատիւ Փոխանորդք Հայկազեան Հասարակութեան Թիֆլիզում,

Այս առաջին անգամն է, որ Դուք լսում էք իմ ձայնը այս նուիրական պատերի մէջ, ուր Դուք և մեք ժողովուած ենք այսօր կատարելու մի հանդիսաւոր գործողութիւն, այսինքն է հրապարակաւ համար տալ Ձեզ այն ազգային գործի տընտեսութեան մասին, որ Ձեր մեծարական վստահութեամբ յանձնած է այս դպրոցի Հոգաբարձուներին:

Հա տարի ուկէս է, որ մեծապատիւ Հոգաբարձուքը աշխատումն իւրեանց ծանր կոչման մէջ: Դուք իբրև փոխանորդք ազգային հասարակութեան, ունիք այսօր արդարացի իրաւունք համար պահանջել և վերահասու լինել, թէ Ձեր ընտրութեամբ և Նորին Վեհափառութեան, սրբազնակատար կաթողիկոսի դերագոյն հաստատութեամբ կարգուած գործակալքը այս դպրոցի օրպէս են լցուցել իւրեանց վերայ դրած պարտականութիւնքը, և որ չափով արդարացուցել են այն ակնկալութիւնքը, որ ամենայն բարեացակամ անձն Ձեր մէջ ունեցած է նոցանից:

Ես այս բոպէիս բաղդաւոր եմ համարում իմ անձը ճշմարտութեան հաւատարիմ թարգմանիչ լինել Ձեր արժանապատիւ ժողովի մէջ: Ուրեմն շնորհեցէք ինձ քանի մի բոպէ զբաղեցնել Ձեր ուշադրութիւնը մի համառօտ ընդհանուր ճառախօսութեամբ այն արդիւնագործութիւնների վերայ, որ Հոգաբարձուքը, դպրոցի թէ արտաքին և թէ ներքին բարեկարգութեան մասին այս կարճ միջոցումս կէս մի լցուցել են արդէն, և կէս մի իբրև դեղեցիկ և օգտակար առաջադրութիւնք հետ ըզհետէ լցուցանելոց են, միտ դնելով ուսումնարանի նիւթական պայմաններին:

Այժմեան Հոգաբարձուների հասարակօգուտ արդիւնագործութեանը տեղեկանալու և արդարութեան կշռով հատուցանելու նոցա, հարկաւոր է երևում քանի մի քայլ յետս գնալ դէպ ի անցեալը և հարցաքննել, թէ Ներսիսեան հոգևոր ազգային դպրոցը, սկսեալ իւր հիմնարկութենից մինչև այսօր, բազմադիմի փոփոխութիւնների ենթարկուելով, մի կառավարիչների ձեռքից դէպ ի միւս կառավարիչների ձեռք անցանելով, օրպիսի արտաքին և ներքին կացութեան մէջ հասած է այժմեան հոգաբարձուներին:

Այս մեր հոգևոր ազգային դպրոցը—միակ որ և իցէ պարծանքը Թիֆլիզի հայ հասարակութեան—լինելով բարեյիշատակ Ներսիսի, Վրաստանի վիճակաւոր առաջնորդի, իսկ յետոյ, Հայոց ընդհանուր կաթողիկոսի ազգասիրական հոգու և իմաստուն հանճարի ծնունդը, այլև անդրանիկ հայկազեան դպրոցը Թիֆլիզի մէջ, ուր շատերը Զեղանից տեսած են իւրեանց մտաւոր և բարոյական կեանքի լոյսը, ուր մի ժամանակ դրած էր և իմ դպրոցական մանուկ տարիների օրօրոցը—Ներսիսեան ուսումնարանը, զանազան յաջող և անյաջող պայմանների մէջ յառաջ ու յետս խաղալով, երբեմն անփորձ մարդերի ձեռքում, անղեկավար նաւի պէս այս կողմ ու այն կողմ տարուբերուելով ժամանակի հոսանքի մէջ, երբեմն փառամոլ և անձնախնդիր իշխանների կառավարութեան ներքոյ խաղալիկ դառնալով սորա և նորա առանձին կամքին և դիտաւորութեանը — ցաւելի է ասել, որ իւր քառասուն և հինգ տարուկացութեան մէջ օրէ ցօր անշքանալով, մի տխուր կերպարանք փոխած է մի ուրիշ տրխուր կերպարանքի հետ: Թէ ինչ արդասաւորութիւն, կամ պտղաբերութիւն կարելի էր պահանջել մի ուսումնարանից, որ ենթարկուած է եղած այսքան անընդհատ փոփոխութիւնների, բաւական էր ինձ յիշեցնել Զեզ միայն Ֆրանսիական առածը թէ «Pierre qui roule n' amasse point de mousse» այսինքն " մի քար, որ միշտ զլորվում իւր տեղից, երբէք կարող չէ մամռապատուիլ ": Մի այլ իրողութիւն, այլ բան, որ ունի իւր արմատը Ներսիսեան դպրոցի սկզբնական գաղափարի մէջ, այսինքն, մի որոշեալ և ճշդութեամբ յատկացած խորհրդի և ուղղութեան պակասութիւնը — այդ բանը իւր մասամբ, նոյնպէս վնասակար է եղած դպրոցի յառաջադիմութեանը ժամանակի հետ միասին, և այդպէս մահու հարուած է հասուցել ժողովրդի վստահութեանը դէպի այդ ուսումնարանը: Եթէ սորա վերայ յաւելացնենք դպրոցի նիւթական կարողութեան աղքատութիւնը և, նոյն միջոցին, նորա անտեսական կառավարութեան մէջ պատահած անհոգութիւնքը, այնուհետև պիտոյ է ասել, թէ Ներսիսեան դպրոցի անցեալ օրերը ցուցանումեն մի տեսարան, որոյ վերայ մաախոհ Հայը առ իսրտէ ցաւելով և հառաչելով միայն, կարող էր դադարեցնել իւր հայեացքը:

Առաւել մօտաւոր անցեալը այս դպրոցի հին, պատուելի Հոգաբարձուների կառավարութեան ներքոյ, ցուցանումէ մեզ մի վիճակ, ուր արդարև երևումեն այս և այն անուրանալի արդիւնագործութիւնքը, բայց թէ նոքա երբ և իցէ առաջարկած էին իւրեանց այն կարևոր խնդիրը, թէ հարկաւոր էր տալ ուսումնարանին այն ներքին կազմակերպութիւնը, որ նա լցուցանէր Հայոց մանուկների ժամեան հոգեղէն պիտոյքը—այդ բանը մնումէ մի խորին մթութեան մէջ թաղած:

Նորընտիր Հոգաբարձուքը, ինչպէս երևումէ դպրոցի դիւանական արձանագրութիւններից, անցեալ 1868 թուականին, մայիս ամսուց, մտանելով իւրեանց պաշտօնակատարութեան մէջ, գտած են դպրոցի գանձարանում շատ փոքր գործադրելի արծաթ, բայց բաւական մեծաքանակ պաշար մոմեղէն վաճառքի, որ արդարև նոյնպէս արծաթ էր: Նոքա գտած են և նշանաւոր պարտքի մուրհակներ, դպրոցի անշարժ կալուածքը կարօտ բազմամասնեայ նորոգութեան, եկամուտքի աղբիւրքը նուազած, դպրոցի ուսումնական անտեսութիւնը թերի և պակասաւոր:

Այս ցաւելի իրողութիւններին դարման մատուցանելու համար կարևոր էր ժամանակ, անվաստակելի հոգածութիւն և մեծամեծ ծախք, որ անհնարին էր յանձին առնուլ առանց պարտքի տակ մտանելու: Վասն որոյ նորընտիր Հոգաբարձուքը հարկաւ ստիպուած էին նախ և յառաջ իւրեանց բոլորովին ուշադրութիւնը ընծայել ուսումնարանի նիւթական անտեսութեանը, վճարել պարտքերը, կարձել աւելորդ ծախքերը և, որչափ կարելի էր, ամրացուցանել եկամուտքը, հին կալուածները նորոգելով և բարեկարգելով, այլև նորանոր շահաստացութիւնների աղբիւրներ զոյացնելով:

Մեծապատիւ Հոգաբարձուների խնամարկութիւնը տարածուելով հասած է և ծխական ուսումնարանների ողբալի վիճակին: Սոքա, որ մի ժամանակ ամենայն եկեղեցու գաւիթում բացած լինելով, զուրկ էին որ և իցէ վերատեսչութենից և հրաստկող աչքի հայեացքից, Հոգաբարձուների կարգադրութեամբ դարձած են արդէն պատրաստողական դասատունք մայր դպրոցին, կազմելով վեց գլխաւոր ծխական ուսումնարանք կենտրոնական եկեղեցիների մօտ: Դոցա մէջ կարդուած են հայ և ռուս լեզուների, այլև թուաբանութեան սկզբունքի ուսուցիչք: Այդ ուսումնարանները ստորադրած լինելով Հոգաբարձուների անմիջական իշխանութեան ներքոյ, նոցանից երկու անձինք և տեղական երէցփոխանները հոգատար են ուսուցիչների և աշակերտների պիտոյքին, եկեղեցական գանձարանից: Հոգաբարձական խորհուրդը մըտածումէ դալոց օրերում հնարներ գործ դնել առաւել մօտ ներքին կապերով շաղկապելու ծխական ուսումնարանները Ներսիսեան դպրոցի հետ, նոցա մէջ ուսանելի նիւթերը ընդարձակելու, որչափ հարկաւոր կ'երևի, այլև այդ տեղ աշխատաւոր ուսուցիչների նիւթական վիճակը բարեկարգելու, միտ դնելով հնարաւորութեանը:

Հոգաբարձական ընկերութիւնը առաջիկայ տարուս մէջ արած է այլ կարգադրութիւնք: Դպրոցի ուսումնական մասը բարեկարգելու խորհրդով, նա հրաւիրած է Մոսկովայից Լազարեանց ճեմարանի պրոֆեսսոր Ստեփանոս Նազարեանցը: Դպրոցի առաջին դասատունը, աշակերտների մեծաթիւ բազմութեան պատճառով բաժանուած է երկու զուգընթաց (պարալելեան) դասատունք, վերստին բացած է հինգերորդ վերին դասատունը, որ անցեալ ուսումնական տարում աշակերտների տհասութեան պատճառով փակուած էր իբրև անխորհուրդ և անօգուտ:

Այս բոլոր արդէն իրագործուած բարեկարգութիւնքը Ներսիսեան հոգևոր ազգային դպրոցի արտաքին և ներքին անտեսութեան մէջ և այն, մի սակաւաև միջոցում, համառօտապէս նկարագրելով. Զեր առաջև, թողումեմ Զեր արդարակշիռ դատողութեանը թէ օրպիսի ջերմեռանդութեամբ և անձնանուիրութեամբ Հոգա-

բարձուքը լուսցել են իւրեանց վերայ դրած պարտականութիւնքը, թէ արպիսի ջանք և աշխատութիւն դործ էին դրած նոքա, յառաջադէմ կացուցանելու դպրոցի թէ նիւթական և թէ հոդեղէն բարին: Մեծապատիւ Հոդաբարձուքը շատ հեռի են այն մեծամտութենից, որպէս թէ նոքա ամենայն դործ լուսցել էին արդէն. քա՛ւ լեցի: Նոքա քաջ դիտեն և խոստովանուումն իւրեանց սրտի մէջ, թէ ուսումնարանը ունի դեռ ևս շատ պակասութիւնք, թէ տակաւին մնում է նոցա շատ ու շատ դործ դործելի, մինչև կարող էին տալ Ներսիսեան հոդևոր ազդային դպրոցին այն ներքին կազմակերպութիւնը, որ նոքա անշուշտ կարևոր են համարում, եթէ այդ դպրոցը պիտի դտանէր ազդի հաւատը և վստահութիւնը, մօտենար և զուդաւորուէր նորա սրտի հետ, որ կարելի է միայն, լուսցանելով ազդի մտաւոր ու բարոյական պիտոյքը, ժամանակի յառաջադէմ ընթացքին համեմատ: Շրջանկատ Հոդաբարձուքը դիտեն և խոստովանուումն, թէ ամենայն բան մարդկեղէն աշխարհումն, եւս առաւել մի ազդային դպրոց, որ չէ հաւասարաքայլ շարժողութեամբ զուդընթաց իւր ժամանակին—նա չունի կենդանական զօրութիւն իւր մէջ, նորա վերջը, թէ վաղ և թէ յետոյ, մահ է, կորուստ և կործանումն: Ազդային ուսումնարանի հետ անբաժանելի կապած է Ձեր և մեր ամենեցուն մտաւոր ու բարոյական կեանքը:

Հոդաբարձական ընկերութիւնը իւր պատուելի անդամներից մինի բերանով կ'առաջարկէ Ձեր ուշադրութեանը դպրոցի նիւթական անտեսութեան մանրամասն հաշիւը և քաջայոյս է, որ իւր ծանր աշխատութեան ասպարիզումը դտանելու է Ձեր արժանապատիւ հասարակութեան մէջ ամենուապէս մտածող և զդացող անձինք, որ պատրաստ կը լինէին իւրեանց թէ լուսաւոր խորհրդակցութեամբ և թէ ազդասիրական վեհանձն ձեռնտուութեամբ գործակից լինել Հայկական կեանքի մտաւորապէս և բարոյապէս վերաշինութեանը, որ ամենայն ժամանակ հիմնած է մանուկ սերունդի դաստիարակութեան և կրթութեան վերայ: Ներսիսեան հոդևոր ազդային դպրոցը մի հատիկ ուսումնարաննէ բոլոր Թիֆլիզի մէջ, որ ունի մարդասիրական ցաւակցութիւն Հայոց որբերին և չքաւոր ծնողների զաւակներին, որ ուսման մեծագին բարիքը ձրի շնորհումէ իւր աշակերտներին: Եւ ոչ այսչափ միայն. այլև նա կերակրումէ, ադուցանումէ և պահպանումէ իւր տան մէջ քսանևերկու որդեղիրք և եօթն թոշակառուք (ստիպենդիատք): Ներսիսեան դպրոցը մի քրիստոնէական սիրոյ և բարեդործութեան տուն է ազդի զաւակներին, և այս պատճառով մնում է միշտ կարօտ ազդի ազնուամիտ և կարող մարդկերի ձեռնտուութեանը:

Այժմ դարձուցանումեմ խօսքս առ Ձեզ, Հայկազեան մանուկներ և պատանիք, որ ժողովուած էք այս տեղ մատնակից լինելու մեր այսօրեան հանդիսաւոր գործողութեանը: Ձեր օգտի և ապագայ բարեբաղդութեան համար են լինում այսքան ջանք և աշխատութիւնք, այսքան անձնանուէր հոդածութիւնք: Զգաստացէք. ճանաչեցէք Ներսիսեան դպրոցի մեծագին բարերարութիւնքը Ձեզ: Հասկացէք այն

սուրբ պարտականութիւնքը, որ դրած են և Ձեր վերայ. այսինքն շահեցուցանել և ամեցուցանել դիտութեան քանքարը, որ ամենայն օր յանձնվումէ Ձեզ Ձեր պատուելի ուսուցիչների և դաստիարակիչների ձեռամբ: Մտածեցէք, որ սոքա, որչափ և շատ աշխատէին և աքնէին իւրեանց ծանր պաշտօնի մէջ, այնու ամենայնիւ կարող են միայն լուսցանել աշխատութեան կէս մասը, իսկ միւս և առաւել մեծ մասը մընումէ Ձեր վերայ, Ձեր բարոյական պարտքն է: Ժամանակը արծաթ է. դրծ դրեցէք Ձեր մանկութեան ոսկի տարիքը, որ ձեր ամենադեղեցիկ սեփականութիւնն են, ուսանելով և կատարադործելով Ձեր անձը մտաւորապէս և բարոյապէս: Սերմանեցէք այսօր, որ հնձէք վաղուեան օրը: Դրոշմեցէք Ձեր սրտի վերայ այն լատինական առածը թէ «suae quisque sortis faber est», այսինքն, "ամեն մարդ իւր բաղդի դարբնադործն է": Նոյն բանը յայտնապէս քարոզումէ Սիրաք իմաստունը, ասելով. "Ջուր և հուր առաջի մարդոյ են. յոր և կամեսցի, մխեսցէ զձեռն իւր": Դու՛ք, անտարակոյս, կամիք Ձեզ պատրաստել բաղդաւոր ապագայ. ուրեմն, իմ մանուկ բարեկամներ, արիացէք, մի՛ վախենաք այն ճանապարհից, որ տանումէ զՁեզ դէպ ի այդ ցանկալի նպատակը: Ով որ կամի հասանել նպատակին, նա պարտէ ճանապարհ հատանել:

Արժանապատիւ փոխանորդք ազդային հասարակութեան. ես կարող չեմ աւարտել իմ հանդիսաւոր ճառախօսութիւնը Ձեր հետ, առանց յիշեցնելու Ձեզ մի սուրբ պարտք. ըստ տէրունական հրամանի տալ Աստուծոյ, ինչ որ պատկանումէ Աստուծուն, կայսերը, ինչ որ պատկանումէ կայսերը, և մի՛ ումեք մնալ պարտապան: Ուրեմն թող մեք այսօր զոհութիւն և փառաբանութիւն մատուցանենք ամենակալ Տիրոջը վասն նորա շնորհների և ողորմութեան, որ նա ցուցել է առ մեզ, օրհնելով մեր ազնիւ, աշխատաւոր Հոդաբարձուների ձեռքի վաստակը յօդուտ և իշխանութիւն մեր հոդևոր ազդային դպրոցի այս քաղաքումս: Թող միաբանութեամբ վեր, ուղղենք առ Ամենաբարձրեալը խնդրուածք և պաղատանք վասն երկարակեցութեան և բարօրութեան մեր ամենաղթած Կայսեր և Թագաւորի, Ալէքսանդր Նիկոլայեվիչի, որոյ օգոստափառ հովանաւորութեան ներքոյ շնորհած է մեզ մեծագին ազատութիւնը խորհելու և հոդալու մեր հայկական որբերի և չքաւորների մտաւոր ու բարոյական կարիքը, անխափան յառաջ տանելու մեր ազդային բարեդործական դպրոցի արտաքին և ներքին անտեսութիւնը: Խնդրենք և աղաչենք Պարգևատուն ամենայն բարիքի, երկայն օրեր խաղաղութեան և կենդանութեան պարգևել Նորին Վեհափառութեան, սրբազնակատար կաթողիկոսի, Տեառն Գէորգի չորրորդի, որոյ դերազոյն խնամակալութեան և կարող պաշտպանութեան ներքոյ գտանվումէ այս մեր դպրոցս: Այլև, թող հրապարակաւ մատուցանենք մեր առ իսրաէլ շնորհակալութիւնը դպրոցիս հոդաբարձական ժողովի նախագահ աթոռակալին, Տեառն Մակարիոս վեհաշնակաւոր արքեպիսկոպոսի և առաջնորդի տեղւոյս, խնդրելով իվերուստ պահել և պահպանել Նորին Վեհ սրբազնութեան պատուական կեանքը, որպէս զի այս դըպ-

բոցս Նորա իմաստուն և լուսաւոր առաջնորդութեան ներքոյ, իբրև կենդանարմատ ծառ, ածէ, զօրանայ և հարիւրաւոր չափով պտղաբեր լինի յօգուտ և ի պարծանս Հայկազեան աշխարհի։

Տէրունական դպրոցի Ս. Նալբէանց.

ՀԱՄԱՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Ուսումնարանի արտաքին տնտեսութեան մասին։

ԳԵՐԱԶՆԻՒ ՏԵԱՐՔ,

Ներսիսեան Հոգևոր ազգային դպրոցի Հոգաբարձուքը Ձեր մեծարողական վստահութեամբ կոչուած լինելով ի պաշտօն կառավարութեան ուսումնարանիս, արբազան պարտականութիւն են համարում առաջի դնել Ձեր բարեմիտ ուշադրութեանը իւրեանց տասնեւօթնամեայ գործառնութեան համարը։

Անցեալ 1868 թուականի Մայիսի սկզբից, Հոգաբարձուքը մտանելով իւրեանց պաշտօնի մէջ, գտան դպրոցի նիւթական վիճակը այսպէս.

1. Առ ձեռն պատրաստ արծաթ դանձարանում 1450 մանէթ, 27 կոպ. և պարքի մուրհակներ 11,714 մանէթի, և 52 կոպեկի։
2. Ներսիսեան հին դպրոցի շինուածը տարեկան արդիւնաբերութեամբ 84 մանէթի։
3. Հին դպրոցի երկու ծայրերում գտանուած տախտակաշէն կրպակները 1326 մանէթի արդիւնաբերութեամբ։
4. Այժմեան դպրոցի տունը տնտեսական նիւթեղէններով։
5. Երեքյարկեան կալուածը, ընծայած Հանգուցեալ Աւետիք Փիրոյեանից, 3724 մանէթի տարեկան եկամուտքով։
6. Հին դպրոցի հանդէպ կառուցած նորաշէն 21 խանութները 2466 մանէթի և 25 կոպեկի հասութով։
7. Դատարկ հող, հանդէպ Վանքի եկեղեցւոյ, առանց պարսպի, որ բերում էր տարեկան արդիւնք 124 մանէթ։
8. Մի կալուած, ընծայած Հանգուցեալ Օքոյեանից, տարեկան արդիւնաբերութեամբ 862 մանէթի։
9. Մի տուն և այգի, հանգուցեալ Ստեփանոս Գուլիփաշեանից ընծայած, կիսով չափ Էջմիածնու աթոռին և կիսով չափ Ներսիսեան ուսումնարանիս։ Սմա հասանելի արդիւնամասը կացուցանում էր տարին 96 մանէթ։

10. Մի մեծ այգի Սողանլուխում, հանգուցեալ վաղցի Իշխան Օթար Ամիլախվարեանից ինչան սիրոյ և յարգանքի ընծայած նախկին վիճակաւոր Ներսէս արքեպիսկոպոսին, 280 մանէթի տարեկան եկամուտքով։
11. Մերձաւորապէս 5000 մանէթի արդիւնաբերութիւն ունեցող ուխտատեղիներից որք են Թելեթու, Շահնաբաթի, Կրծանիսու վանքի, Ծաղկեվանքի, Սուրբ Գէորգի մասանց Դաշտի խաչի, Բօլնիսու Սուրբ Գէորգի, Շուլնդիսու Սուրբ Աստուածածնի, Շուլավերու Սուրբ Պօղոսի և Պետրոսի եկեղեցիները։
12. Մոմավաճառութեան կրպակը և աւագ պահարանը, մոմագնով, մոմով և այլ նիւթեղէններով, որոյ հաշիւը հասանում էր 9614 մանէթի։ Մոմավաճառութեան արդիւնքը հետ ղեկեակ պակասած են, որովհետև հանգուցեալ Մատթէոս կաթողիկոսի կարգադրութեամբ քանի մի վիճակների մէջ, այն է Եչեգավեանցոցը, Գորուց, Ախալցխու, Թելաւի, Սղնախի, Դուշեթու և Քութայիսու, մոմավաճառութեան եկամուտքը դարձուցած են յօգուտ տեղական ծխական ուսումնարանների։
13. Վեց դասատուներ դպրոցի մէջ, որոց մինը պատրաստողական, ուսուցիչք և այլ պաշտօնեայք թուով 20 և աշակերտք թուով 180, սոցանից որդեղիրք 21. որոց մէջ ուսումնարանի ծախքով պահպանուածքն էին 16, թոշակաւորքը 5։ Տարեկան ռոճիկ ուսուցիչների և այլ պաշտօնաւորների, 9411 մանէթ, 44 կոպէկ։
14. Մատենադարանը 12476 հատոր գրեանքով, դպրոցի տպարանը չորս հին մամուլներով և 30 պուդ հին և նոր տառերով, այլև զանազան հանդերձանքով։

Հոգաբարձուքը, ինչպէս նոցա պարտականութիւնն էր, վերահասու լինելով ուսումնարանի ներքին և արտաքին վիճակին, հարկաւոր գտան առանձին ուշադրութիւն ընծայել տնտեսական կառավարութեանը, և այս պատճառով օգտաւէտ համարեցին կարճել աւելորդ ծախքերը և բաղմապատկել արդիւնքը, որչափ ձեռնհաս էին։

15. Գանձապահի, անշարժ կալուածների վերատեսչի, բժշկի և ծախսարարի ռոճիկները, որ հասանում էին տարու մէջ 840 մանէթի, դադարեցան։
16. Տարու մէջ առնելի ծախքերի քանակութիւնը, ընդհանուր տեսութեամբ որոշուեցաւ 19,276 մանէթի 90 կոպեկի հիման վերայ։
17. Հատուցուեցաւ նախկին պարտք մոմի, 1614 մանէթ, 52 կոպէկ։
18. Հատուցուեցաւ 500 մանէթ տոկոսիք այն 10,000 մանէթի, որ յառաջուց պարտք էր առած Էջենդեանցի արծաթագլխից։
19. Համեմատելով կալուածներից այժմուս ստացած արդիւնքը յառաջուց լուրաց արդիւնքի հետ, յաւելուածը կացուցանում է 2,560 մանէթ։
20. Այժմեան դպրոցի շինուածը նորոգուեցաւ, գործ դնելով 1952 մանէթ։

21. Հիմնաւոր կերպով նորոգուեցաւ Փիրօյեանի ընծայած կալուածը, ծածկելով տանիքը երկաթի թերթերով, որ նստած է 2,910 մանէթի, 40 կոպէկ:

22. Ներսիսեան դպրոցի ստորին յարկը նորոգուելով, շինուեցան 17 կրպակներ, երկու կողմից դէպի երկայնութիւնը յօրինուեցաւ քարայատակ, և պատրաստուեցան նիւթք վերնայարկի նորոգութեան համար. բոլորը 4841 մանէթի ծախքով: Ցիշեալ կրպակներից 5 հատը տուած են վարձու, ամեն մինը 100 մանէթով:

23. Այժմեան դպրոցի տան ստորին յարկը, իբրև աւելորդ, վարձու տրուեցաւ 780 մանէթով:

24. Թէլէթու վանքի շինութիւնը պայմանագրով տուած է յառաջ տանելու արդէն սկսածը և ծածկելու շինուածքը կղմնտրեայ տանիքով, որոյ վասն լինելու են 3000 մանէթի ծախք:

25. Հոդաբարձուքը արդէն ձեռնարկած են շինելու Ծիրանաւորի եկեղեցւոյ պարիսպը, կրպակը և սենեակներ վասն ուխտաւորների, այլև նորոգելու հին սենեակները:

26. Դատարկ դետինը, որ գտանվում է հանդէպ Վանքի եկեղեցւոյ, մաքրուեցաւ և տափատակապատուեցաւ, գործ դնելով 972 մանէթ և 32 կոպէկ: Այս դետինը շինուելով, կարող է մի ժամանակ բաղում մասամբք աճեցնել ուսումնարանի արդիւնքը և դառնալ գլխաւոր եկամտական աղբիւրներից մինը:

27. Ուսումնարանի 5 երրորդ վերին դասատունը վերստին բացուելով և առաջին դասատունը, աշակերտների մեծաթիւ բազմութեան պատճառով, բաժանուելով երկու առանձին զուգընթաց (պարալելեան) դասատունք, դոցա վերայ եղած տարեկան ծախքը հասանում են 2800 մանէթի:

28. Այժմուս, դպրոցի մէջ աշխատաւոր ուսուցիչքը են թուով 17. աշակերաք 152, որոց մէջ որդեգիրք, ուսումնարանի պահպանութեամբ, 22, թոշակաւուք 3. թոշակառուք (ստիպենդիատք) 7:

29. Մոմավաճառութիւնը, որ է Ներսիսեան ուսումնարանի եկամուտքի գլխաւոր աղբիւրներից մինը, տրուեցաւ Թիֆլիզու քաղաքացի Պ. Աւետիք Իշխանեանին, վաճառական պայմաններով, օրինաւոր և ապահով գրաւականով, տարին 7000 մանէթի հատուցմամբ:

30. Որդեգիր աշակերտների և դպրոցի սպասաւորների կերակրման հոդատարութիւնը, այլև նորա լուսաւորութեան և այլ մանրամասն պիտոյքի հոդացողութիւնը յանձնուած է պարտականութեան պայմանագրով Պ. Իսահակ Շահբուդաղեանին. վասն կերակրման որդեգիրների—որոյ մէջ ամփոփուած է և սպասաւորների կերակրումը—որոշելով օրական հատուցումը 20 կոպէկ իւրաքանչիւրի համար, իսկ վասն ճրագի և լուսաւորութեան և այլ մանրամասն ծախքի, ամիսը 62 մանէթ. 50 կոպէկ սահմանելի:

31. Գումար վերոյիշեալ ընդհանուր նախահաշուից արտաքոյ արած և առնելի ծախքի հասանում է 18,190 մանէթի, 80 կոպէկի:

32. Այժմ դպրոցի գանձարանում մնում է առձեռն պատրաստ արծաթադրամ 10,542 մանէթ 79 ½ կոպէկ:

Ծանօթութիւն. Այս տարու առանձին կարգադրութիւններին, որ արած է Հոդաբարձական ժողովը, պատկանում է այն, որ Մոսկուայից հրաւիրուած է Իպաշօն տեսչութեան դպրոցին Պրոֆեսսոր արևելեան լեզուագիտութեան Պ. Ստեփանոս Նազարեանց:— Հոդաբարձուք մեծայոյս են, որ յիշեալ գիտնականդ անձնանուէր աքնութեամբ կ'աշխատի բարեկարգել Ներսիսեան ուսումնարանի դասատուութեան ընթացքը, մանաւանդ թէ զօրացնելով և բարգաւաճ կացուցանելով դպրոցի մէջ Հայկազեան լեզուի գիտութիւնը:

Այս հաշիւ ու համարս Ներսիսեան հոգևոր ազգային դպրոցի տնտեսութեան մասին առաջարկելով ձեր բարեմիտ ուշադրութեանը, ակնիւ պարոնայք, թողումենք ձեր արդարակշիռ դատողութեանը որոշել, թէ որ չափով Հոդաբարձուքը աշխատաւոր են գտանուած ուսումնարանի բարեկարգութեան գործի մէջ, և որչափ էին նոցա ջանադրութեան և աշխատութեան պտղաբերութիւնքը, սկսեալ այն օրից, երբ նոքա յանձն էին առած իւրեանց ազգասիրական պաշտօնը, մինչև այս Հոկտեմբերի սկիզբը:

ՀՈԴԱԲԱՐՁՈՒՔ.

Մասնաւոր համարատուութիւն

Ներսիսեան հոգևոր ազգային դպրոցի գանձապահի, Պ. Յովհաննէս Զիթախեանցի կողմից.

ՄԵԾԱՊԱՏԻՒ ՊԱՐՈՆԱՅՔ,

Այսօրեան հանդիսաւոր ճառը և Հոդաբարձական ժողովի գործունէութեան համարատուութիւնքը, արդէն ըստ բաւականին ծանօթացնելով զձեզ ուսումնարանիս ներքին և արտաքին տնտեսութեանը, կարող էին զարթուցանել ձեր մտքում մի խնդիր. արդեօք ուսումնարանի արծաթը գանձապահի ձեռքում շահեցուցած է, թէ մնացած անգործ և անշահաբեր: Մի այսպիսի բարեմիտ հարցասիրութեան տարակուսանք փարատելու համար, ես պարտականութիւն եմ համարում իմ վերայ, մի քանի խօսք ասել այս տեղ: Հոդաբարձուքը երբէք պատուէր տուած չեն ինձ գանձարանի արծաթը շահեցնելու, և ոչ իսկ այդպիսի պատուէր կարող էր յառա-

ջանալ, միտ դնելով այն իրողութեանը, որ իմ պահպանութեան ներքոյ գտանուած արծաթը չէ եղած մի այնպիսի տեղական արծաթաղլուխ, որ կարելի լինէր տոկոսիքով տալ, այլ միշտ գտանուած է գործադրութեան մէջ, ծախք առնելով ուսումնարանի թէ անշարժ կալուածների նորոգութեան և շինութեան, և թէ միւս կարևոր պիտոյքի վերայ: Ճշմարտութեանը վերահասու կացուցանելու զգեղ, ես առաջարկումեմ ձեր ուշադրութեանը գանձապահական մատենից քաղուածներ, ուստի հնար է տեղեկանալ ստուգութեամբ, թէ իւրաքանչիւր ամսու սկզբում, որչափ արծաթ գտանուած է գանձարանում:

1868 թուականի Մայիսի 1 ին եղած է գանձարանում 1451 մանէթ, 29 կոպ. Յունիսի 1 ին, 3010 մանէթ, 95 ³/₄ կոպէկ. Յուլիսի 1 ին, 4532 մանէթ, 41 կոպ. Օգոստոսի 1 ին 5560 մանէթ, 17 ¹/₂ կոպ. Սեպտեմբերի 1 ին, 8297 մանէթ, 15 ¹/₂ կոպ. Հոկտեմբերի 1 ին, 8752 մանէթ, 44 ¹/₂ կոպ. Նոյեմբերի 1 ին, 10,200 մանէթ, 69 կոպ. և Դեկտեմբերի 1 ին, 8946 մանէթ, 43 ¹/₄ կոպէկ:

1869 թուականի Յունվարի 1 ին եղած է գանձարանում 10,863 մանէթ, 98 ¹/₂ կոպէկ. Փեբրվարի 1 ին 10,376 մանէթ, 67 կոպ. Մարտի 1 ին 9541 մանէթ, 22 կոպ. Ապրիլի 1 ին 8188 մանէթ, 1 ¹/₄ կոպ. Մայիս 1 ին 10,984 մանէթ, ¹/₄ կոպ. Յունիսի 1 ին 10,576 մանէթ, 39 ¹/₂ կոպ. Յուլիսի 1 ին, 11,724 մանէթ, 61 ¹/₄ կոպ. Օգոստոսի 10 ին, 8,943 մանէթ, 22 ¹/₄ կոպ. Սեպտեմբերի 1 ին 7,616 մանէթ, 31 ¹/₄ կոպ. Հոկտեմբերի 1 ին, 10,542 մանէթ, 79 ¹/₂ կոպ. Այս գումարների մէջ ամփոփվումեն նոյնպէս մի քանի հարիւր մանէթների մուրհակներ:

Հոգաբարձուքը, ինչպէս վերևում ասուեցաւ, չտալով ինձ ոչինչ պատուէր շահեցնելու արծաթը, ես այնու ամենայնիւ իբրև գանձապահ, յարգելով իմ պաշտօնակից հոգաբարձուների վստահութիւնը առիս, մտածումի միշտ օգտակար լինել ուսումնարանին իմ գանձապահութեան պաշտօնի մէջ, թէև դա ծանր էր ինձ, շատ զբաղուածիս իմ յատուկ վաճառական հաշիւներով: Ահա, սոյն խորհրդով, որչափ բերեց իմ կարողութիւնը, շահեցուցի գանձարանի արծաթը մասնաւոր անձանց տալով և յանձն առնելով ամենայն կորուստ, որ կարող էր պատահել արծաթի փոխատուութեան միջոցներում, միանգամայն և հոգաբարձութիւն գործելով, որ հարկաւորութեան ժամանակին անյապաղ արծաթ հասանէր գանձատանը: Եւ այսպէս, իմ տասնեւօթնամեայ գործակատարութեան մէջ, վերոյիշեալ շարժական արծաթաղլուխքը աճեցուցել եմ տոկոսիքով, ուստի յառաջացած են հազար և վաթսուն ութ մանէթ արծաթ. որ և այժմուս պատրաստի դրած են գանձարանում և պիտի զրուին արդիւնքի հաշուեմատեանի մէջ:

Մեծապատիւ պարոնայք. այս հրապարակիս մէջ տալով ձեզ իմ գանձապահութեան համարը, երբէք կամք չունիմ ես գովասանութիւն առնուլ ձեզանից, այլ

միայն փարատել որ և իցէ երկմտութիւնք հասարակաց արծաթի շահեցուցման մասին: Ես թողումեմ ձեր արդար դատաստանին, որոշել թէ որ չափով յաջողուած է ինձ օգուտ բերել այն ուսումնարանին, որոյ հոգաբարձու լինել պատիւ եմ համարում ինձ:

ԳԱՆՁԱՊԱՀ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՁԻԹԱԽԵԱՆՑ·

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՃԱՌԵՐ·

1.

Թէ ի՛նչ զանազանութիւն կայ բոյսերի և շնչաւորների մէջ·

Ես մտադիր եմ խօսել մեր հայկական ընթերցողի հետ շնչաւորների և բոյսերի միատեսակ և զանազան յատկութիւնների վերայ: Եթէ մեք զիտութեան քննութիւնքը մի կողմ դնենք և սովորական աչքով հայենք այդ երկու թագաւորութիւնների վերայ, այնուհետև, ի հարկէ, ոչ թէ գտանելու չէինք միատեսակ յատկութիւնք բոյսերի և շնչաւորների մէջ, այլ մեզ հանդիպելու էին շատ մեծ զանազանութիւնք դոցա մէջ: Եւ արդարև, մի՞թէ կարելի է խնձորենու և կովի մէջ գտանել միատեսակութիւն: Այդ երկու էակները այնպէս տարբեր են միմեանցից և այնպէս հեռի իրեարից, ինչպէս երկինքը երկրից: Դոցա մէջ, ինչպէս ասում է Հայը, տարբեր կան: Մի և նոյն տարբերութիւնը կը տեսանենք, եթէ դոցա նման ուրիշ օրինակներ առնունք: Բայց այդ տարբեր նշանները կամ յատկութիւնքը չեն պահպանվում բոլոր բոյսերի և շնչաւորների մէջ: Այս մտածութիւնը հասկանալու համար, ես կամէի խնդրել ընթերցողից, որ նա երևակայէ իւր մտքում, որպէս թէ բոլոր շընչաւորքը այնպէս էին դասակարգուած, որ շնչաւորների շարքի մի ծայրում գտանվումէին կատարելագոյն, կամ, որպէս ասումեն, վերնագոյն շնչաւորները, իսկ միւս ծայրում ստորնագոյն շնչաւորքը: Երևակայենք մեր մտքում, թէ մի և նոյն կերպով դասակարգուած էին բոյսերը, որոց մի ծայրում կը լինէին կատարելագոյնքը, իսկ միւս ծայրում անկատարելագոյնքը: Այնուհետև, ասումեմ ես, այն վերոյիշեալ զանազանութիւնը, որ մեք նկատած էինք խնձորենու և կովի մէջ, ոչ թէ տեսանելու չէինք պտորին շնչաւորների և բոյսերի մէջ, այլև մեծ նմանութիւն գտանելու էինք այդ ստորինների մէջ: Այդ նմանութիւնը կը հասանի մինչև այն աստիճան, որ նոյն ինքն գիտնականը դժուարանալու էր որոշել իսկոյն, արդեօք իւր տեսածը շնչաւո՞ր է, թէ բուսական:

Գիտութիւնքը, որպէս յայտնի է, չկազմուեցան և չկարգաւորուեցան իսկոյն և յանկարծ, այլ երկար միջոցներով, առ փոքր փոքր ժողովելով իրողութիւնք և

ճշմարտութիւնք, իսկ գիտնականքը տասնաւոր և հարիւրաւոր տարիներ աշխատելուց յետոյ, համակարդեցին այդ իրողութիւնքը և ճշմարտութիւնքը այնպէս, որ մի ճշմարտութիւն հետևեցուցանելով միւսից, ապացուցանումէին որ և իցէ առարկայի իսկական յատկութիւնքը և երևոյթները, որով վերջապէս հաստատուեցաւ այս կամ այն գիտութիւնը: Որչափ խնդիրը հայումէր դէպ ի այն նիւթը, որոյ վերայ մեք խօսումենք, սկզբումը աւելի հաճելի էր բնագէտներին որոնել շնչական և բուսական արարածների մէջ այնպիսի նշաններ և յատկութիւններ, որով կարելի կը լինէր զանազանել գնոսա միմեանցից կամ թէ նմանակցել միմեանց: Թէպէտ և այն զանազանող յատկութիւնները և նշանները այժմեան գիտութեան դատաստանի առաջև կշիռ չունին, այսու ամենայնիւ այդ տեսակ ուղղութիւնը երկար ժամանակ տիրումէր փնցած օրերի գիտնականների հասկացողութեան մէջ: Կարծումենք, թէ ոչ սակաւ ուշադրութեան արժանի կը լինէր, եթէ կարդաւ մասնաւորէինք այս տեղ քանի մի տեղեկութիւնք առաջին օրերի գիտնականների կարծիքի մասին:

Առաջին ժամանակներում կամենումէին շնչաւորները զանազանել բոյսերից, պատճառ բերելով թէ շնչաւորքը ունին զգացողութիւն և պլպտ շարժողութիւն, իսկ բոյսերին պակաս են այդ յատկութիւնքը: Այդ ճշմարիտ է միայն, եթէ միտ դնենք վերին կարգի շնչաւորներին և բուսականներին. բայց այդ իրողութիւնը թոյլ և անզօր է գիտնականի առաջև, երբ նա զործ ունի ստորին կարգի զործարանաւոր (օրգանական) շնչաւորների հետ: Սովորաբար, շնչաւորների զգացողութիւնը այն իրողութեան մէջ է ամփոփվում, որ նոքա իւրեանց շրջակայ արտաքին առարկաներից ընդունելով տպաւորութիւնք, զիտակից են դոցա և հետևաբար զործումեն զանազան շարժողութիւնք: Առհասարակ, մեք սովոր ենք շնչաւորների զգացողութիւնքը դատել միայն, միտ դնելով նոցա կատարած շարժողութիւններին, և այս պատճառով մեծ ուշադրութեան արժանի է այն խնդիրը, արդեօք գիտնականը կարող էր միշտ շնչաւորքը զանազանել բուսականներից, հիմք առած իւր համար առաջինների շարժողութիւնը միայն: Որպէս յայտնի է, կէս մի կան շնչաւորներ և ըստ բաւականին բազմաթիւ, որ զուրկ են կարողութենից տեղափոխուելու, որ և կարծես թէ, բուսեռած լինին մի տեղում, և. շարժումեն միայն իւրեանց մարմնի քանի մի մասները. երբեմն դժուարին է լինում որոշել, արդեօք այդ շարժողութիւնքը յառաջացած էին շնչաւորի ազատ կամքից, թէ նման էին բուսականների շարժողութեանը: Շնչաւորների կարգից, այս տեղ իբրև օրինակ, կարող են յառաջ բերուիլ Պոլիպոդները (les polypes) և Certularium geniculata (խողովակեայ) պոլիպոդը, որ ոչ թէ միայն չեն կարող շարժուիլ, այլև արտաքուստ շատ նման են բուսականին: Եւ կէս մի հանդիպումեն մեղ բոյսեր, որ հասանելով իւրեանց աճման որոշեալ աստիճանին, տեղափոխվումեն մի տեղից դէպ ի միւսը: Իբրև օրինակ կարող է յառաջ բերուիլ սունկերի (Myxomycetes Vallr [խժային սունկեր] այն կարգը, որոց Դեբարի անուն գիտնականը ասում է Mycetozoa —սունկանման շնչաւորք: Մինչև այսօր գիտնականքը վրձառողապէս որոշած չեն, արդեօք դոքա բոյսե՞ր էին, թէ շնչաւորք:

Այս յատկութիւնները չհամոզելով գիտնականների միտքը, նոքա սկսան որոնել այլ նշաններ, որով կարելի կը լինէր որոշել շնչաւորքը բուսականներից: Մինը այդ նշաններից կարծեցին այն, որ այդ երկու զործարանաւոր մարմինները ստանումեն սնունդը զանազան կերպով: Ինչպէս յայտնի է, բուսականք ստանումեն իւրեանց սնունդը, հեղանուտ նիւթեր ներս ծծելով (Էնդոսմոս) իւրեանց կեղևի միջնորդութեամբ, մինչ շնչաւորները ընդունումեն իւրեանց հեղեղուկ և հաստատ կերակուրները մի կամ երկու բացուածների օգնականութեամբ, միայն թէ այս բանս լինում է վերին կարգի շնչաւորների մէջ. իսկ ստորին կարգից կան շնչաւորներ, որ բուսականների նման, իւրեանց ամբողջ մարմնով ներս են ծծում իւրեանց սնունդը:

Սորանով ևս չբաւականանալով գիտնականքը, դիմեցին դէպ ի մի ուրիշ յայտարար նշան, որով կարծումէին որոշել շնչաւորքը բուսականներից: Նոցա կարծիքը այն էր, թէ այդ երկու զործարանաւոր մարմինները տարբեր կերպով են բազմանում: Նոր անհատները շնչաւորների մէջ, համարեա՝ թէ միշտ ածումեն սերմով բեղմնաւորուած ձուերից. բայց մի և նոյնը հանդիպումէ և բուսականների մէջ, որ բազմանումեն միատեսակ կերպով: Սորա հակառակ, կան այնպիսի շնչաւորներ, որ բազմանումեն բաժանմամբ և բողբոջներով, բոյսերի նման:

Յետոյ սկսան գիտնականքը նոյն խորհրդով հետազօտել շնչաւորների և բուսականների բաղադրական մասունքը, բայց այս տեղ ևս անյաջող դտանուեցաւ նոցա փորձը: Առհասարակ, բուսականքը կազմվումեն միայն անբորակածին նիւթերից, իսկ շնչաւորքը բորակածին նիւթերից. բայց մի քանի շնչաւորների մէջ դտան անբորակածին նիւթ (խլորոֆիլ) և սորա հակառակ, քանի մի բոյսեր (սունկեր) ունին իւրեանց մէջ բորակածին նիւթեր:

Բաւական եմ համարում այս բերած օրինակներս, որով պարզվում է խնդիրը, թէ ստորին կարգի շնչաւորքը և բուսականքը ոչ թէ միայն դժուարին է որոշել միմեանցից, այլև նոցա մէջ կայ մեծ նմանութիւն, և թէ, որպէս ցերեկի լուսին խկոյն չէ հետևում գիշերային մութը, այլ լինում է միջանկեալ աղօտալոյս, երկուսը միմեանցից բաժանող երեկոյ, նոյնպէս ևս շնչաւոր և բուսական թագաւորութիւնների մէջ կան այնպիսի գործարանաւոր մարմիններ, որ կազմումեն միջանկեալ սանդուղքի աստիճանքը:

Զոֆոբիա Գրիգորեան, ուսուցիչ
Քնարարարամ Գիմնազիայեան:

Պատմութիւն Պեդագոգիկայի,* որպէս դա կերպարանագործուած է համաշխարհական պատմութեան մէջ և ներքին, օրինապատշաճ կերպով շաղկապուած է ազգերի կրթութեան հետ:

Հանած

Գերմանական մատենագրի, Կարոլոս Շմիդթի գործից

«Die Geschichte der Paedagogik in welthistorischer Entwickelung und in organischem Zusammenhange mit dem Culturleben der Uölker. Cöthen 1860.»

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ.

Անցք և պատմագրութիւն. Պատմութիւն Պեդագոգիկայի և նորա արժանաւորութիւնը:

Աստուծոյ գոյութիւնը կենդանի է տիեզերքի մէջ, և մարդկութեան մէջ յայտնվում է նա իբրև բանականութիւն: Մարդկութեան խորհուրդն է զարգացուցանել կեանքի մէջ այդ բանականութիւնը, իրագործել Աստուածը աշխարհի մէջ, յանդիման կացուցանել աստուածանմանութիւնը, ճշմարտութեան և սիրոյ գաղափարները: Մարդկութեան խորհուրդն է նոյն և աշխարհի մէջ անցած գործերի խորհուրդը: Համաշխարհական անցքերի խորհուրդն է, մարդկութեան մէջ դրած բանականութիւնը իրագործել և առաջնորդել մարդերին դէպ ի Աստուած, նոցա վախճանական սկզբնապատճառը:

Զարգացումն է ասվում այն օրէնքը, որ իբրև ճանապարհ հասուցանում է այդ նպատակին — դա է օրէնքը համաշխարհական պատմութեան: Զարգացումն է յառաջխաղացութիւն պարզից դէպ ի բաղադրեալը. — մարդկութեան զարգացումը է յառաջխաղացութիւն անգիտակցութենից դէպ ի գիտակցութիւն, բնական հարկաւորութենից դէպ ի հոգեղէն ազատութիւն: Ինչպէս բնութիւնը անօրգանականերից (անկենդան արարածներից) վեր ի վեր է ձգտում դէպ ի լոյս և բուսական ու շնչական արարածներից բարձրանում դէպ ի մարդս, այսպէս և մարդկութիւնը և նորա հետ միասին համաշխարհական կեանքը դուրս է գալիս բնական և խմբական գոյութեան նախեղակ միութիւնից, և անցանելով բնութեան և խմբականութեան

*) Պեդագոգիկա յունական բառ է, որ կամի ասել արուեստ մանկածութեան, արուեստ դաստիարակութեան:

մէջ ծագած երկպառակութենից, գիտակցապէս հաշտեցնում հարկաւորութիւնը ազատութեան հետ: Ուր կայ զարգացումն, այն տեղ կայ և յառաջադիմութիւն: Յառաջադիմութիւնը համաշխարհական կեանքի մէջ, է Աստուծոյ օրէ օր աւելի տեսանելի, աւելի լսելի և աւելի զգալի մարմնառութիւնը մարդկութեան մէջ: Կրկնումն և յետախաղացութիւն չկայ: Այո՛, մի անհատ ժողովուրդ ըստ երևութին դէպ ի յետ է խաղում. վասն զի, եթէ մեք շրջանակով յառաջ ենք երթում, այնքան և աւելի մօտենումենք այն կէտին, ուստի դուրս ենք եկած: Բայց այս յետախաղացութիւնը մի ժողովրդի է նոյն միջոցին մի յառաջխաղացութիւն մարդկութեան, ըստ որում նա յառաջ է դիմում նոր ազգային շրջանների մէջ, որ սկզբում, համեմատելով փոքր ինչ յառաջ կատարած և անցած շրջանների հետ, երևումն աւելի տարբերական և աւելի անկատար, բայց յառաջխաղացութեամբ բարձրանումն դէպ ի աւելի վերին աստիճան զարգացման: Եւ [illegible] երկիրը երբէք այլևս յետ չէ դառնում դէպ ի նոյն կացութեան տեղը, [illegible] տարեկան շրջանառութենից յետոյ, նոյնպէս և մարդկութիւնը երբէք դարձեալ [illegible] դէպ ի այն կէտը, որ արդէն եղած էր այն տեղ միանգամ, և երբէք կրկնում չէ դարձեալ մի ժողովրդի մէջ այն բանը, որ մի այլ ժողովրդի մէջ արդէն գործ էր դրած և մաշած էր:

Համաշխարհական պատմութիւնը է մարդկութեան զարգացման պատմութիւնը: Այս զարգացման եղանակը նոյն է, որպէս մասնաւոր մարդու խմբականութեան զարգացման եղանակը. այս տեղ ազդում մի և նոյն օրէնքը, որովհետև մի և նոյն աստուածեղէն միտքը ներգործում մասնաւորի, ժողովրդի և մարդկութեան մէջ: Մարդկութիւնը, ինչպէս որ մասնաւոր մարդը, ունի իւր հասակները և զարգանում դոցա մէջ: — Մասնաւոր մարդը, իբրև երեխայ, չէ՛ արդէն մի բանական էակ, այլ նա պիտի դառնայ բանական: Երեխան չէ տակաւին իշխան ինքն իւր վերայ, այլ նորա իշխողն է արտաքին աշխարհը, Երեխան դեռ ևս չէ պատկանում ինքն իւրեան, այլ իւր շրջակայքին: Անոնցմանց մանուկը մարդկութեան մէջ: — Բայց երեխան յառաջ գնալով իւր զարգացման մէջ, ձեռք է բերում ազատութիւնը արտաքին աշխարհից և սրտի վկայութեամբ խոստովանելով այդ ազատութիւնը, վեր է բարձրանում իւր ոտքի վերայ, բայց չկամի տակաւին խոստովանել այն թշնամին, որում յաղթած էր: Մարդս իբրև երիտասարդ չափում աշխարհը իւր գաղափարական պատկերների չափով, և իրական աշխարհը, որ հակառակ է այդ գաղափարական պատկերներին, համարում ոչինչ և գաղափարից զուրկ: Ամեն բանի մէջ նա տեսանում իւր անձը, և ուր տեսանում մի օտար ինչ, այդ բանը աշխատում յաղթահարել և նորա վերայ դնել իւր կեանքի կնիքը: Հնութեան ականաւոր ազգերը լցուցանումեն այս երիտասարդությունը հոսանքը համաշխարհական պատմությունը: — Բայց երբ որ երիտասարդը իւր ինքնապաշտ անձնաւորութեան մէջ վազում իրական աշխարհի վերայ և սոքանից բաց է խեթկվում, այնուհետև վերահասութեամբ սառում իւր մէջ, թէ

նա այն ժամանակ միայն կարող էր ինքն իւր հետ դաշնակաւորուիլ, երբ կը դաշնակաւորէր իւր անձը արտաքին աշխարհի հետ. այր մարդը, որ դաշնակաւոր փոխադարձութեամբ յարակցվումէ արտաքին աշխարհի հետ, է Քրիստոնեան համաշխարհական պատմութեան մէջ։— Մանաւորի պատմութիւնը պատկերացնումէ և կրկնումէ իւր մէջ մարդկութեան պատմութիւնը, որպէս մարդկութեան պատմութիւնը է մի հայելի տիեզերական պատմութեան, իսկ տիեզերքի պատմութիւնը նմանութիւն աստուածեղէն կեանքի. ամենայն պատմութիւն, թէ հասարակաց մարդկութեան և թէ մասնաւոր մարդու, թէ աստղերով զարդարուն երկնքի և թէ երկրային կազմուածքի, է զարգացումն աստուածային կեանքի։

Մարդկութիւնը կարող չէ երկրաւոր պայմանների տակից դուրս խլուիլ, և ոչ իսկ համաշխարհական պատմութիւնը արարչագործութեան ընթացքից. նա մի օղ է սորա շղթայաշարի մէջ։ Համաշխարհական անցքերը կարող չեն այլ կերպով շրջան առնուլ քան թէ երկիրը. այս օրէնքի ներքոյ ստորադրած է զնոսա Աստուած։ Ինչպէս որ ձևաւորուած է երկիրը, նոյնպէս էս ձևաւորվումէ մարդկութիւնը։ Այս պատճառով արևադարձեան գօտիու բնակիչքը մարմնապաշտ են, ցուրտ գօտիու մարդիկը շատակեր, բայց բարեխառն գօտիու մարդիկը մտածող։ Կլիմայի, հողի և սոցա պէս պայմանների զանազանութեամբ որոշվումեն էս առանձին կարգեր մարդկութեան, ցեղեր և ազգեր։ Ուրեմն ազգերը են սիստեմայք, բաղմաւոր անհատներ մարդկութեան մեծ ամբողջի մէջ—անհատներ, որ այն աշխարհից, որում պատկանումեն նոքա, և այն զարգացման աստիճանից մարդկութեան, որոյ վերայ երևումեն, կախ են յատկապէս. բայց նոքա իւրեանց իսկական էութիւնը չեն ստանում արտաքուստ (դուրսից), որովհետև արարչագործութեան սկզբից նոցա մէջ ներշնչած հոգին միայն կարող է բնութեան ազդեցութեան ներքոյ և անցքերի ընթացքին համեմատ ստանալ իւր առանձին ձևը և կերպարանքը, որպէս և անհատի հոգու ընդարձակ կազմուածքի մէջ տնկած բնաւորութիւնը կարող է դաստիարակութեամբ, շրջակայքի ազդեցութեամբ և այլ պայմաններով կերպաւորուիլ և հասանել կատարելութեան, բայց ոչ արուիլ։

Որովհետև ամենայն ազգ մարդկութեան մէջ մի յատուկ անհատ է, այս պատճառով ունի նա իւր յատուկ և սեփական կազմուածը, իւր առանձին կնիքը—դոյացած իւր աստուածատուր շնորհից, իւր բնաւորութենից, որպէս և այն կլիմատական պայմաններից, որոց մէջ կենումէ նա, և ազդեցութեամբ այն օտար ազգերի, որք դրացի են նմա, որոց հետ և ունի հաղորդակցութիւնք։ Այս իւր կազմուածը, որ նա իւր բարքի ու վարքի մէջ, իւր լեզուով ու գրով, իւր գիտական և ճարտարապետական պտղաբերութեամբք, իւր կրօնական հայեացքով ու արարողութեամբք և իւր քաղաքական ձևակերպութեամբք յայտնի է կացուցանում—այս իւր կազմուածը զարգացնումէ նա իւր կեանքի միջոցներում, որ ձևաւորվումեն այնպէս, ինչպէս մաս-

նաւոր մարդու կեանքի հասակները, և այսպէս, ամենայն ազգ ապրումէ իւր պպեյոլեան հասակը, որոյ մէջ նա տակաւին ինքն իւրեան մի առասպել է, և այս պատճառով, առասպելների մէջ բանաստեղծումէ յառաջուց իւր կեանքը. ապա տօնախմբումէ էրիպտասարդոլեան հասակ, որոյ մէջ իւր վերածաղկող հոգու զօրութեամբ անօրինակ քաջագործութիւնք առնելով, դիմումէ դէպ ի տիրապետութիւնք. յետոյ, իբրև շաքհաս այր, ցուցանումէ իւր մտածութեան, զգացողութեան և կամքի մէջ հասունութիւն, հանդիստ և մտախոհութիւն. վերջումը, իբրև ծերացած ազգ, ուռումէ իւր արած վաստակից և ոսկրանալով կործանվումէ, եթէ ազգային հոգին չէ այնչափ մեծաքանքար և այնչափ ազդողապէս գործունեայ, որ նա մի պատմական դաղափար գործ դնելուց և տպառելուց յետոյ, վեր կանգնուր մի այլ դաղափար և մշակէր զդա պատշաճապէս, որպէս զի նորա հասակի աստիճանքը լինելու էին միայն պատմական կեանքի տարեկան եղանակքը, որոց փոփոխութեան մէջ մանկանումէր նա։

Ազգի կազմակերպութիւնը ունի իւր իսկական արմատը իւր անդամների, անհատների մէջ։ Անհատը է մի սկզբնական, Աստուծուց կարգած միակ։ Այս միակը սահմանաւորվումէ իւր ժամանակից և այն ազգից, որոյ անդամ է ինքը, այնպէս որ անհատը է ընդհանուր հետևութիւնը իւր ներքին սեփական զօրութեան և այն բոլոր զօրութիւնների որ շրջապատումեն զնա և ներգործումեն նորա վերայ։ Բայց մի ազգի անհատների մէջ ոմանք միայն են նորա դաղափարական (վերին և ականաւոր) էներգիագործոլեանքը, որ իւրեանց առանձնաւորութեան մէջ պատկերացնումեն բովանդակ ազգը։ Այդպիսի են, զոր օրինակ Լութերը, Գեոթէն, Հումբոլդը, հարազատ փոխանորդքը դերմանականութեան մի յատկացած ժամանակում, որպէս Վոլտերը փոխանորդ է Ֆրանսիականութեան. և այդպիսի միաղլուխ մարդիկ, որ իւրեանց առանձնաւորութեան մէջ պատկերացնումեն իւրեանց ազգի սեռային բնաւորութիւնը, այս և այն ժամանակի միջոցում, են սիւները և իրագործողքը ազգային զարգացման, սիւները յառաջադիմութեան։ Նոցա մէջ բովանդակվումէ իւրեանց ժամանակի կեանքը ամենավերին գիտակցութեամբ մտքի և ամենավերին ազդողականութեամբ կամքի։

Անհատների և ազգերի միջնորդութեամբ զարգանումէ մարդկութիւնը։ Անհատները և ազգերը են այն անդամքը, որոյ ձեռնտուութեամբ մարդկութիւնը ժամանակի ընթացքի մէջ հանդիսացնումէ աստուածեղէն կեանքը։ Այդ անդամքը, միտ դնելով դոցա քանքարների մեծութեանը և նոցա առանձին զարգացման նըպատակին, երկարատև կամ կարճատև միջոցից յետոյ բաց է ձգում մարդկութիւնը, թէպէտ ընդունելով զդոսա իւր պանթէոնական տաճարի մէջ, բայց, ստուգութեամբ, կամէր նա միայն նորանոր սիւներ ճարել իւր դաղափարների համար և դոցանով օրէ օր աւելի մօտենալ իւր մշանջենաւոր նպատակին—աստուածեղէն կատարելութեան։

Պատմագրութեան պաշտօնն է նկարագրել այս զարգացումը մարդկութեան,

միտ դնելով այն զանազան աստիճաններին, որոց հասած է դա ազգերի և անհատների գործակցութեամբ: Ուրեմն պատմութիւնը պիտի լինի կրկնողութիւն, մի կենդանի վերստին արտադրութիւն այն անցքերի, որ անցած են: Ուրեմն նա ունի ցոյց տալու, թէ ինչպէս մարդկութեան գործողութիւնը օրօրոցի ու գերեզմանի միջով օրէ օր վեր է բարձրացած և վեր է բարձրանում դէպի մի գերագոյն կատարելութիւն. պատմութիւնը ունի նոյնպէս մերկայնելու մեր աչքի առաջև այն պատճառները, որ յառաջացուցել են ազգերի վերածաղկութիւնը և կործանումը, և այդպէս համաշխարհական պատմութիւնը պատկերացնել մեր առաջև իբրև համաշխարհական դատաստան, այլև իւր յատուկ դատաստան: Համաշխարհական պատմութիւնը է մարդկութեան վարքագրութիւն, և պատմագիրը է մարդուս վարքագիրք: Այնու ամենայնիւ մարդկային իմացականութիւնը, թէև յետահայեաց մարգարէ, մինչև օրս կարողացել չէ լուսափայլ կացուցանել զարգացման բոլոր պտոյտ պտոյտ շաւիղները, որոց վերայ մարդկութիւնը մինչև այսօր յառաջ է գնացած դէպի վեր խաղացմամբ: Եւ այս պատճառով, պատմագրութիւնը չէ մի այլ բան, քան թէ, ինչպէս ասում է Արիստոտելը, պատմութիւն գնած իրողութիւնների, որ նա, առանց դուրսից ներս բերած կանոնների, կապակցում է միմեանց հետ, միտ դնելով մարդկութեան ընթացքին, որպէս զի դորա մէջ և դորանով ցոյց տայ համաշխարհական զարգացումը:

Պատմութեան օրէնքը են առհասարակ և օրէնքը դաստիարակութեան արուեստի մէջ: Դաստիարակութեան արուեստը է այն հմտութիւնը, որ ուսմամբ և դաստիարակութեամբ, այսինքն, գիտակից ազդեցութեամբ մանուկ մարդու մարմնաւոր և հոգեղէն զարգացման վերայ, նորա մէջ տնկած գաղափարքը ճշմարտութեան, ազատութեան և սիրոյ, նորա աստուածանմանութիւնը, իւր աստուածապարգև անձնաւորութեանը համեմատ, մինչև այն աստիճան զարգացնել, որ նա կարողանար իւր յատուկ աշխատութեամբ և ջանքով հասանել իւր մարդկեղէն կոչմանը: Դաստիարակութեան լցուցանելի գործն է փոքրիկ աշխարհը (մարդս) հասուցանել նոյն նպատակին, ուր դիմում է մարդկութեան մեծ աշխարհը:

Դաստիարակութեան արուեստը զարգացնելով անհատ մարդը, զարգացնում է նոյնպէս և ժողովուրդը, որում պատկանում է անհատը, որովհետև ազգը կարող է միայն տեղ զրաւել և զրաւում է այն զարգացման աստիճանի վերայ, որոյ վերայ կանգնած են նորա անդամքը, անհատ մարդիկը: Եւ ազգի զարգացման հետ միասին, դաստիարակութեան արուեստը զարգացնում է մարդկութիւնը, որոյ գործակատար անդամքը են անհատ մարդիկ և անհատ ազգեր:

Միւս մասամբ, անհատ մարդու զարգացումը կախ է այն ազգի զարգացմանից, որոյ մէջ նա ապրում է, որպէս և մարդկային զարգացման աստիճանից, որոյ վերայ կանգնած է ազգը: Եւ որ չափով մարդկութեան կամ ազգի զարգացման աստիճանը

աւելի բարձր կամ ստոր է, նոյն չափով և ըմբռնողութիւնը և նկատողութիւնը անհատի, միանգամայն և նորա դաստիարակութիւնը կը լինի աւելի կատարեալ կամ անկատար: Գիտնական և ճարտարապետական, կրօնական և քաղաքական կեանքը մի ազգի, և աստիճանը, որոյ վերայ դրած են նորա անդամքը, սահմանում է նոյնպէս նորա դաստիարակութեան գործի բարձրութեան աստիճանը: Այս պատճառով դաստիարակութեան արուեստը և նորա զարգացումը շատ մօտ կապակից է ազգի կրթութեան հետ առհասարակ: Որովհետև, ինչ որ մարդս է, ինչ որ նա մտածում է, զգում է և կամի, նոյնը աշխատում է նա իւրեանից դուրս իրագործել: Մարդս չկամի տալ իւր ընկերին ոչինչ, բայց միայն ինչ որ կացուցանում է նորա յատուկ կեանքը և գոյութիւնը, և նա կարող չէ իւր ընկերին մի այլ բան տալ, եթէ ոչ, այն, ինչ որ ինքն է և ունի: Այսպէս ևս, նա կարող չէ մանուկ սերունդը այլ կանոններով և դէպի այլ նպատակ տանել, եթէ ոչ, այնպիսի կանոններով և դէպի այնպիսի նպատակ, որ ինքը համարում է ամենավերինը: Դաստիարակութիւնը յառաջ է քայլում ազգերի կրթութեան հետ միասին, և ազգերը դարձեալ իւրեանց դաստիարակութեան մէջ և նորանով ցուցանում են, թէ մինչև որ աստիճան կրթութեան յառաջ էին գնացած. մի ազգի կեանք պատկերանում է նորա դաստիարակութեան կանոնների մէջ. դաստիարակութեան գաղափարները են նորա կեանքի հայելին: Մի ազգ, ինչպէս դաստիարակիչը, կամի իւր դաստիարակութեան մէջ իւր դաստիարակելի անդամքը շինել այնպիսի, որպիսի դարձած է ինքը, ուրեմն նա սորանով կրկնում է իւր յատուկ զարգացումը իւր զաւակների դաստիարակութեան մէջ. դոքա դաստիարակութեամբ ստանում են անմիջաբար այն, որում ազգը իւր պատմական գործունէութեամբ և զարգացմամբ հասած է: Դաստիարակութեամբ հնարաւորում է ազգը իւր տևողականութիւնը և յառաջադիմութիւնը:

Եթէ արժան է, որ Պեդագոգիկայի պատմութիւնը մարդկային սեռի զարգացումը աստուածանմանութեան գաղափարին համեմատ, և այս զարգացման վերայ հիմնաւորուած դաստիարակութիւնը առաւել հին ստոյգ ժամանակներից մինչև այսօր նկարագրէր, ուրեմն և ցոյց տար թէ ինչպէս այդ զարգացումը և դաստիարակութիւնը որոշ որոշ ազգերի մէջ գործնականաբար լցուցած և տեսականաբար ըմբռնուած է, այլև անհատ մարդերի կողմից խօսքով ու գործով յառաջ տարուած — ապա Պեդագոգիկայի պատմութիւնը պիտի նկատուի բովանդակ մարդկութեան պատմութեան հետ միասին: Պեդագոգիկայի պատմութիւնը, մարդկութեան պատմագրութեան հետ միասին, յառաջ է երթում տղայական և երիտասարդական հասակի միջով դէպի այրական հասակը, և առհասարակ հիմնվում այդ պատմութեան վերայ իրրև իւր արմատի վերայ:

Պեդագոգիկայի պատմութեան էական պաշտօնն է հետազօտել յառաջադիմութիւնը մարդկութեան գաղափարի հասկացողութեան մէջ: Ընդհանուր պատ-

մութեան պէս, որ ցուցանումէ, թէ իւրաքանչիւր աւելի յառաջխաղացութիւն է մի կրիտիկական քննութիւն մարդկութեան անցած գնացած կենսական ասպարէզի վերայ, որպէս զի ամեն մի նոր դարագլուխ դուրս է գալիս հին ժամանակի մեկուսի տեսութենից և այդպէս մարդկութիւնը օրէ օր մօտենումէ իւր աստուածեղէն նպատակին—ընդհանուր պատմութեան պէս, պարտ է Պեդագոգիկայի պատմութիւնը ցոյց տալ դաստիարակութեան արուեստի օրգանական կերպագործութիւնը, այլև ապացուցանել և բացատրել այդ հմտութեան զարգացման յառաջաբայլ ընթացքը ժամանակների հոսանքի մէջ: Ուրեմն Պեդագոգիկայի պատմութիւնը ունի յանդիման կացուցանել, թէ այս կամ այն ժամանակում ինչպէս էր եղած դաստիարակութիւնը իւր յայտնութեամբ, այլև, միանգամայն, թէ ինչպէս պիտի լինէր դա մտածող մարդերի հոգու մէջ. ուրեմն, թէ ինչպէս ուսանումէին ազգերը, և ինչ ու որպէս ուսուցանումէին ականաւոր հանճարքը ազգերի մէջ: Նա ունի մի գործնական և տեսական մասն, որ շատ մօտ զուգաւորուած են միմեանց հետ փոխադարձ ներգործութեամբ, այնպէս որ, եթէ զարգացած թէորիայն հետևումէ պրաքսիսին, այնու ամենայնիւ թէորիայն յառաջ է քան թէ պրաքսիսը, վասն զի ամենայն գործողութիւն ունի իւր հիմքը շատ կամ սակաւ մտքի գիտակցութեան վերայ:

Բայց, Պեդագոգիկայի պատմութիւնը ունի ոչ թէ միայն ցուցանել դաստիարակութեան արուեստի տեսական ու գործնական զարգացումը համաշխարհական պատմութեան ընթացքի մէջ, այլև պիտոյ է նմա նկարագրել այդ զարգացումը որոշ որոշ ազգերի մէջ: Այս պատճառով ունի նա պատմաբանելու դաստիարակութիւնը ազգի պլայոնական հոսանքի մէջ, ուր դաստիարակութիւնը սկսանումէ զերդասանի հօրից և է վարժութիւն նախնական բարք ու վարքի, ձևերի և արարողութիւնների, առանց աւելի վերին գիտակից դաղափարի լուսով առաջնորդուելու: Բայց առ փոքր փոքր, նկատողութեամբ և փորձով յառաջանումեն մի մի կանոններ, դաստիարակութեան հիմքեր, որ բերանացի աւանդութեամբ տարածվումեն: Սակայն մտքի գիտակցութեամբ դաստիարակութիւնը լցուցանվումէ այն տեղ միայն, ուր կայ մի կարգաւոր հասարակութիւն և մի արդէն սահմանադրուած քաղաքական ընկերութիւն—ազգի էրիթրոպրոնական հոսանքում: Այնուհետև դաստիարակութիւնը թողուած չէ անհատ մարդերի պատահական և կամայական հայեացքի կամքին: Ո՛չ. այլ մանաւանդ քաղաքական ընկերութիւնը հոգաբարձու է, որ մանուկ սերունդները դաստիարակուին և զարգանան այնպէս, ինչպէս ձեռնտու էր ժողովրդի և քաղաքական ընկերութեան տեսողութեանը և ածելութեանը, և դորանով յառաջանար մտածութեան և գործողութեան եղանակի միութիւն քաղաքական ընկերութեան անդամների մէջ: Այնուհետև օրէնսդիրքը կը կարգաւորեն և կը մաքրեն աւանդութեամբ և սովորութեամբ ազգի մէջ ամուր արմատացած կանոնքը դաստիասակութեան: Ցետոյ, ազգի պլայոնական հոսանքում, դուրս կը բղխի դաստիարակութիւնը և ուսումը պարզ

ու պայծառ, խորհրդին ու նպատակին քաջ վերահասու ձգտողութենից: Այս տեղ ահա, որպէս ազգի ծերությունն հասուցի մէջ, դուրս են երևումի փիլիսոփայք և մանկաձութեան վերայ մտածող մարդիկ, որ դաստիարակութիւնը տանեն հիմնեն ամուր և հաստատ սկզբունքի վերայ, միանգամայն և ընդայնն ազգին մի կատարեալ թէորիա դաստիարակութեան: Մի ազգի դաստիարակութիւն յառաջ է երթում պրաքսիսից դէպ ի թէորիան (գործնականից դէպ ի տեսականը), գործից դէպ ի խորհրդածութիւնը: Որչափ շատ ապրումէ մի ժողովուրդ, նոյնչափ ևս մտահայեաց է լինում. նոյնչափ ևս ուսումը, որ առաջին միջոցներում էր մի լոկ շարժառիթ դաստիարակութեան, հանդիսանումէ անձնիշխան և նոյնքան առաւել դաստիարակութիւնք դառնումէ միայն շարժառիթ ուսման:

Պեդագոգիկայի պատմամբերը կամի քննել դաստիարակութեան գործը մինչև այժմ աշխարհի հրապարակի մէջ յայտնի եղած ազգերի մէջ, միտ դնելով նորա գործնական և տեսական հայեացքին: Նա կամի քննածի ու զննածի մէջ ապացուցանել դաստիարակութեան դաղափարի յառաջխաղացութիւնը մարդկութեան մէջ, որպէս և ցոյց տալ թէ ինչպէս իւրաքանչիւր ազգի մէջ դաստիարակութեան գաղափարը ըմբռնուած է մտքի գիտակցութեամբ, ինչ վերնագոյն դաղափար կրթութեան ունեցած է ազգը, ինչպէս հասկացած է դա դաստիարակութեան էութիւնը և խորհուրդը, ինչ ճանապարհներով աշխատած է իրագործել իւր ամենավերին դաղափարը և որչափով ստուգապէս հասած է դմա: Այս իւր պաշտօնը կը լցուցանէ Պեդագոգիկայի պատմագիրը ազգագրաբար (էթնոգրաֆիկաբար), ուր ազգերը միմեանցից բաժան բաժան են, և այդպէս դաստիարակութիւնը ըստ մեծի մասին է յատուկ ազգային, զոր օրինակ Բրիտոնոնից յառաջ ժամանակներում: Սորա հակառակ, Բրիտոնական պեդագոգիկայի օրերում, վերջնոյգոգուենից յառաջ, պատմագրութիւնը գործ կը կատարէ ժամանակի կարգով (խրոնոլոգիկաբար), որովհետև այս ժամանակի ազգերը և քաղաքական ընկերութիւնքը, նմանապէս նոցա դաստիարակութիւնը դրած է մի և նոյն հիմքի վերայ, բայց վերջնոյգոգուենի նոր յոյգրգող ժամանակի մէջ, կ'աշխատի կցորդել միմեանց հետ ազգագրական և համաժամանակեայ քննութեան ոճը, վասն զի նոր ժամանակի ազգերը և քաղաքական ընկերութիւնքը, թէպէտ անձնիշխան են իւրաքանչիւրը իւր համար, բայց գտանուելով հաւասար հոգեղէն ազդեցութիւնների ներքոյ, առաջնորդվումեն համաձայն ուղղութեամբք կրթութեան ասպարէզի մէջ:

Պեդագոգիկայի պատմութեան ինչութենից հետևումէ նորա արժանաւորութիւնը: Իհարկէ, ով որ առհասարակ ամենևին անծանօթ է մի զիտական պեդագոգիկայի օգտաւէտութեանը, և իւրեան փառք ու պատիւ է համարում մեքենական վարժութիւնը այդ գործի մէջ, այնպիսին կարող չէ ևս խելամուտ լինել արժանաւորութեանը, որ ունի Պեդագոգիկայի պատմութեան ուսումնասիրութիւնը: Բայց ով որ հասկացած է, թէ գիտութիւնը միայն տալիս է պայծառ գիտակցութիւն

կեանքի և նորա յայտնութիւնների, և թէ պեդագոգիկայի գիտութիւնը է հիմքը մանկածութեան ճարտարապետների համար. այլև, ով որ գիտէ թէ առաջիկայն է միայն անցածի հետևանքը, ուրեմն նա միայն ճշմարտապէս գիտունն է առաջիկային, որ քննած էր նորա նախընթաց պայմանքը, նորա հիմքը. նա ևս կը հասկանայ, որ կարելի էր միայն ճշմարտապէս վերահասու լինել առաջիկայիս դաստիարակութեան խնդիրներին և գտանել միայն դոցա բանալին, եթէ մեք քննած էինք դաստիարակութեան ընթացքը մինչև այսօր, և լսած էինք նորա պատմութեան զգուշացուցիչ, խրատական և լուսաւորիչ ձայնը: Հազարաւոր տարիների փորձքին համեմատելով, ինչ է առօրեայ անհատ մարդու փորձը. նոյնքան, որքան տիեզերական բանականութեանը, որ համաշխարհական պատմութեան ընթացքի մէջ կերպադրուած է բոլոր ժամանակների իմաստնագոյն մարդերի բանականութենից, համեմատելով մի անհատի իմացականութիւն, որ փակվում է իւր մասնականութեան նեղ սահմանի մէջ: Պատմութիւնը մի աւազան է, որոյ մէջ մարդս լուացվում է դէպ ի հոգեղէն առողջութիւն, ուր և մանկանում է նորա կեանքը, վասն զի նա իւր ծերացուցիչ և մեռուցիչ անձնապաշտութիւնը այրելով զտում է տիեզերական բանականութեան քուրայի մէջ: Առաջիկայիս խառնակութեան միջից քանի մի ժամ օթևան խաղաղութեան որոնել անցած դնացած դարերի, որպէս մի հին հայրենական աշխարհի մէջ — ասում է Բրամէր, երևելի պատմաբանը Պեդագոգիկայի — այնքան ևս պտղաբեր է, ինչպէս ծերութեանը, մտաբերել իւր մանկութեան օրերը: Այս յետադարձ հայեացքը դէպ ի տղայութեան անմեղ աշխարհը, է ամենաքաղցր, մեծագին բանը, որ վիճակուած է մարդուն իբրև բաժին այս երկրաւոր կեանքումս: Բայց դաստիարակութեան արուեստի պատմութիւնը հասուցանում է մեզ այս մեծագին բանս երկտեսակ կերպով. դա է մի երկպատիկ անմեղութեան աշխարհի նկատողութիւն, մի ննջող տղայութեան օրերի մտաբերութիւն. դոցա հետ և դորանով լուացվում է մարդս անցած դնացած ժամանակի մանկացուցիչ աւազանի մէջ „: Եւ դա է նոյնպէս դպրոցը, որոյ մէջ կարող է նա ուսանել պեդագոգիկայի գիտութիւնը: Առաջիկայումս, նա միայն լինելու էր քաջ գիտուն թէ ինչ կամէր և կարող էր յառաջ տանել դաստիարակութեան գործի մէջ, — նա միայն, որ քննած և ուսած է թէ ինչ կարելի էր լցուցանել: Բայց այդ բանը ուսանում է և իմանում է նա, հարցաքննելով թէ ինչ արդիւնք գործուած էին դաստիարակութեան մէջ և ինչ խորհրդածութիւնք արուած: Նա միայն գիտէ դաստիարակութեան ինչութիւնը և արժէքը, որ հետաքննած է դաստիարակութեան գաղափարի զարգացումը դարերի ընթացքի մէջ: Ի վերջոյ, նա միայն կարող է այժմեան պեդագոգիկայի գիտութիւնը հասկանալ և իբրև արարիչ հեղինակ հանդիսանալ նորա մէջ, որ ընտանեցած է պեդագոգիկայի պատմութեանը: Պեդագոգիայի գիտութիւնը առանց պեդագոգիկայի պատմութեան է մի շինուած առանց հիմքի: Նոյն ինքն պեդագոգիկայի պատմութիւնը է ամենակատար և առաւել ակնյայտնի գիտական սիստեման պեդագոգիկայի:

2

ՊԵԴԱԳՈԳԻԿԱՅԻ ՊԱՏՄԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԱՐԱԳԼՈՒԽՔԸ ԵՒ ՊԵԴԱԳՈԳԵԱՆ ԱԶԳԵՐԸ:

Պեդագոգիկայի պատմութիւնը, որպէս և մարդկութեան պատմութիւնը, որոշումէ առ հասարակ մի և նոյն դարագլուխքը զարգացման:

Քրիստոս է մեջտեղը համաշխարհական պատմութեան, նմանապէս պեդագոգիական պատմութեան: Աստուածը դարձել է մարդ, որ մարդս դառնայ իբրև աստուած. սորա մէջ ունի մարդկութիւնը իւր միջնակէտը, դադարակէտը որպէս և ծանրակէտը: Աստուածամարդու մտածութիւնը է ամենավերին կատարելագործութեան գաղափարը, ամենամեծ իդէան, որ ըմբռնելու համար հալ ու մաշ եղաւ մարդկութիւնը, մինչև այդ իդէան, իբրև ստոյգ իրողութիւն յայտնուեցաւ աշխարհումս Յիսուսի Նազովրեցւոյ մէջ: Աստուածամարդու յայտնութեամբ կատարուեցաւ բոլոր, Քրիստոսից յառաջ անցած ժամանակների ձգտողութիւնը: Եւ այս աստուածմարդութեան իդէայի իրագործութիւնը անհատ մարդերի, ազգերի և մարդկութեան մէջ — ահա խնդիրը, որ ունին լուծանելու բոլոր ժամանակները զկնի Քրիստոսի: "Եղերուք կատարեալք, որպէս հայրն ձեր յերկինս կատարեալ է„. սորանով որոշուած է դաստիարակութեան ամենավերին նպատակը — մի և նոյն նպատակը, որ ունի իւր համար թէ մանուկ սերունդի և թէ մարդկութեան դաստիարակութիւնը:

Պեդագոգիական պատմութիւնը, նշանակում մարդկութեան պատմութիւնը յայտնում է Քրիստոսից յառաջ իւր պաղայական և երիտասարդական հասակը: Այս տեղ դուրս երևող ազգերի կեանքը է առաւելապէս բնական, նոցա կրթութիւնը բնածին. նոքա անհետանումեն բնութեան մեծ ամբողջի մէջ: Այլև, իւրեանց ինքնաստեղծ կազմուածների, քաղաքական կեանքի և միւս բաների մէջ նոքա դուրս չեն գալիս բնական կեանքի սահմանից: Ազգայնութիւնը է նոցա բնական սահմանը: Քրիստոսից յառաջ էին մեծ ազգեր, մեծ ազգեր մարդիկ, մեծ ազգեր դատաւորներ: Աստուածը, ազգի բնական սահմանից դուրս, վերջանում էր արդէն: Մարդս իւր անձը գիտէր միայն արժանաւոր, ըստ որում պահանում էր իւր ազգին: Եւ դաստիարակութիւնը աշխա-

տումը ամենից յառաջ զարթեցնել ազգայնութիւնը մանուկ սերունդների մէջ, ոնուցանել զնա, պահպանել և յարգի կացուցանել:

Քրիստոսով մարդեղութիւնը մտնում է իւր պարզեան հոսանքի մէջ: Այր մարդու մէջ կենտրոնանումն աւելի վերին մտածողական և զգայողական կարողութիւնը—բանականութիւնը, որ նկատում միութիւնը իրերի էութեան մէջ: Քրիստոսով ճանաչվում աշխարհի ստուածը և սա խոստովանվում իբրև հայր ամենայն մարդերի: Բայց և դորանով ամենայն մարդ զգում իւր մէջ ստուածութիւնը. նա բոլոր մարդերի մէջ տեսանում իւր եղբայրները, և իւր անձը զիտէ ազատ, Աստուծոյ մէջ: Որպէս ամենայն բան, նոյնպէս մտածելը և գործելը քրիստոնէական դաստիարակութեան մէջ վերաբերվում դէպ ի ստուածային կեանքը և դէպ ի հասարակաց մարդկութիւնը: Քրիստոնէական ճանաչողը է ճանաչողը մարդասիրական պարտականութիւնեան:

1.

ՔՐԻՍՏՈՍԻՑ ՅԱՌԱՋ.

Համաշխարհական դարը ազգային դաստիարակութեան.

Մարդկութեան պատմաբանօրէն զարգացմանից յառաջ երևումն անպարտաճան ի նիւով չուն պարտական ազգեր, որ առանց կրթութեան և քաղաքագործութեան ապրումն, և նոցա դաստիարակութիւնը զտանվում զգայականութեան աստիճանի վերայ և դորա մէջ ամփոփվում նոցա բոլոր կեանքը: Նիւթական դարմանատարութիւնը է այն միակ հոգաբարձութիւնը, որ լինում ծնողների կողմից: Միւս բաների մասին, մանուկը թողած է բնութեան զարգացուցիչ և արարիչ զօրութեան կամքին: Գուշակութիւնը, թէ կար մի իմացական դաստիարակութիւն, վճարվում այն բանով, որ է, անհատ անձը կացուցանել ազատ, անզգայ դէպ ի ցաւ, խորամանկ և զիմացկոտ, պատերազմի մէջ: Մարդկութեան կրթութեամբ և քաղաքագործութեամբ սկսանվում նոյնպէս դաստիարակութեան գործը:

Քրիստոսից յառաջ, պատմաբանական մարդու բնական կեանքը մնում ազգային կեցութեան սահմանի մէջ կապած ու կաշկանդած: Ամենայն դաստիարակութիւն Քրիստոսից յառաջ, է ազգային դաստիարակութիւն:

Ազգային դաստիարակութիւնը, որպէս մարմնական ու հոգեղէն կեանքը ազգերի, որոց պատկանում նա, ճիւղաւորվում այսպէս. նիւթական պարտականութեան ազգեր, անձնատարական ազգեր, և ազատական ազգեր:

Ա. Նիւթական կրթութիւնը ասիական ազգերի:

Չինէացիք, Հնդկացիք, Պարսիկք և Եգիպտացիք կացուցանում զրջանակը պեղագօղեան ազգերի Ասիայում, որոց մէջ անհատի անձնաւորութիւնը կորչում նիւթի, ընդհանուրի մէջ: Անհատը նոցա մէջ ոչինչ է. անձնիմացութիւնը վճռաբար յետ է քարշվում և անազատութեան իմացութիւնը, բաղդատութեան կարողութիւնը կենտրոնացած են նոցա հոգու կազմուածի մէջ. ասիացի մարդը հակամէտ է դէպ ի մի անդորձ խաղաղութիւն (ՆԻՐՎԱՆԱ) և այդ պատճառով չէ հասանում անձնական ազատութեան և ինքնիշխանութեան: Այս տեղ մարդս համարվում և համարում իւր անձը սեռի մի լոկ օրինակը: Դաստիարակութիւնը է մի լոկ մեքենական վարժութիւն, որ տանում դէպ ի կորուստ նիւթի մէջ, և որովհետև այս նիւթը մնում նմա արտաքին կերպով միայն, վասն որոյ օտարի հրամանը է օրինակը լինում հիմն ամենայն դաստիարակութեան: Միջնորդը, որով արևելեան մարդը ըմբռնում աշխարհը, է զգալի աչքով տեսութիւնը. և զգալի սահմանից ոտքը դուրս չէ դնում դաստիարակութիւնը: Արևելեան աշխարհադարու յատկութիւնը է վիսասանական: Համաշխարհական պարտականութեան մտածողը, որպէս ուրեն մի անհատ մտածող, է վիպասան, անչնորհուր է լինում զգալի պատուական աշխարհին ի սորատրում իւր անձը սրտաբուխ հրամանի ի օրինակի նեբէոյ, որովհետև իւր Բոլոր գոյութիւնը ունի իւրեանից դուրս, սրտաբուխ աշխարհի մէջ:

1. Ընդհանուր կարգը, որում կուրօրէն ծառայում անհատը, է նախ Գերպասանը. գերդաստանը է հիմքը և սկզբնաղբիւրը ամենայն դաստիարակութեան, նոյն և ամենայն զարգացման, մարդկութեան մէջ: Առաջին պատմաբանական ազգը է մի հատ գերդաստան: Իբրև գերդաստան երևում չինական ազգը իւր օրէնքների, կարգերի և բարք ու վարքի մէջ: Նորա դաստիարակութեան մէջ կշիռ ունի նոյնպէս գերդաստանի հիմնական կանոնը, այսինքն, մանուկների անպայման հնազանդութիւնը ծնողներին, անխտիր բոլոր Չինէացոց, իբրև մանուկների, հնազանդութիւնը բոլորեցուն հօր, կայսերը—մի հնազանդութիւն որ ուսանվում անթիւ ու անհամար հատուկտոր կանոններով, անհոգի ձևերով և օրինակներով: Գանահարութիւնը մի բրնական և անանխատ պատիժ է: Գրել ու ընթեռնուլ, ահա Չինէացոց տեսական կրթութիւնը: Ուսումը—մի մեքենական, անմտաբար անդիր սերտողութիւն այն բաների, ինչ որ նախնիքը ուսած ու գործած էին: Շատ ուղիղ ասում մի պատմաքնին մատենագիր. "բնութիւնը և պատմութիւնը կամեցած են Չինէացոց օրինակով ցոյց տալ ինչ որ միանգամայն կարող էր յառաջանալ մոնգոլեան ու թաթարեան քաղաքագործութենից". և արդարև, մանաւանդ թէ Չինէացոց կրթութիւնը ցուցանում թէ ուրչափ կարող էր մոնգոլեան—թաթարեան ցեղը յառաջադէմ լինել իմացական կրթութեան մէջ—այսինքն մինչև մեքենական վարժութիւն միայն: Բայց

—ահա սորա մէջ է չինական դաստիարակութեան իսկութիւնը— բնութեան կամակորութիւնը կոտրվումէ հնազանդութեամբ բացարձակ հրամանի:

2. Զինոպոնոմ իւրաքանչիւր ոք ստորադրուած է մեծ քաղաքական գերդաստանի ներքոյ, բայց դորա շրջանի մէջ կարող է նա հասանել ամենայն բանի: Հնդկաստանում, անհատը իւր ծննդեամբ որոշվումէ իբրև պատկանաւոր մի յատկացած ժողովրդակարգի (քաստայի) և դորա մէջ փակուած մշանջենաւորապէս, կարող է ապրել և մեռանել: Ուրեմն դաստիարակութեան խնդիրը այս տեղ, այն է, որ ամեն մարդ ճշդութեամբ ծանօթանայ իւր իրաւունքին և պարտքին, և ամենախիստ արտաքին արարողութեամբք լցուցանէ զնոսա դէպ ի դուրս: Սովորութեամբ ընտելացնել. ահա կանոնը հնդկական դաստիարակութեան, որ հասանումէ իւր նպատակին անվերջ կրկնողութեամբք և երկիւղով պատժի երեսից: Տեսական կրթութիւնը ոչ այլ ինչ է, բայց միայն զրել, ընթեռնուլ և համարել, որպէս նախապատրաստող պայմանք ստանալու աջողակութիւն ճարտարութեան և գիտութեան մէջ: Պոպիպոնոմիան Հնդկաստանի մէջ, է մի ուռանիշին ֆոպոյական դրութիւն. դորա մէջ է նորա սահմանափակութիւնը. բայց սոյն այս բաժանմամբ աշխատութեան զանազան քաստաների մէջ, իմացականութիւնը ստանումէ աւելի խորութիւն. այս է ահա այդ դաստիարակութեան իսկութիւնը և արժանաւորութիւնը:

3. Պարսիկները հասկանումեն իւրեանց անձը իբրև ազգ, և իբրև ազգ դուրս են երևում միւս ազգերի դէմ ու դէմ: Պարսկաստանը նշանակումէ արևելեան թագաւորութիւնների վերնակէտը. դա է մի բռնակալ թագաւորութիւն, որ պահանջումէ անպայման, ամենապարունակ հնազանդութիւն դէպ ի թագաւորը, իբրև փոխանորդը ազգի, և դէպ ի դուրս աշխատումէ հնազանդեցնել իւր լծի տակ բոլոր միւս ազգերը: Այդմ համեմատ է և դաստիարակութիւնը. դա է ֆուչֆոնոն պոպիպարակոնիոն և ունի առանձին ազգային բնաւորութիւն: Բոլոր ժողովրդի մէջ անկվումէ բարոյական քաջութիւն և պատերազմական հոգի: Մանուկները պատկանումեն թագաւորութեանը աւելի, քան թէ ծնողներին: Զանազան հասակների համար կարգած դպրոցների մէջ ուսանումեն նոքա ընթեռնուլ և գրել և հրահանգվումեն աստուածպաշտութեան արարողութիւնների մէջ: Բայց պարսիկ մարդուն դաստիարակութիւնը հրամայումէ առաւելապէս, ճշմարտախօս լինել, սովորել չափաւորութեան և քաղաքական առաքինութեան, որպէս և ուսանել ձիընթացութիւն և նետարձակութիւն աղեղից: Բոլոր աւելի վերին գաղափարները պակաս են պարսկական դաստիարակութեանը: Բայց դա դաստիարակումէ պարսիկ ազգը իբրև ազգ, ազգերի դէմուդէմ կանգնած. և այս է նորա իսկական կշիռը:

4. Եգիպտոսը է այն ձեռը, որ արևելքը պարզումէ դէպ ի արևմուտք: Իւր մէջ յատկապէս, Եգիպտոսը է զգաստացող իմացականութեան խորհրդաւոր նշանագիրը (հիերոգլիֆը): Դա է մի այլաբանական ազգ. սֆինքսը է նորա նշանակը: Քուրմերը

և պատերազմողքը կացուցանումեն ժողովրդի գլխաւոր կարգերը դոցա մէջ և ամփոփվումէ դաստիարակութիւնը իւր բուն մտքով: Միւս կարգերը ժողովրդի սովորումեն ահով ու դողով պատուել կրօնը և քուրմերի դասը, որպէս և հնուց աւանդած ծէսերը: Ընդհանուր տեսական կրթութիւնը սահմանափակվումէ ընթեռնլու, գրելու և համարելու աջողակութեան մէջ, որպէս և սովորութեամբ ծանօթանալու մի որոշեալ վաստակարարութեան, գերդաստանի մէջ: Եգիպտական դաստիարակութիւնը կարող չէր տակաւին աղատել հոգին բնութեան կապանքից և բարձրացնել դէպ ի գիտակցութեան պայծառութիւնը: Զգալին և հոգեղէնը տակաւին խառնվումեն միմեանց հետ և պատկերազրվումեն նշանակներով (Սիմբոլներով): Ուրեմն, Եգիպտոսի պոպիպարակոնիոնը է նշանագիրոն (սիմբոլոն) գրութիւն:

Բ. Անձնաւորական կրթութիւնը հին կլասիկական ազգերի:

Փոխանակ նիւթին, որ տեսանք արևելեան աշխարհումէ, դուրս է երևումէ հնութեան կլասիկական ազգերի մէջ անձնաւորութիւնը: Երիտասարդի հոգին—որպէս մարդկութեան, նոյնպէս և անհատի մէջ—ազատումէ իւր անձը արտաքին գոյութեան ճնշող ու հարստահարող կարողութենից, վառն զի ինքնիշխանաբար իւր անձը ընդդիմադրումէ նմա և յետոյ, ինքն ինքեան յետ դարձուցած և պարծանքով զգալով իւր զօրութիւնը, վեր է կենումէ իւր յատուկ ոտքի վերայ: Անհատը, իւր անձնաւորութիւնը յաղթող կացուցանելով, բոլոր արտաքին կարողութիւնքը համարումէ այնուհետև ոչինչ, բայց միայն իւր ծառայք: Այսպէս է լինումէ Հելլադայումէ և Հռոմումէ. Հելլենացւոյ աչքումէ կատարելութեան գաղափարը է մի գեղեցիկ անձնաւորութիւն, իսկ Հռովմէացւոյ աչքումէ, մի գործական անձնաւորութիւն, և դէպ ի այդ գաղափարը ուղղեցուցած է նոցա մտածութիւնը և կամքը: Սակայն այս անձնաւորութիւնը տակաւին կարող չէ վեր բարձրանալ և իշխել բնական հիմքին, և այս պատճառով փակվումէ իւր ազգի սահմանի մէջ: Հելլադան և Հռոմը չեն հասանումէ տակաւին իւր մէջ ապահով, իւր անվախճան արժանաւորութեանը գիտակից անհատի ըմբռնողութեանը. այս տեղ է ահա սահմանը, որոյ մէջ մնումէ փակուած հին կլասիկական ազգերի հայեացքը աշխարհի վերայ:

Անձնաւորական կրթութիւնը պիտոյ է ներհակ դուրս դայ Ասիայի բռնակալ թագաւորութիւններին: Ասիայի մէջ, ուսման ոճը դուրս չեկաւ մի կողմից մեքենաբար ցոյց տալու և միւս կողմից նոյնպէս մեքենաբար կրկնելու սահմանից, դուրս չեկաւ մի բուն անդիր սերտողութենից չհասկացած ձևերի. ուսումը էր մի լոկ սովորութիւն *), որպէս և դաստիարակութիւնը, որ իբրև խիստ կարգ, կամքը միայն

*) Կարծեմ, այս տեղից է, որ մեր Հայն ևս աշխարհաբառ լեզուի մէջ գործ է ածում բառերս սովորել և սովորեց՝ էլ փոխանակ սուռնել և սուռուցանել, որովհետև արևելեան ազգերի մէջ սուռնելը և սուռուցանելը եղած են միշտ սովորել և սովորեցնել:

յառաջացնել կոյր և անմիտ հնազանդութիւն, անպայման ստորադրութիւն սովորութեան և կրօնական պատուէրների ներքոյ: Բայց կեանքի շաւիղը Ասիայում, մի անփոփոխելի քաստայական սիստեմայով որոշած էր առանձնականի համար: Հէն էլ՝ ինչպէս ոչգիերի մէջ ոչոտ մարդը կարող էր ի՞նչ ընդրել ի՞նչ հոմար, կարողէր ի՞նչ նոխանոցց ընճակից ի՞ պատուից դէպ ի վեր գուրս չգոնելով խօսքով ո՞ գործով. հասանել ոմնոնվերջին պատուաւոր պաշտօնների Լոգաւորութեան, որպէս ի՞ ճարտարութեան ի՞ գիտութեան մէջ: Ուսումը—և այս տեղ միայն, ուր մարդս, իբրև երիտասարդ այլևս կորչում չէ զգալի տեսութեան մէջ, այլ ապրում ըմբռնողութիւնների աշխարհում, այս տեղ, ուր բաց ի այն դարմանատարութենից, որ ցուցանում վայրենին արդէն, և բաց ի այն խիստ կարգից, որոյ մէջ էր ասիական դաստիարակութեան կրթութիւնը, այս տեղ միայն հնարաւոր է ուսումը—յառաջացնում պաշտոնաւոր պարգևատրութիւն մարդի ի՞ հոգու, որպէս ի՞ էրեանում ոչոտ փողոփոցիչ տերութեան: Այս համաշխարհական դարու բնաւորութիւնը է փոքերգիոն—նա չափում և կշռում ամենայն բան իւր կշռով: Երիտասարդը է քնարերգական բանաստեղծ և իւր անձնաւորութեան վերայ հաստատուած:

1. Յունաստանում, դեղեցիկ անձնաւորութիւնը է կեանքի խորհուրդ և նպատակ: Յոյնի աչքում, դեղեցկութեան մէջ է ամփոփուած մարդուս էութիւնը—մարմնաւոր և հոգեղէն դեղեցկութեան մէջ, որ նորա աչքում զուգախառնվում լաւի հետ իբրև կալոկագաթիա (գեղեցկալաւութիւն): Եւ արդարև Յունաց աստուածքը ոչ այլ ինչ են, բայց անձնաւորուած դաղափարներ ճարտարութեան: Աստուծոյ մարմնաւորութիւնը ճարտարութեան մէջ—այս է յունական կրօնը: Հելլենացւոյ կեանքը է մի կեանք լիավայել և զմայլուած դաղափարականութեան—դեղուն, թաթաղուն, երանական, առաջին հոգեպայծառ ցնծութիւնը երիտասարդի, որ կեանքի ճենճերը խմում լի բաժակներով: Յունական կեանքը է դեղեցկութեան պաշտօն, և նորա հաստատութեան սիւնը է ազատ անձնաւորութիւնը: Առողջութիւնը Հելլենացւոյ աչքում հիմնաւորուած է հոգու և մարմնի փոխադարձ ազդեցութեան վերայ, այնպէս որ մարմնաւոր կերպարանքը կազմվում հոգու միջնորդով և հոգին ամրանում մարմնաւոր վարժութեամբ: Եւ այս առողջութիւնն ու դեղեցկութիւնն էր, որ ստեղծեց այն անմահ ճարտարապետական գործերը, դա էր այն շարժառիթը որով յունական ոդիերդուքը, իբրև անձնաւորուած ճակատագիր, թատրոնական բեմից քարոզեցին յունական հոգու խիստ թիւնը, պինդարեան երգերը փառաբանեցին յունական քաջագործութիւնը, և քանդակագործը դէպ ի վայր բերելով ոլիմբոսից յունական աստուածը, երես առ երես ցոյց տուեց հիացած ժողովրդին: Դաշնակաւոր էերպորոնագործութեան անչնաւորութեան ի՞ հոգեղէն ուղղութեան դէպ ի գեղեցիկը ի՞ լաւը, այդ է՛ն էր յունական էրեութեան խորհուրդը ի՞ նպատակը: Մանուկը զարգացնել և շինել գեղեցիկ և ազատ ոյն, որ ոչ ում հնազանդում չէր, բայց միայն տէրութեան օրէնքին, դէպ ի այդ ուղղած էր արդէն քաջաշնական դարու դաստիարակութիւնը, երբ տա-

կաւին առանց սիստեմատիկական կարգի ընծայվում ամենայն կարելի ուշադրութիւն անհատի ազատութեանը: Դոյն բանին աշխատում հասանել դաստիարակութիւնը բարեկարգուած քաղաքական կեանքի միջոցին, երբ գիմնասիական պիտի մշակելով կերպագործէր անհատը իբրև դեղեցիկ աստուածատիպ արձան, երբ երաժշտութիւնը ցուցանում սիրտը զուգաչափ դաշնակաւորութեամբ, երբ և քերթողութիւնը առաջնորդում դէպ ի գիտութիւնք: Դոյն բանը, թէև մի աւելի հոգեղէն հայեցուածով, կամէր փիլիսոփայական դարը տակաւին, երբ Սոկրատէս աշխատում տալ անձնաւորութեանը իւր ինքնագիտակցութիւնը: Ուսումը սիստեմատիկաբար վարժում աչքը և ականջը, զարթեցնում զգացողութիւնը պատշաճի և չափի, թէ նիւթականի և թէ հոգեղէնի մէջ, և աշխատում երկրաչափութեամբ ու փիլիսոփայութեամբ ճանաչել բոլոր սիեզերքի դաշնակաւորութիւնը: Եւ սոքա են Յունաց դաստիարակութեան մշանջենաւոր շարժառիթքը: Այնու ամենայնիւ, դաստիարակութիւնը, մի կողմից, ոտքը դուրս չէ դնում էսթէդիկական դաղափարի սահմանից. այլև, կրօնը և կրթութեան բարոյական ուղղութիւնը ստորադրուած են դորա ներքոյ. միւս կողմից, նա այնպիսի նեղսրտութեամբ փակում սիրտը առանձին ցեղական մտածելու և նկատելու եղանակի և ազգային սովորութեան մէջ, որ Յոյնը չէ հասանում այն սրտի խոստովանութեանը, թէ նա մարդ էր, այլ կարող է միայն ըմբռնել իւր անձը իբրև Յոյն: Սոքա են խախուտ կողմերը յունական դաստիարակութեան դէպ ի այն դեղեցիկ անձնաւորութիւնը, որ մշակում հին Յունաստանը:

Յունաստանի մէջ, առաջին անդամը երևան է լինում դաստիարակութիւնը իբրև մի հեռակից, իւր մէջ ժողով ու ամփոփ թէորիա (տեսաբանութիւն): Երկրքեան իմաստունքը աշխարհի, Պղատոն և Արիստոտէլեն հիմնարկուքը դաստիարակութենական դիտութեան, Սոքա, ինչ որ Լիկուրգոս և Սոլոն տուած էին իբրև օրէնք, և ինչ որ Պիթագորաս և Սոկրատէս գործած ու խորհած էին, բերեցին կարգի ու սիստեմայի ներքոյ: Պղատոնը "իւր Քաղաքական ընկերութեան" այլև իւր "Օրէնքի" մէջ դրած է մի առատ լուսթիւն պեդագոգիկեան կանոնների, որոց մէջ նա զգում անհատը քաղաքական ընկերութեան օգտին և պահանջում հաւասար և հրապարակական դաստիարակութիւն: Սորա հակառակ, Արիստոտէլը իւր "քաղաքական տնտեսութեան" մէջ մի տեղ է ժողովում այն բոլոր բաները, որ յունական փիլիսոփայքը դաստիարակութեան մասին ուսուցել էին, և պահանջում գերդասանի համար ինքնիշխանութիւն, իսկ անհատի համար ինքնորոշ ընտրութիւն: Բայց հասարակաց և հրապարակական դաստիարակութիւնը համարում իրաւացի այն չափով միայն, որ չափով միայն լինելու էր դա գերդասանի և անհատի սուրբ սեփականութիւններին օգտաւէտ, առանց ձեռնամերձ լինելու նոցա:

2. Հռոմէացին է գործունէութեան մարդը — պրաքտիկական անհատը: Հռոմի բերանով խօսում է դէպի մեզ մարդկութեան երիտասարդը, որ իւր ներսում վաստակած վաստակների առատութեան մէջ, ձեռքը դուրս է ձգում դէպի աշխարհը և ջանադիր է տիրապետել նմա: Ոչ թէ գեղեցկութիւն, այլ յարմարութիւն է նորա գործի շարժառիթը, նորա գործի, որ խելացի կերպով կշռում է պատշաճաւոր հնարները հասանելու իւր առաջև դրած նպատակին: Հռոմէական ազգը է անօթի, պրակտիկաբար մտածող ազգը. այդ պատճառով ևս յարգի է նորա աչքում այն բանը միայն, որ բերում է անմիջապէս պրակտիկական օգուտ պատերազմի և քաղաքական կառավարութեան մէջ: Եւ այդ իսկ պատճառով, Հռոմայեցին արարիչ է պատմագրութեան և ճարտարախօսութեան մէջ. ամենայն միւս գիտութեան և ճարտարութեան մէջ նա մնում է լոկ նմանող, որ և կարող չէ հասանել իւր օրինակին, Յոյնին: Նոյն իսկ կրօնը ստիպուած է Հռոմայեցւոց մէջ ծառայել քաղաքական գործերին. նա է միայն քաղաքագիտութեան և արտաքին հարկաւորութեան գործ: Բայց Հռոմայեցին աւելի յառաջ է տանում հասարակաց մարդկութիւնը: դէպի բարոյական կողմը, ցուցանելով սէր գերդաստանի, մեծապէս յարգելով և կըշիռ տալով ամուսնութեանը, աւելի վերին, աւելի հաստատուն և աւելի ազատ կացութիւն տալով կնամարդուն:

2. Հռոմայեցւոց կրթութեան վիճակին և իմացական ընդունակութեանը համեմատ, դաստիարակութիւնն ևս ամենևին ներհակ էր յունականին, թէպէտ այնու ամենայնիւ — ինչպէս Յոյնը և Հռոմայեցին առհասարակ — ազգակից յունականին: Եթէ Յունաց պայդէ-էյն որոշվում է լատինականից educare, նոյնպէս յունական դաստիարակութիւնը որոշվում է հռոմէականից. պայդէյա բղխում է բառից պայս (մանուկ) և պարունակում է մանուկի բովանդակ ֆիզիքական և հոգեկան կրթութիւնը. educare ունի իւր սկիզբը Առաջնորդելուց և Վարելուց դէպ ի նմանողութիւն, և նմանողութիւնը է հռոմէական կրթութեան գլխաւոր գործը: Դա է նմանողութիւն նախահարց և ծնողների սովորութեանը — նմանողութիւն գերդաստանի հոգուն և յառաջընթաց աշխատաւորներին քաղաքական կեանքի մէջ: Հռոմէական դաստիարակութիւնը շարժվում էր հնուց աւանդած քաղաքական և կրօնական իմացութիւնների մէջ, ուր անհատի ազատութիւնը սահմանափակած էր. դա չէր մի ցեղական կրթութիւն, ինչպէս Յունացը, այլ գերդաստանական կրթութիւն, բայց ոչ ծնողների և զաւակների մէջ բնական առընչութենից յառաջացած, գերդաստանական դաստիարակութիւն ասիական ազգերի, այլ մի գերդաստանական դաստիարակութիւն, որոյ մէջ գերդաստանի հայրը կացուցանում էր լիակատար իրաւունքով քաղաքացին տէրութեան և յանձնառու էր ուսումն տալ մանուկին, մինչև

դա, հասանելով տասնևվեց տարեկան հասակին, յանձնվում էր մի ազդականի կամ երևելի իրաւաբանի, որպէս զի հմտանար իրաւագիտութեան և քաղաքական գործերին: Մայրը նախակրթում էր իւր մանուկի բնաւորութիւնը, ազդելով նորա մէջ վերին հայրենասիրութիւն, հպարտ, ամուր հռոմէական սիրտ, անվաստակելի, հասարակաց հոգի. այնուհետև մանուկը հրապարակի և ժողովրդի մէջ փորձուելով զարվում էր և դառնում պողպատեայ, որպէս և պատերազմի ու պաշտօնի մէջ ստանում էր իւր աջողութիւնը: Այս հիման վերայ, հռոմէական կրթութիւնը էր իրաւաբանական ու զինուորական, հասարակապետութեան միջոցին. և այս գործականութեան ու օգտակարութեան հիմքը բաց չթողեց նա և այն ժամանակ, երբ Հռոմայեցիք ծանօթանալով յունական լեզուին, ուսանում էին ճարտարախօսութիւն, իրաւագիտութիւնը գործ դնելու համար, ինչպէս փիլիսոփայութիւնը — որպէս միխթարութիւն կեանքի անախորժութիւնների մէջ: Բայց երբ հռոմէական աշխարհակալութիւնը ազգայնութեան սահմանները քակեց, կենտրոնանալով կայսերական թագաւորութեան մէջ, և դորանով վերացրեց հին աշխարհը և նորա կենսական տարրը — ազգը —, այնուհետև կրթութիւնն ևս փոխուեցաւ ազգայնութենից դէպ ի տիեզերականութիւն, և ընդհանուր կրթութիւնը դարձաւ ուման և դասախարակութեան նպատակ: Բայց Հռոմը, որ ունէր իւր տարրը վախճանաւորի մէջ, կարողացաւ միայն յղանալ այդ միտքը, այլ ոչ իրագործել զնա. դորանով և կործանուեցաւ նա:

Ինչպէս Հռոմայեցին չէ տեսաբան (թէորետիկոս) առհասարակ, նոյնպէս և ոչ դաստիարակութեան մէջ: Կիկերոնը իւր հայեացքը կրթութեան վերայ, պատեհ միջոցներում աւանդած է իւր փիլիսոփայական և ճարտասանական գրուածների մէջ, բայց աչքի առաջև ունելով առաւելապէս ատենաբանի կրթութիւնը: Եւ Կվինտիլիանոսը իւր գործի մէջ «Institutionis oratoriae libri XII» որ պատկանում է ատենաբանի կրթութեանը, թէև նորա մէջ նկատվում է բովանդակ հռոմէական քաղաքական դաստիարակութիւնը, գլխաւոր ուշադրութիւնը դադարեցնում է երիտասարդի և ատենաբանի վերայ: Սենեքան միայն նայում է դաստիարակութեան վերայ գիտնական աչքով, առանց հանդէս հանելու որ և իցէ գիտնական սիստեմա դաստիարակութեան:

3. Աստուածպետական դաստիարակութիւնը իսրայելեան ազգի:

Իսրայելեան ազգի մէջ անհատը չքանում է ոչ թէ իւր գերդաստանի, իւր ժողովրդակարգի, իւր ազգի, իւր տէրութեան մէջ. ոչ, նա չքանում է իւր Աստուծոյ մէջ: Ազգը նորա համար է երկրորդական բանը, իսկ Աստուած առաջինը: Այդ պատճառով և այդ բանով իսրայելեան ազգը հանդիսացած է հնութեան դարերի մէջ իբրև մի հատիկը իւր տեսակի մէջ: Ինչպէս Եգիպտոսը կազմում է փոխանցութիւնը արևելքից դէպ ի արևմուտք, նոյնպէս իսրայելեան ազգը կազմում է փո-

խանգութիւնը դէպ ի նոր ժամանակը, հեթանոսութենից դէպ ի Քրիստոնէութիւնը. նորա կրթութիւնը ունի մի խիստ կրօնական—գործական բնաւորութիւն, և միայն առընչութիւնը Իսրայելացւոյ և նորա Աստուծոյ մէջ, ունի նորա աչքում կշիռ և այս առընչութիւնը աշխատում նա յայտնի կացուցանել իւր կեանքի մէջ: Նորա նոյն իսկ պատմութիւնը և բանաստեղծութիւնը կրումն իւրեանց վերայ այդ նշանակիքը: Արտաքին կեանքի բաղմօրինակութենից փախչելով առանձնանում Իսրայելացին իւր սրտի և իւր Աստուծոյ մէջ:

Այս սիստեմայի մէջ—ասում Բողէնքրանցը—նոյն իսկ Աստուածը է մանկածու առաջնորդ: Նորա կամքը յայտնուած է օրէնքի մէջ, և օրէնքին պարտ է մարդը հնազանդել անպայմանաբար: Այս մտքով, Իսրայելեան ազգը է առանձին կերպով դաստիարակելի ազգը, որ ինքը Եհովան դաստիարակում իւր համար, և այնպէս, որ Իսրայելացին պիտի ուսանի հրաժարուիլ ամենայն անձնաւորութենից և հեռի կենալ ամենայն անձնապաշտութենից: Այս շաւղի վերայ նա սկսանում արտաքին օրէնքի գործերից և յառաջ է քայլում դէպ ի ներքին բարոյական զգացողութիւնը և գիտութիւնը, թէ մարդս Աստուծոյ օրէնքը միայն լցուցանելով, հնազանդում իւր յատուկ ներքին զոյութեանը, և այս հնազանդութեան մէջ զտանում իւր ներքին ազատութիւնը: Այնու ամենայնիւ Իսրայելեան ազգը այս ճանապարհի վերայ, որոյ վերայ Եհովան դաստիարակում զնա, կրկին և դարձեալ խոտորվում բարոյականութենից դէպ ի օրէնքի գործը: Թող այս հակառակաբանութիւնը, նա ընկնում մի այլ հակառակաբանութեան մէջ: Դաւանելով Աստուածը իբրև աստուած համօրէն աշխարհի, նա դարձեալ շինում զնա առանձնական աստուած Իսրայելի, որ որոշած էր իւր համար իւր ընտրեալ ժողովուրդը, և այս պատճառով, Իսրայելացին Իսրայելացու մէջ միայն տեսանում այն մարդը, որ կարող էր նա սիրել իբրև իւր ընկեր. այս հակառակաբանութեան մէջ, Իսրայելեան ժողովուրդը տարածում իւր հայեացքը իւր վերայից դէպ ի դուրս. նա է կանխագուշակող ազգը, որ իւր կատարելատիպը որոնում իւր հոգեպէս նկատած Մեսիայի մէջ, որ լուծանելու էր բոլոր հակառակաբանութիւնքը, որոց մէջ հալ ու մաշ լինելով խորտակվում ինքը:

Իսրայելացւոյ դաստիարակութիւնը է նախապատրաստական: Գերդաստանին, որոյ կեանքը ճիշդ կանոնաւորուած է կրօնական պատուէրներով, պատկանում դաստիարակութեան առաւել մեծ մասը: Հայրը է ուսուցիչը, որովհետև նա է տան քահանան. նա ունի դաստիարակելու մանուկները դէպ ի երկիւղ Աստուծոյ: Դաստիարակութիւնը է աստուածպաշտութիւն: Աստուծոյ ձեռամբ տուած օրէնքը է հիմքը բարոյական, կրօնական, գիտնական և քաղաքական կեանքի, և այդ պատճառով նոյնպէս հիմքը դաստիարակութեան: Համարել և գրել ուսանում էին միայն մեծատունների որդիքը: Դաստիարակութիւնը ծայրէ ծայր կրօնական է և մի և նոյն միջոցին—որովհետև կրօնը կապած էր Իսրայելեան ազգի հետ—ազգային:

Մի ճիշդ տեսաբանական կարգ դաստիարակութեան չէ դուրս դրած Իսրայելեան ժողովուրդը: Արդարև, Մովսէսի, Դաւթի, Սաղոմոնի գրուածների մէջ զտանվում դաստիարակութեան և ուսման կանոններ, և Յեսու Սիրաքը, այր մարդու և կին մարդու մէջ, ծնողների ու երեխաների մէջ առընչութիւնքը նկարագրում իւր զրքում այնպիսի անզուգական կերպով, որ դա ընծայում մեզ մի գանձ պեդագոգեան իմաստութեան—բայց Փիլոնը միայն (մի աղէքսանդրացի Հրէայ), դուրս է դնում առաւելապէս տեսաբանական կանոնք դաստիարակութեան:—

Իսրայելի աստուածպետութեամբ ըանում հնութեան դարը, միանդամայն և նորա դաստիարակութեան գործը: Հնութեան դարը սկսանելով դաստիարակութիւնը գերդաստանի հոգով, բաժանած է այդ աշխատութիւնը քաստաների վերայ. ապա յառաջ է գնացել դէպ ի դաստիարակութիւնը ժողովրդի ձեռամբ, բարձրացուցել է գեղեցկութեան դաղափարը և շինած է զնա կանոն դաստիարակութեան. յետոյ, գործական անձնաւորութիւնը դրած է իբրև դաղափար ամենակատարեալ դաստիարակութեան, և վերջումը շինած է Աստուծոյ ծառան ամենավերին օրինակը դաստիարակութեան:

Իւրաքանչիւրը այս կանոններից դաստիարակութեան, եթէ զդոսա զուդա խառնենք միասին, մինը միւսի հետ ըծորդելով, իրաւ ու հիմնաւոր է. բայց անպատշաճ և անհիմն է և կը մնայ այնքան երկար, քանի որ նա միայնակ և միւսերից առանձնացած, կամէր կշիռ ճարել իւր համար:

Քրիստոսին յառաջընթաց ազգերը կորուսած էին իւրեանց խաղաղութիւնը, որովհետև նոցա մեկուսի հայեացքը օրըստօրէ աւելի բացայայտուած էին և դուրանով խախտուած էր նոցա հաստատութեան սիւնը: Նոքա դէմ յանդիման կանգնած էին մի առակի առաջև և որոնումէին նորա մեկնութիւնը: Սակայն նոցա հանճարը կարող չէր տալ այդ մեկնութիւնը: Մարդու հաշտութիւնը Աստուծոյ հետ, որպէս և մարդերի հաշտութիւնը մարդերի հետ, բերում միայն Քրիստոնէութիւնը իւր աստուածեղէն մեկնողական խօսքով:

Ս. Նալպէանց:

Պատմական հայեցուածք ֆրանսիական գրականութեան վերայ, սկզբից մինչև Լուդովիկեան դարու վերջը։

Որ և էցէ ազգի գրականութեան կերպագործութիւնը հասկանալու և նորա հետ գՀեռէ կրած փոփոխութիւնները բացայայտելու համար, պարտէ այդ ազգի հնութեան մէջ խորամուխ լինել մինչև նորա սկզբնաւորութիւնը. պարտէ իւր մէջ մի ուղիղ գաղափար կազմել նորա կրօնի, կառավարութեան, վարք ու բարքի և սովորութիւնների մասին. պէտք է վերջապէս ուսանիլ ճանաչել այն մեծամեծ ընկերական իդէայքը որ խորին ազդեցութիւն են ունեցած ազգի գոյութեան վերայ։

Այն առաւել հեռաւոր դարերում, ուր պատմական աւանդութիւնքը նեռումն մեզ դէպ ի յետս տարածել մեր հայեացքը, մեք գտանումնք, որ երկու մեծամեծ ցեղեր զրաւած ու միմեանց մէջ բաժանած էին Միջերկրական ծովի, Ալպեան սարերի, Հռենոս գետի, Ովկիանոսի և Պիրենեյան սարերի մէջ եղած ահագին տարածութիւնը։ Այս երկու ցեղերից առաջինը—Գալլեկոնը, միւսից շատ աւելի բազմաթիւ էր. երկրորդը կազմուած էր Իբերոյներից, որք Աէ-ռոնոյէ անունով բնակումէին Գարոն գետի և Պիրենեյան սարերի մէջ։ Աւելի յետոյ ժամանակում, մի ուրիշ իբերական ցեղ, Լիգուրոյէ անունով, Սպանիայից դուրս գալով, եկաւ հաստատուեցաւ Միջերկրական ծովի ափերի վերայ։ Վերջապէս Քրիստոսից 600 տարի յառաջ Փոկէացի յոյն գաղթականները, փախչելով պարսկական լծից, եկան միացան Լիգուրացւոց հետ։

Երբ Ցուլիոս Կեսար առաջին անգամ ոտք կոխեց Գալլիայի հողի վերայ, երկրի բնակիչները երեք այլևայլ ժողովուրդներից էին կազմուած։ Պիրենեյան սարերի և Գարոն գետի մէջ բնակվումէին Աէռոնոյէ, Հռենոս, Սենա և Մարն գետերի մէջ Բելգիացոյէ, իսկ կենտրոնումը գտանվումէին Քելտոն Գալլիացոյէ, որոց երկիրը պարունակվումէր Բելգիացոց և Ակուիտանացոց սահմանների մէջ։ Այս երեք ժողովուրդներից իւրաքանչիւրը ունէր իւր առանձին բարբառը։ Թէպէտ ակուիտանական բարբառի հետքը անգամ չէ մնացել, այնու ամենայնիւ կարելի է հաստատ ասել, որ նա ոչինչ նմանութիւն չունէր հիւսիսային բնակիչների լեզուի հետ։ Ընդհակառակն

Բելգիացոց և Գալլիացոց բարբառները սակաւ էին զանազանվում միմեանցից և կարող են մի և նոյն լեզուի ճիւղեր համարուիլ։ Ահա, այս լեզուն է, որին ընդհանրապէս Քելտեան անուն են տալիս։

Թէ ինչ դրութեան մէջ էր Գալլիան Հռոմայեցոց տիրապետութիւնից յառաջ, այդ դժբաղդաբար մութ է մեզ։ Նորա բնակիչների մտաւորական և բարոյական որպիսութիւնը այն ժամանակ միայն յայտնի է դառնում, երբ նոքա իւրեանց քաղաքական ազատութիւնը կորուսանումեն։ Յոյն և Հռոմայեցի մատենագիրների վկայելով, Գալլիացիք իրենէ համարձակ ժողովուրդ էին, սպիտակամորթ և շէկ մազերով. սիրումէին պճնուիլ ոսկի շղթաներով և զոյն զոյն կերպասներով։ Իրենէ ընկերասէր լինելով, նոքա կազմումէին մեծ մեծ ամբոխներ։ Նոցա լեզուն սրընթաց էր, համառօտ իւր ձևերի մէջ, երկարախօս իւր յորդառատութեան մէջ և աւելորդաբանութիւններով լի։

Հռոմէական արշաւանքը գրեթէ բոլորովին կերպարանափոխ արեց գալլական երկիրը։ Ժողովրդեան վերին դասակարգերը մեծ եռանդով ընդունեցին յաղթողների սովորութիւնները, քաղաքակրթութիւնը, լեզուն, գրականութիւնը։ Քելտեան հին լեզուն քաղաքներից հալածուելով, մնաց միայն հասարակ ժողովրդի և գիւղերի մէջ։ Դրուիդների (քուրմերի) վարդապետութիւնը, որ կազմում էր մի հին խառնուրդ կրօնական իմաստութեան և բարբարոսութեան, ծածկուեցաւ Օվերնի սարերում և Բրետայնի մէջ։ Այս վիճակը տևեց երեք ամբողջ դար, որ միջոցում Գալլիայի գրականական պատմութիւնը պինդ կապերով կապուած էր լատինականի հետ։ Գրեթէ խաւոր նշանաւոր քաղաքները—Արլ, Մարսէյլ, Օտէօն, Լիոն, Կլերմոն և այլն, հազարաւոր աշակերտներ ձգումէին իւրեանց մօտ կայսերութեան ամեն մասներից, որք ճարտար ուսուցիչների առաջնորդութեամբ ուսանումէին ճարտարախօսութիւն, բանաստեղծութիւն, իրաւագիտութիւն, փիլիսոփայութիւն, աստեղագիտութիւն և բժշկութիւն։ Քրիստոնէութիւնը, կերպարանափոխ առնելով այս մտաւոր շարժողութիւնը, որոյ անկումը արդէն զգալի էր թվում ամենայն կողմից, նոր կենդանութիւն տուեց նորան։ Աստուածաբանութիւնը փիլիսոփայութեան տեղ բռնեց, եպիսկոպոսների բարոյական ուսումը սոփեստների ճոռոմաբանութեան տեղ։ Այնու ամենայնիւ հեթանոսական գրականութիւնը չորրորդից մինչև եօթներորդ դարը չէր գալլիայում աւելի պտղաբեր և աւելի հիմնաւոր, քան թէ ուրիշ տեղերում, և թէպէտ քրիստոնէականը իւր ազատութեան հոգով, իւր բարոյական ուսմամբ, իւր կրօնական ջերմութեամբ ձգեց նորա մէջ մի էական կենդանագործութիւն, բայց նիւթերի բոլորովին ծածկախորհուրդ բնաւորութիւնը հակառակ էր մի ազգողներզործութեան ընկերական պիտոյքի վերայ։ Բարոյական ապականութիւնը այնպէս մեծ էր, որ ոչինչ հնարք չկար կայսերութեան անկման և բարբարոս ցեղերի առաջը փակելու, որք ամեն կողմից թափվումէին իւրեանց որսի վերայ։

Գալլիայի այս նոր աշխարհակալներից վերջինը եղաւ Ֆրանկաց ցեղը, որ իւր աշխոյժ ու տոկուն բնաւորութեամբ կուլ տուեց միւս բոլոր ազգերը: Ֆրանկները, Հռոմայեցոց հանդիպելուց յառաջ, խառն կեանք էին վարում ուրիշ հիւսիսային ցեղերի հետ, և, ինչպէս յառաջ Գալլիացոց համար ասացինք, նոցա մտաւոր արդասիքը թանձր մթութեան քօղով ծածկած են: Բայց երբ միանգամ հանդիպեցան կայսերութեանը, երբ հռոմէական աշխարհի կործանմանը մասնակից եղան, այս երկարաւև պատերազմը, որ ունէր բարբարոսութիւնը ընդդէմ քաղաքակրթութեան, մի նոր և կենսական զօրութիւն ազդեց նոցա մէջ: Եթէ Ֆրանկաց բանաստեղծական հատուկտորներին նայումենք, դոքա խիզոյն ցոյց են տալիս այդ ազգի մտաւոր վիճակը և մանաւանդ բնաւորութիւնը, այն է պատերազմական և աղատասիրութեան հոգին որ, հռոմէական քաղաքակրթութիւնից մեղկացած, Գալլիացոց վերայ ունեցաւ իւր ներգործութիւնը. նոցա պատերազմական երգերը զարհուրելի էին, ինչպէս նոցա զէնքի շառաչիւնը: Եթէ յաղթող հանդիսանային նոքա, երգերով ծանուցանէին իւրեանց յաղթութիւնը, իսկ եթէ յաղթուած էին, մահու տանջանքի մէջ հնչեցնում էին իւրեանց օրհասական երգերը: Եթէ նոցա բանաստեղծութիւնը չունէր յունական երգերի ներդաշնակութիւնը և կանոնաւորութիւնը, այնու ամենայնիւ նա շատ անգամ Հոմերոսի արժանի վսեմութիւն և պարզութիւն էր ցուցանում:

Գալլիայում հաստատուելուց յետոյ, Ֆրանկները, իւրեանց հպատակների վերայ իշխելու համար, ընդունումեն նոցա կրօնը և սովորութիւնները: Հինգերորդ դարու վերջին տարիներում կլովիս ընդունումէ քրիստոնէութիւնը և այսպէս հրաժարվումէ իւր անցեալ կեանքից և իւր գերմանական եղբայրներից: Կարոլոս Մեծը և նորա յաջորդները հետևեցան այս քաղաքականութեանը, որոյ հետևանքը եղաւ Ֆրանկների սերտ կապերով միանալը Գալլիացւոց հետ:

Ահա, այս այլև այլ ազդեցութիւնների ներքոյ սկսաւ կազմուիլ ու բարգաւաճել ֆրանսիական գրականութիւնը, որոյ պատկերը թող յանդիման կացուցանենք այժմ, առանձին ուշադրութիւն ընծայելով նորա զարգացման գլխաւոր դրամիջոցներին:

Երգերը կացուցանելով ժողովրդական կեանքի առաջին մտաւոր արդիւնքը, հարաւային Ֆրանսիայի պարզ ու մեղմ երկնակամարի ներքոյ աւելի շուտ ձևակերպեցին պրովանսական լեզուն (langue d'oc) քան թէ բուն ֆրանսական լեզուն (langue d'oïl) հիւսիսային խոշոր կլիմայում: Այնու ամենայնիւ առաջին վիպասանական երգերը հաղիւ հասանումեն կարոլոս Մեծի ժամանակին. դոցա երգիչները — Jongleurs կարճ միջոց միայն ծաղկելով, դարձան յետոյ վարձկան երգիչներ, հետևակցաբար և իւրեանց խորհուրդը կորուսին: Այնուհետև բանաստեղծութեան ասպարէզը մնաց քնարերգուներին — trobadors (այսինքն trouveurs հնարող, ստեղծող), որոց երգերի մէջ պրովանսական բանաստեղծութիւնը ստացաւ ի վերջոյ իւր սեպհական բնաւորութիւնը:

Տրուբադուրները մշակեցին գլխաւորապէս քնարերգական բանաստեղծութիւնը որ թոյլ էր տալիս նոցա յայտնել իւրեանց անձնական զգացմունքը, երգելով մանաւանդ Սէրը: Սիրոյ նիւթը հարաւային Ֆրանսիայի երկնքի տակ ստացել էր մի զարմանալի ընդհանրութիւն, և թէպէտ Տրուբադուրները, լինելով ասպետական բանաստեղծներ, ոգևորվումեն երբեմն ուրիշ իդէաներով, բայց ժամանակի հոգին և սովորութիւնները ստիպումեն նորանց յաճախ, դառնալ դէպ ի իւրեանց սիրելի նիւթը: Սակայն այս քնարերգուների արդիւնքը աւելի հանճարի ծնունդք են քան թէ սրտի զեղմունք. այս պատճառով նոքա լսողի կամ ընթերցողի մտքի վերայ են ներգործում, զարմացնումեն նորան առանց շարժելու նորա սիրտը: Թող այս. Տրուբադուրների մէջ չկան այնպիսի կարող և զօրաւոր անձինք, որք հրամայէին իւրեանց դարուն. ամենեքեան գրեթէ հաւասար էին ասպիճանով: Նոցա քերթուածների արժանաւորութիւնը գլխաւորապէս ամփոփուած է ձևի վայելչութեան մէջ: Զափաւորութիւնը ներդաշնակ է, շեշտը որոշ, տողերի և տունների հատուածը արուեստով կազմուած և փոփոխած, յայտարար խօսքերը ընտիր, նմանահնչութիւնը զուգաւորուելով արականավերջ և իգականավերջ յանգերի փոխ առ փոխ վերադարձութեան հետ:

Հնութիւնը պահպանած է մեզ մօտ երեք հարիւր Տրուբադուրների անունները և նոցա գրուածների հատուկտորք: Այս ցուցակի մէջ, վերին կարգի ազնուականք, ասպետք, քաղաքացիք, բոլոր հոգևոր դասը ունին իւրեանց պարագլուխքը: Ամենեքեան, առանց խորելու նոցա ծագումը, վայելումէին մեծ պատիւ: Քանքարը ընծայումէր ժողովրդականին իրաւունք. բանաստեղծը իւր ձիրքով զրեթէ հաւասարվումէր իւր տէրանց, մինչ նա հիւսիսային Ֆրանսիայում էր միշտ մի լոկ պաշտպանուած ծառայ: Սորա մէջ երևումէ պրովանսական քաղաքագործութեան առանձին յատկութիւնը. Տրուբադուրների ամենահին քերթուածները կոչվումէին պարզապէս Որոնումներ — vers. ժամանակի անցմամբ կազմուեցան զանազան անուններ, որոց մէջ նշանաւոր են. 1, Երգը, la chanson որոյ սովորական նիւթը Սէրն է. 2, Բանակուիը, la tenson, մի տեսակ բանաստեղծական հակաճառութիւն երկու անձների մէջ, որ կոչվումէր նոյնպէս contensio, partiment, Joc parti. 3, Գանդասը — Ile planh, տխուր երգ մի սիրական մարդու կամ բարեկամի վախճանի վերայ. 4, Հովուական երգը, la pastoreta, հովիւ աղջկայ խօսակցութիւնը իւր սիրականի, երբեմն նոյն իսկ բանաստեղծի հետ, և այլն: Բաց ի սոցանից կային ուրիշ փոքր ի շատէ ընդարձակ քերթուածներ կրօնական նիւթերի վերայ, որք կոչվումէին Saluts կամ ensenhamen (enseignement) — խրատական երգեր:

Հիւսիսային Ֆրանսիայի կամ ռոմանական լեզուն, համեմատելով հարաւային ռոմանականի հետ, ցամաք էր, անհարթ և դարձուածների անընդունակ. բայց իւր յստակութեամբ, ձևերի ճշդութեամբ և նոյնանշան բառերի առատութեամբ շու-

տով ընդհանրացաւ ժողովրդի մէջ, և հասարակաց գործերում գրաւեց լատինական-նի տեղը: Հեմոն եպիսկոպոսը Մուզոնի ժողովում, 995 թուականին արդէն, խօսում է ռոմանական լեզուով: Վիտալ աբբան Ռեմոնում և Մօրիկ դը Սիւլլի, Փարիզու եպիսկոպոսը, հետևելով սուրբ Բերնարդոսի օրինակին, քարոզումն ժողովրդական լեզուով: Վերին կարգերի հոգևոր դասու բոլոր ջանքը զուր եղաւ լատինական լեզուն պաշտպանելու ի վնաս ժողովրդական բարբառին, բայց զարկը տուած էր և, ԺԲ դարուց սկսած, ռոմանական լեզուի գործածութիւնը ընդհանրական դարձաւ: Երեք գլխաւոր պատճառք նպաստեցին նորա օգտին. Փարիզում հաստատուած արքայական պալատի ազդեցութիւնը, մայրաքաղաքի համալսարանի մնաւոր գործունէութիւնը և հոգևոր յեռոց Նորմանդացոց քաղաքական կարողութիւնը: Նորմանդացիք, Նեւստրիայի գեղեցիկ դքսութեան մէջ հաստատուելուց յետոյ, շուտով սեփականեցին տեղական լեզուն և իւրեանց յաղթող զէնքի զօրութեամբ ամէն տեղ տարածեցին նորան. Վիլհելմոս Նորմանդացին բռնութեամբ ներս բերեց Անգլիայի մէջ, Բուրգունդիոյ դուքսը և Շամպայնիայի կոմսը, մինը Թագաւոր դարձաւ Պորտուգալիայի, իսկ միւսը Նավարրայի, տարածեցին նորան իբերական թերակղզում: Այս լեզուն մուտ գտաւ Երուսաղէմի մէջ Գոդֆրուա դը Բոյեոնի ձեռամբ, Կոստանդնուպօլսում Ֆլանդրիայի և Կուրտենէի կոմսերի ձեռամբ: Վերջապէս կարողաց Անժուն տարաւ նորան Նէապոլիս:

Հիւսիսային Ֆրանսիան ունեցաւ նոյնպէս իւր երգիչները — troveors : Սոքա թէև այնքան նշանաւոր չեն քնարերգական բանաստեղծութեան մէջ, բայց գերազանց են պրովանսական բանաստեղծներից ուրիշ տեսակների մէջ: Առաջին կարգում դասումենք ասպետական վիպասանութիւնը, որ հիւսիսային բանաստեղծների ծնունդն է: Յետոյ երևումեն lais ասած համառօտ քերթուածները, որք պատմումեն նոյնպէս քաջալեզական կամ ուրիշ գրաւող դիպուածներ. Fabliaux, տաղաչափական զրոյցները ամենայն տեսակ նիւթերի վերայ, սրամիտ և զուարճախառն քերթուածներ: Սոցա կարգում կերպագործվումէ խրատական Առակախօսութիւնը, l' apologue : Դրամատիկեան բանաստեղծութիւնը արած էր արդէն նշանաւոր յառաջադիմութիւնք: Քնարերգական բանաստեղծութեան մասին պէտք է ասել, որ նորա մէջ երևում չէր ոչ կենդանի զգացողութիւն և ոչ ճոխ երևակայութիւն, բայց կարելի չէ խլել տաղերից և բալլադներից մի տեսակ քաղցրութիւն, անմեղութիւն և զուարճամտութիւն: Մի քանի ոտանաւոր, չոր ուցամաք և սառն ժամանակագրութիւնք տգէտ և դիւրահաւատ մատենագիրների փորձեր, են առաջին գործերը պատմագրութեան հանդիսում, որ Վիլհարդուէնի և Ժուանվիլի գրուածներով ստանումէ մի փառաւոր ասպարէզ:

Վիլհարդուէն (Villehardouin 1167—1213) պատմագրեց չորրորդ խաչակիր զինուորութեան արշաւանքը Կ. Պոլսոյ վերայ, որին և ինքն մասնակից էր: Ժուանվիլ

(Joinville, 1223—1317) Լուդովիկոս Թ-ի հետ գնաց Եգիպտոս և մինչև ի մահ հաւատարիմ բարեկամ մնաց այս բարեպաշտ թագաւորիս, որոյ պատմութիւնը գրած է նա: Վիլհարդուէնը իւր պատմութիւնը գրած է ԺԳ դարում, բայց նա ԺԲ դարու մարդ էր. նորա գրուածը պարունակումէ իւր մէջ վիպասանական ժամանակների հետքեր. Վիլհարդուէնի գրչի տակ Ֆրանսիական լեզուն իւր ծննդեան մէջ է, և նորա պատմութիւնը կարող է համարուիլ այս լեզուի արձակ զրութեան ամենահին յիշատակարանը: Վիլհարդուէն պատմագիր չէ, այլ մի անձն, որ ամենապարզ ոճով պատմումէ իւր գործածն ու տեսածը ականատես փորձով: Նա ցուցանումէ իւր գործերի մէջ այն ասպետական բարք ու վարքի իրականութիւնը, որոյ գաղափարական նկարագիրը պատկերացուցած են միջին դարու բոլոր վիպասանական բանաստեղծութիւնքը: Վիլհարդուէնից դէպի Ժուանվիլ անցանելով, կարծես թէ, մի ամբողջ դար կոխում ու անցանումես: Ժուանվիլ չէ միլոկ, քաջ և խոհեմ պատերազմական անձն, որ միայն իւր տեսածը մատենագրումէ առանց իւր անձնական կարծիքը մէջ խառնելու. նա միամիտ, զուարճամիտ զրուցասու է, որ ընթերցողն առաջև բացումէ իւր բոլոր յիշատակները, իւր անձը ներս է բերում պատմութեան մէջ, բայց ոչ թէ փառասիրութիւնից շարժուած, այլ այն վստահութենից և սիրոյից, որ այնքան յատուկ են Ֆրանսիացի մարդուն: Ժուանվիլի օրինակով սկըսումէ մի ամբողջ շարք թեթև գրուածների (mémoires), որ կացուցանումեն Ֆրանսիական պատմութեան առաւել պատուական յիշատակարանքը:

ԺԴ դարում Ֆրանսիան յանկարծ դադարումէ իւր մատենագրութեան ասպարէզի մէջ. անիշխանութիւնը, քաղաքական պատերազմը, օտարների արշաւանքը կեղեքումեն և աւերումեն նորան: Այս դարում երևումեն Փիլիպպոս Վալուայի և Յովհաննէսի թշուառ թագաւորութիւնքը. այս դարումն է, որ Կարոլոս Զ-ի անխելութիւնը, Իզաբոյի չարագործութիւնքը և անգլիական լուծը ծանրանումեն Ֆրանսիայի վերայ: Սոյն ԺԴ դարում Ֆէօդալեան ասպետքը վայր ընկնելով, փոխարկվումեն դէպի զանազան կրօնական և զինուորական կարգեր: Այս ժամանակի զրուածները ըստ մեծի մասին պատկանումեն եկեղեցական կամ առասպելական զրականութեանը, մեզ հանդիպումեն միշտ աստուածաբանական շատախօսութիւնք կամ զինաշարժութեան հանդէսների նկարագրութիւնք: Իսկ ժողովրդի մասնակցութիւնը զրականութեան գործին, երևումէ երգիծաբանական զրուածների մէջ, ուր յարձակվումեն ազնուականների յանդգնութեան և բռնակալութեան, մանաւանդ թէ հոգևոր դասու մոլութիւնների վերայ:

Յաջորդ ԺԵ դարում, Ֆրանսիան, կարծես թէ, փոքր ինչ շունչ է քաշում. ոչ միայն թշնամիքը դուրս են հալածվում աշխարհի սահմաններից, այլև Ֆրանսիայի արտաքին ազդեցութիւնը աճում ու զօրանումէ: Ընդհանրապէս խօսելով, ԺԵ դարը կլասիկական լեզուների մշակութեան դարն է. ամէն տեղ հաստատվումեն

հելլենական և լատինական լեզուների դաստիարակութեան ամբիոնք: Բաղմաթիւ բիւզանդացի ուսուցիչներ, 1453 ին Կ. Պոլիսը Ցաճիկների ձեռամբ նուաճուելուց յետոյ, ցրուեցան դէպ ի Եւրոպայի զանազան քաղաքներ և սկսան իւրեանց հին լեզուն ուսուցանել և ծանօթ կացուցանել մեծամեծ մատենագիրների գրուածքը: Բայց այն իրողութիւնը, որ ԺԵ դարումը բարձր ի գլուխ իշխումէ բոլոր միւսերի վերայ, այլև նշանակումէ միջին դարերի վերջը, այդ է Տպագրութեան արուեստի գիւտը. դրանով սկսումէ նոր ժամանակների քաղաքագործութիւնը իւր փառքով ու կարողութեամբ:

Թէպէտ այս ժամանակամիջոցում (ԺԴ—ԺԵ դարերում) Ֆրանսիական գրականութիւնը շատ դանդաղաքայլ է տակաւին, սակայն աշխատումէ նա ազատուիլ իւր սկզբնական ձևերի անկատարութիւններից: Լեզուն մաքրվումէ և ստանումէ հաստատութիւն. արձակ խօսքը պատուաւոր տեղ է գրաւում տաղաչափական խօսքին հաւասար. պատմաբանական գրուածները ցոյց են տալիս մեզ մարդի ընթացքը, դիտութիւնների յառաջադիմութիւնը և ժամանակի հոգին: Ուստի և այս գրուածքը պէտք է առաջին տեղը բռնեն մեր համառօտ ճառի մէջ:

Այս շրջանի առաջին պատմագիրն է Յովհաննէս Ֆրուասար (J. Froissart) որ գրեց մի ընդհանուր պատմութիւն 1322 թուականից մինչև 1400. մինչև այն ժամանակ պատմութիւնը մի տեսանելի միութիւն չունէր, այլ ցիր ու ցան էր Եւրոպայի ամենայն տեղերում: Ֆրուասար մի ամրոցից դէպ ի միւսը շրջելով, հաւաքումէ իւր պատմագրութեան նիւթերը: Արդարև, այսպէս յաջողուեցաւ նորան բաւական լեզուին տեղեկանալ անցքերին, սակայն նորա պատմութիւնը անկարգ և անոճէ. պատմագիրը չունի խորութիւն իւր հայեցուածքի մէջ, այլև չգիտէ ուղիղ դատել քաղաքական գործերը և ոչ իսկ կարողանումէ վաղ լաւից որոշել: Նորա միակ նպատակը երևումէ պատկերացնել արտաքին անցքերը և ամենևին ուշադրութիւն չէ ընծայում նոցա բարոյական խորհրդին, և մնումէ բաւական անընտրող դէպ ի մարդկային գործերի թիւրութիւնը: Սոքա են Ֆրուասարի պակասութիւնքը: Ահա նորա արժանաւորութիւնքը. նա պատմումէ զարմանալի կերպով, ճշմարիտ և կենդանի գոյներով նկարագրումէ պատմական անձինքը և անցքերը. եթէ նա խօսեցնումէ իւր պատմական անձներին, նոցա լեզուն իւրեանց բնաւորութեանը և ժամանակի սովորութիւններին բոլորովին համեմատէ: Ոճը համառօտ է, կենդանի և աննմանելի իւր պարզութեան մէջ, երբեմն ևս սուր և ազդու: Ֆրուասարի ժամանակագրութեան յառաջ տանողը է Մոնստրելէ (Monstrelet): Մոնստրելէ մատենագիր չէ, այլ հաւատարիմ դպիր դատարանի, որից կարելի է խրատ խնդրել, բայց ոչ նորա գրուածը ընթերցասիրել: Միակ բանով գերազանց է նա: Մինչև այն ժամանակ, պատմութիւնը առ հասարակ ուշադիր էր միայն եկեղեցու, թագաւորների և ազնուականների գործերին. բայց Մոնստրելէ և նորա ժամանակակից Դիւլքերք հանդիսացնումեն մարդկութեան մեծ դրամայի բեմի վրայ մի չորրորդ գործող անձն, որ է ժողովուրդը:

Սոցա հետ զհետէ յաջորդումեն այս պատմիչներս. Ժիւվենալ Դէզիւրսէն (Juvenal des Ursins), հեղինակ պատմութեան Կարոլոս Զ-ի. դա մի շատ մեծակշիռ յիշատակարան է, ուստի կարելի է ստուգապէս տեղեկանալ ժամանակի գործերին և և բարքին. Շատլէն և Օլիվիէ դը լա Մարշ, որք գրեցին նոյնպէս բուրգոնեան տան պատմութիւնը: Շատլէնի ոճը Ֆրուասարից աւելի դժուար և ծանր է, բայց և առաւել մաքուր և հաստատուն, թէպէտ յաճախ ընկնումէ փոքր ինչ հռետորական ոճի մէջ: Իսկ Օլիվիէ անհարթ ու անկանոն է, բայց գրաւող պատմիչ: Իւր ժամանակի անցքերի արտաքին կողմերը միայն գիտէ նա, և կարողս Ցանդուզնի հարսանեկան հանդէսների նկարագրութիւնը աւելի տեղ է գրաւում նորա գրքում, քան թէ այդ իշխանի միւս կեանքը: Մի այլ մատենագիր Ալէն Շարտիէ հասաւ մի այնպիսի ընտիր մատենագրական ոճի, որոյ օրինակը արձակ խօսքի մէջ մինչև այն ժամանակ ցոյց տուած չէր, ուստի և զարմանալի չէ, որ նորա ժամանակակիցները տուած են նորան մականունս "հայր Ֆրանսիական ճարտարախօսութեան":

Բայց որպէս և է, հաղիւ թէ ԺԵ դարու վերջում երևումէ Ֆրանսիայի առաջին ճշմարիտ պատմաբանը, Փիլիպոս դը Կոմին (Philippe de Commines), որոյ յիշատակարանքը պարունակումեն Լուդովիկոս ԺԱ-ի և Կարոլոս Թ-ի թագաւորութեան գործերը: Կոմին լիովին ճանաչումէ իւր ժամանակի մարդիկը և իրերը. նա ունի թափանցիկ հանճար, մարդի խորութիւն և ուղիղ դատողութիւն, որ չեն ամենեցուն սեփական: Ոճի մաքրութիւն և ճշդութիւն են նորա յատկութիւնքը: Կոմին, ինչպէս ինքն իւր բերանով խոստովանումէ "դիտնական կրթութենից զուրկ է", վասն որոյ խօսումէ բնական պարզութեամբ, և նորա թեքուն ու զօրաւոր լեզուն զարմանալի ազդողութեամբ բացատրումէ մտածութիւնքը: Բայց այս արժանաւորութիւնների հետ կից չեն հոգու ազնուութիւն և արդարութեան զգացումն: Նորա դատողութիւնը և դատողութիւնը ստորադրվումեն ոչ այնչափ բարոյականութեան, որչափ խոհեմութեան և գործերի յաջողութեան կշռի ներքոյ: Սակայն չէ պիտոյ մոռանալ, որ պատմագիրը կեցած է պալատական խարդախութիւնների և ապականութեան մէջ, այնպիսի ժամանակում, երբ կրօնական ու ասպետական եռանդը խոնարհեցնումէր գլուխը ազգային ու առանձնական օգուտների առաջև: Կոմինի պատմագրութեան նիւթը է Լուդովիկոս ԺԱ, որոյ կասկածոտ, խորամանկ և կատաղի բնաւորութիւնը զարմանալի ճշմարտութեամբ նկարագրած են: Կոմին բոլորովին օրինաւոր է համարում իւր տիրոջ խարդախութիւնքը և անզթութիւնքը: Նա հաւատումէ Աստուծոյ ինքնահաճ կամքի ազդեցութեանն առաւել, քան թէ պարտականութեան անժխտելի հրամանին և առաքինութեան սրբութեանը: Թող այս բարոյական անընտրողութիւնը, Կոմին գովութեան միայն արժանի է այն սրամտութեան համար, որով դատումէ մարդիկը և նոցա գործերը: Նա ցուցանումէ նշանաւոր անցքերի պատճառքը, դէպ ի լոյս է հանումէ այն շարժարանքը, որոց ազդեցութեան

ներքոյ ներգործումեն մարդիկ, մերկացնում նոցա դիտաւորութիւնքը և զարմանալի կերպով նկարագրում նոցա բնաւորութիւնը: Նա խորին կերպով զգում այն բանը, որոյ մէջ ամփոփուած է իշխանների զօրութիւնը կամ տկարութիւնը: Ձէնքի յաջողութիւնը չէ շլացնում նորա աչքը. պատերազմի մէջ նա տեսանում հապարակաց թշուառութիւնների գլխաւոր աղբիւրը: Այս պատճառով այնչափ ախորժելի չէ նորան նկարագրել պատերազմները. երբեմն պատահում նորան արհամարհութեամբ մի մեծ կռիւ ամփոփել մի միջանկեալ խօսքի մէջ: Նա աշխատում մանաւանդ որոշել և յայտնի կացուցանել զինուորական գործողութիւնների հետեւանքը և պատճառքը, ուստի յառաջացած էին նոքա:

ԺԵ դարում գիտութեան և փիլիսոփայական մտածութեան լեզուն դեռ ևս լատինականն էր: Բայց քանի մի գրուածներ բարոյական նիւթերի վերայ, ֆրանսիարէն են: Քրիստինէ, մի իտալացի կին Պիզա քաղաքից, գրեց մի գործ իշխանաց կանանց դաստիարակութեան վերայ, Ալէն Շարտիէ «Յուսոյ կամ երեք առաքինութիւնների մեխիթարութեան վերայ», որ ուղղեցուցած է ընդդէմ բարոյապէս այլանդակուած եկեղեցուն. Շատլէն Թոդեց մի գիրք «Երիտասարդ իշխանների կրթութեան» վերայ: Ուշադրութեան արժանի է թէ այս մատենագիրը ո՛րչափ աշխատում արդարացնել իւր անձը, որովհետև իւր գործը գրած էր ֆրանսիական լեզուով. նա գրժուարութեան մէջ է, ամաչում և մտածում թէ պէտք է զարմացք բերէր իւր ընթերցողների վերայ:

Բանաստեղծական գրուածներով այս ժամանակի շրջանը նախընթացի պէս արդասաւոր չէ: ԺԴ և ԺԵ դարերում, թէպէտ բանաստեղծը չէ տակաւին հասարակաց կարծիքի թարգման և իւր ժամանակի հայելին, այլև ասպետական կարգի կործանման հետ միասին կորուսած է իւր կշիռը. սակայն բանաստեղծական արուեստը կատարելագործվում է, լեզուն յստակվում և ճաշակը սկսում կազմակերպուիլ: Վիպասանական և քնարերգական բանաստեղծութեան արդասիքի հետ, այս շրջանի մէջ յառաջանում են և դրամատիկական գրուածներ, որոց մէջ թէպէտ շատ սակաւ ճարտարութիւն է երևում, սակայն դոքա ժողովրդական հոգու և զգացման ճիշդ յայտարարքն են:

Շատ հին ժամանակներում, ԺԴ դարում արդէն, սովորութիւն էր դարձած եկեղեցական հանդէսների հետ խառնել քանի մի կրօնական գրուածներ ժողովրդական բարբառով և խօսակցութեան ձևով: Այս գրուածներից կազմուեցան յետոյ փոքրիկ դրամաներ որոց «Հրաշք» (miracles) անուն տուեցին: Հրաշքները առաջի էին կացուցանվում եկեղեցիների դաւիթներում նոյն իսկ հոգևոր դասու պաշտպանութեամբ և օժանդակութեամբ: ԺԵ դարու մէջ, Հրաշքների հետ միացան խորհուրդք (mystères) ասած գրուածները, Քրիստոսի և նշանաւոր սուրբերի կեանքից հանած, որ սկսան յանդիման կացուցանել արդէն կարգաւորուած թատրոնական բեմի վերայ: Առաջին թէատրոնը շինուեցաւ Փարիզում 1402 ին: Այնուհետև «խորհուրդները» կամաց կամաց ստացան այնպիսի ընդարձակութիւն, որ հարկ եղաւ մի և նոյն գրուածի յանդիմանադրութիւնը շատ օրերի վերայ բաժանել: «Առաքելոց Գործոց» խորհուրդը քառասուն օրերի վերայ էր բաժանվում: Թատրոնական խաղարկուների թիւն ևս անդադար փոխվում էր, միտ դնելով գործողութեան տևողութեանը: Մի խորհուրդը պահանջում էր միայն 15 կամ 20 խաղարկու անձինք, միւսը մինչև 500: Նոյն իսկ թատրոնական բեմը անդադար փոխակերպվում էր, հետ ղհետէ պատկերացնելով երկինք, երկիր և դժոխք:

Հասկանալի է, որ այս չափազանց ընդարձակ գրուածքը արուեստի մասամբ պիտի շատ անկատար լինէին: Կրօնական նիւթեր պատկերացնելով բեմի վերայ, բանաստեղծների խորհուրդն էր ժողովրդին յանդիման կացուցանել աւելի խրատական քան թէ դրամատիկական նիւթ պարունակող տեսարաններ: Մի՛այն մինը այս գրուածներից կազմում բացառութիւն, այն է, Զարչարանքի խորհուրդը (le Mystère de la Passion) որոյ նիւթը Աւետարանիչներից հանած, միաւորում սրբազան յատկութեան հետ մի շատ սրտաշարժ գործողութիւն: Այս դրամայի ամենահին ձեռագիրը ունէր 4000 տաղաչափական տող. այս թիւը հասանում մինչև 67,000, միւս օրինակներում, որ կազմած էին մօտ 1486 ին: Իւրաքանչիւր նոր մատենագիր աշխատում էր լրացուցանել այս մեծ դրաման, որպէս զի նա վերջումը պարունակում մարդկային ազգի փրկութեան և Քրիստոսի պատմութիւնը ամբողջութեամբ:

Կրօնական դրամաների հետ, վաղ ժամանակից սկսած էին ծագիլ ուրիշ թատրոնական գրուածներ աւելի թեթև բովանդակութեամբ, ոմանք հովուականք, միւսերը կատակերգականք: Այս վերջին տեսակը ԺԵ դարումը արագ քայլերով ընդարձակութիւն ստացաւ. հետ ղհետէ սկսան երևիլ Sotties, Moralités և Farces ասած թեթև գրուածները:

ԺԶ դարը ամենայն մասամբ յառաջադիմութեան դար է, մի դար, երբ դաղափարքը և իրքը ցուցանում ոգևորութեան և նորոգութեան հանդէս, դար խորհրդածութեան և գործունէութեան, մեծամեծ կռիւների և մտածութիւնների, զարմանալի յեղափոխութիւնների և հակայական անձնաւորութիւնների, մի դար, որ կարելի է համեմատել միայն քրիստոնէական կրօնի հաստատութեան ժամանակի հետ: Սակայն Ֆրանսիան, որ միջին դարերում կազմում էր մի միջնակէտ, ուստի արտաբղխում ամենայն մեծագործութիւն, Ֆրանսիան որ ծնունդ տուեց խաչակիր զօրքի արշաւանքին, որոյ զրականութիւնը օրինակ էր իտալական զրոյցներին և Անգլիայի ասպետական քերթուածներին, Ֆրանսիան, ասում ենք, ԺԶ դարում մի կրաւորական պաշտօն է լրացուցանում. ոչինչ բան չէ ծնում այն տեղ. ամեն բան դուրսից ներս է մտանում: Մտաւորական վերածնութիւնը յառաջանում Իտալիայում, կրօնական վերանորոգութիւնը Գերմանիայում. Ֆրանսիան ընդունում թէ մինը և

թէ միւսը. բայց նա գործ է դնում առաջինը, իսկ երկրորդը հասուցանում է իւր վերջին հետևութիւններին: ԺԶ դարու հոգին հասկանալու համար, պարտ է յետս դառնալ դէպ ի այն կէտը ժամանակի, երբ Ֆրանսիայի թագաւորները անցան Ալպեան սարերը, երկրայական ժառանգութիւնք և երևակայական ստացուածք ձեռք բերելու համար: Նոքա դտան Իտալիայում ինչ որ խնդրած չէին, այսինքն զեղեցկութեան ճաշակը և զգացողութիւնը, որ պիտի հասուցանէին ֆրանսիական հողուն աւելի էական ստացուածք: Այն մանուկ աղնուականքը, որ շրջապատում էին Կարոլոս Ը-ի անձը, երաղումէին միայն զեղեցիկ Իտալիան, նորա ճոխութիւնը և նորա քաղցրութիւնը: Հարաւի մեղմ ու պայծառ եղանակը և նորա շքեղ բնութիւնը էր մի նոր աշխարհ ճարտարութիւնների "երկաթով ու տգիտութեամբ պատած" հիւսիսի զաւակների համար: Արդէն իրրև նախապատուղք այս բաղդաւոր յեղափոխութեան կարողս Ը-ը բերում է իւր հետ ցովհ. Լասքարիս և մի քանի ուրիշ ճարտարապետք: Լուդովիկոս ԺԲ-ի օրերում, այս շարժողութիւնը բերեց իւր առաջին արդասիքը: Կարդինալ Գէորգ Դ' Անբուազը հիանալով Բրամանտէի և Լէոնարդօ դը Վինչիու վըսեմանալնծ արարչութիւնների վերայ, դառնում է միջնակէտը նոր շարժողութեան և տալիս է ազդարար նշանը, թէ դալոց է ֆրանսիական ճարտարապետութեան ամենազեղեցիկ դարերից մինը: Ֆրանցիսկոս Ա-ը ժառանգեց իւր նախորդների ճաշակը: Ինքը, իտալական կրթութիւն և ճաշակ ստացած լինելով, ամեն տեսակ հնարներ գործ դրեց դրաւելու և դէպ ի Ֆրանսիա փոխադրելու Իտալիայի յոյն և տեղական ուսումնականները և ճարտարապետքը, մի քանիսը դոցանից պատուի և աստիճանի հասուցանելով, միւսերին թոշակ և ռոճիկ կարդելով: Լէոնարդօ դը Վինչի հոգին աւանդեց նորա դրկի մէջ: Ռաֆայէլը իւր հրաշալի պատկերներից մի քանիսը ընծայ ուղարկեց թագաւորին: Եւ ոչ այսչափ միայն. այլև Ֆրանցիսկոսը կամեցաւ մի դպրոց գիտութեան բանալ (College de France), որոյ համար Իտալիայից պրոֆեսսորներ բերել տուեց երրայական լեզուի, փիլիսոփայութեան և բժշկականութեան: Ֆրանսիայի տպարանքը ելևելք էին առնում Իտալիայի տպարանների հետ, հրատարակելով կլասիկական հնութեան մատենագիրքը, և երրայական, յոյն և լատին քերականութիւնների թիւը օրէ ցօր բազմանում էր:

Կրօնական վերանորոգութիւնը մտաւորական վերածնութեան հետ միասին ստացաւ իւր առաջին կենսական սերմը այն ժամուն, երբ մարդկային իմացականութիւնը զարթած էր իւր բազմադարեան քնից: Այս երկու եղբայրակից զօրութիւնքը, որ կերպարանափոխ են արած ժամանակը և ստեղծած են նոր օրերի կերպութիւնը, երկար ժամանակ հաւասար քայլերով յառաջ գնացին, թէպէտ և իւրաքանչիւրը նոցանից պահում էր իւր յատուկ գոյութիւնը և իւր մասնաւոր ձրգտողութիւնը: Մարդկային իմացականութեան կարիքը էր միայն սկզբում, սատակ նորանոր ծանօթութիւնք, և նա հոգեզմայլուած գործ դրեց ամենայն ջանք լցուցանելու այդ կարիքը: Հնութեան գրուածքը դարձան դասախարակիչքը այս նոր սերունդների, որ ծարաւի էին գիտութեան. բայց այս ուսումնասիրութիւնքը օժանդակելով զարդացուցին շատ զանազան տրամադրութիւնք: Ոմանք դադարեցան, մընացին հնութեան մէջ, որ փոքր ինչ յառաջ պարդևած էր նոցա լոյս, և արբեցան նորա գրուածների, նորա լեզուների, նորա կրթութեան բոլոր յիշատակարանների սիրով. միւսերը, զօրաւոր սնդառութեամբ զարդացած, գործ դրեցին իմացականութիւնը, քննելու իւրեանց մտատանջութիւնքը, որոց նիւթը երկար ժամանակ էին միայն մարդուս վիճակը և կրօնի մեծամեծ խնդիրքը: Առաջինքը ջանահնար էին միայն նորոգել հնութեան դպրութիւնքը. յետիններս կամէին միայն նորոգել, ներկայի մոլորութիւնը յայտնի կացուցանելու և խնդրելու ճշմարտութիւնը իւր աղբիւրների մէջ: Այսպէս ահա, մտաւորական վերածնութիւնը առանց հասկանալու հնութեան բուն խորհուրդը, պատրաստում էր նոր կապանք մարդուս իմացականութեանը. կրօնական վերանորոգութիւնը չհրաժարանալով կլասիկական դպրութեան ուսումնասիրութեամբ, թօթափեց (թափ տուաց) պապլուծը. իւր համարձակ քննութեամբը և գրուածներով նա խորտակեց այդ շղթայի քանի մի, չափից դուրս ճնշող օղակները, որովք վերածնութիւնը սկսած էր կաշկանդել նոր աշխարհը. և եթէ այն օգուտը, որ բերած էր հնութիւնը նոր ժամանակի կրթութեանը, վըճարուած է քանի մի զրկանքով, այնու ամենայնիւ նա եղած է մեծ և այնքան բաղմապարունակ, որ արժէր դոնեայ իւր հատուցած գինը:

Վերևում ասած խօսքերից երևում է, թէ ինչ մեծ շարժողութիւն պիտի ներս մտանէր ֆրանսիական գրականութեան ու կեանքի մէջ, ԺԶ դարումը: Ֆիլօլոգիան (բանասիրութիւնը), մեկնութիւնները, թարգմանութիւնները, ճարտասանական և քերականական գրուածները, բանաստեղծութիւնը (մանաւանդ վիպասանականը և քնարերգականը), ճարտարախօսութիւնը, պատմութիւնը, փիլիսոփայութիւնը և քաղաքական գիտութիւնքը այնքան առատ արդիւնք են գործած, որ մեք անհնարին ենք համարում բոլոր մատենագիրների վաստակքը յիշել մեր համառօտ ճառի մէջ. վասն որոյ կամինք մէջ բերել այս տեղ պարագլուխ հեղինակները միայն:

ԺԴ դարու վիպասանական բանաստեղծութեան նահապետը համարվում է Բաբլէ (Rabelais 1483—1552): Բաբլէ կանուխ արդէն ուսանում է լատինական, յոյն և երրայական դպրութիւնքը, ծանօթանում է իտալական, սպանիական, գերմանական և արաբական լեզուներեն, հետ զհետէ գրում է մեկնութիւններ Հիպոկրատէսի գրրուածների վերայ և բազմաթիւ բոժաններ, և անդադար ճանապարհորդում է այս տեղ ու այն տեղ. լինելով յառաջ ֆրանցիսկեան, յետոյ բենեդիքտեան կարգի կրօնաւոր, հրաժարվում է վանական կեանքից և դառնում է բժիշկ, կրկին անդամ մըտանում է բենեդիքտեան կրօնաւորների կարգը, լինում է կանոնիկոս և մեռանում իբրև Մեօտոնի երէց: Բաբլէի գլխաւոր գրուածն է Գարգանտիւայի և Պանտագրիւելի

կեանքը (Vie de Gargantua et de Pantagruel) : Այս գրուածով մասնաւորապէս ԺԶ դարու ընդարձակ ասպարէզը և սրամիտ ու թեթևահաւատ ամբոխի ծափահարութեան ներքոյ ծաղրէ առնում իւր թեթևահաւատ դարու բոլոր կարծիքները, բոլոր յիմարութիւնները. աշխարհական և հոգևոր մեծաւորքը, վնասակար և օգտակար սովորութիւնները, գիտութիւնը և ագիտութիւնը, ամբարշտութիւնը և բարեպաշտութիւնը աղատ չեն մնում նորա երգիծաբանութենից: Բաբլէ խառն ճառագրում է իւր ծաղրալից վէպքի մէջ իւր անձնական փորձերը, իւր թափառական կեանքի յիշատակները և ուսումնականի փիլիսոփայական խորհրդածութիւնքը: Մատենագիրը մեծ հարուած հասուց մանաւանդ հռոմէական եկեղեցուն, ոչ թէ միայն բարձրակարգ հոգևորների և վանական կեանքի անբարոյականութիւնը նկարագրելով, այլև կաթոլիկութեան վերայ յարձակուելով: Լեզուի կողմից, Բաբլէ իւր քանի մի ժամանակակիցների հետ մեծ արդիւնք բերեց ֆրանսիական արձակ խօսքին. նա ճոխացրեց լեզուն, հին լեզուներից փոխ առած ձևերով և դարձուածներով, և զարմանալի ճարտարութեամբ հարստացրեց հին ժողովրդական լեզուի գանձը: Բաբլէի ոճը, նորա երևակայութեան պէս, անհաստատ ու փոփոխական է. երբեմն թեթև ու ծաղրալից, երբեմն ծանր և վսեմախօս: Նա գրեթէ միշտ չափազանցութեան մէջ է ընկնում. եթէ ծանր և հանդարտ է, ամբոխին անհասկանալի է, իսկ հեշտմայ և ընտանի, խօսակցութեան մէջ. նա տալիս է ժողովրդին այն, ինչ որ փոխ էր առած նորանից: Բաբլէի հետևողները, ցաւելի է ասել, օրինակեցին միայն իւրեանց գաղափարի նուաստ և ստորին յատկութիւնքը:

ԺԶ դարու առաջին կիսամասի փառաւոր անձնաւորութիւններից մին էր նոյնպէս Կլէմենտ Մարօ (Clement Marot). Ֆրանցիսկոս Ա-ը բարձրանալով դէպ ի թագաւորական գահը, և ահա ամէն կողմից հեղեղուեցան նորա վերայ բանաստեղծների բարեմաղթութիւնքը. մի բանաստեղծի որդի և արքայական մանկաւիկ քսան տարու հասակում մատուց իւր Տիրոջը "Սիրոյ տաճար„ (le Temple de Cupido) անունով մի հաւաքածոյ տաղաչափութիւնների. այդ բանաստեղծն էր Մարօ, որ հետևելով իւր հօր և միւս ժամանակակից բանաստեղծների օրինակին, հիմնում է իւր բանաստեղծութիւնը հին դիւցաբանութեան վերայ. բայց այդ այլաբանութիւնը նոր կենդանութիւն է ստանում բանաստեղծի զուարթ երևակայութեան և թեթև գրչի տակ: Իբրև աջողակ պալատական, իւր հաւաքածոյի ընծայաբերութեանը կից մի տաղաչափութեան մէջ նա ջատագովում թագաւորին իբրև արքայական զբօսանք գինուորական վիճակի վայելչութիւնքը և սիրոյ յաղթութիւնը: Այնու ամենայնիւ Մարօ մեծ հանճարի տէր չէր. նա չունէր այն զօրաւոր իմացականութիւնը, որ արագաթռիչ թևերով թռչում անցանում է, յետս թողնելով իւր դարը:

Մարօյից չատ աւելի նշանաւոր է Ռոնսար (Ronsard), որ յիսուն տարի անընդհատ խլեց ֆրանսիական բանաստեղծութեանը, առանց որ և իցէ հակառակորդ դտանելու: Ռոնսարի մանկութիւնը և երիտասարդական տարիքը ցուցանում են զարմանալի գործունէութիւն: Ինն ամեայ հասակում, զղուելով ուսումնարանից, դարձաւ պալատի մանկլաւիկ և յանձն առաւ զանազան ճանապարհորդութիւնք, որոց հետևանքը եղաւ ծովային նաւաբեկութիւնների, պատերազմների և ամենայն տեսակ պատահարների ծանօթութիւն: Տասնեւինամեայ հասակում յանկարծ խրախուսում նա, և այս դժբաղդ վիճակին պարտական է Ռոնսար իւր փառքը, իսկ Ֆրանսիան—իւր երևելի բանաստեղծը: Կրկին աշակերտուելով դպրոցի, եօթն տարի պարապեցաւ նա ուսման և յետոյ մնաւ պալատը, ուր շուտով բանաստեղծների իշխան կոչուելու արժանի համարուեցաւ: Այնուհետև Ֆրանսիայից դուրս և բոլոր քաղաքագործուած Եւրոպայում հռչակուեցաւ Ռոնսարի անունը. 1571 ին Տասսոն Փարիզ գալով, բաղդաւոր համարեց իւր անձը, ծանօթանալով ֆրանսիացի բանաստեղծին: Երբ որ մեռաւ Ռոնսար, բոլոր Ֆրանսիան ողբաց իւր սիրելի բանաստեղծի մահը, դամբանական ճառեր ասուեցան, մարմարիոնեայ արձաններ կանգնուեցան և, կարծես թէ, բանաստեղծի անունը պիտի յաւերժանար աղդի մէջ ոչ այնքան նորա Ֆրանսիադ (Françiade) կոչուած վիպասանական բանաստեղծութեամբ, որքան անաքրէոնեան ուրախ երգերով:

Սակայն այդ փառքի տաճարը շուտով կործանուեցաւ, և առաջին հարուած տուողը եղաւ Մալհերբը (Malherbe) որ թէպէտ և Ռոնսարի պէս արդասաւոր և կարող չէր, բայց աւելի աջողակ և խելացի: Մալհերբի սեփական արժանաւորութիւնը և փառքը այն եղաւ, որ նա ազատեց ֆրանսիական լեզուն օտար լեզուների սարկական հետևողութենից, իսկ բանաստեղծութիւնը հին դիցաբանութենից: Ափսոս միայն, որ ձևի հետ երթալով, մոռացաւ նա բովանդակութիւնը: Բանաստեղծութեան մէջ տեսանում է Մալհերբը ոչ միայն. նա ինքն կոչում է իւր անձը վանկերի կազմող (arrangeur de syllabes). Նորա ձայնը երբէք չէ զարթեցնում որ և իցէ խորագոյն կամ հոգուն շատ սիրելի և քաղցր մտածութիւնք: Նորա միակ տաղաչափութիւնը, որոյ մէջ գտանում ենք վայելչութիւն և զգացողութիւն, է այն, որ նա գրած է Դիւպերրիէի դստեր մահուան վերայ. այլև այն տաղերգութիւնը որ ուղղեցուցած է առ Լուդովիկոս ԺԳ, երբ սա ուղևորվում էր դէպ ի Բօշել. միայն թէ գրքա մէջ կրօնական անհաշտողութիւնը և մոլեռանդութիւնը չգնէին արատի կեղտ Մալհերբի յիշատակի վերայ:

Դրամատիկական գրուածները ուշադրութեան արժանի են այն բանով, որ այս վերածնութեան դարում բանաստեղծները չեն բաւականանում անցեալ դարու սրբազան, հովուական և թեթև կատակերգական գրուածների նիւթերով, այլ դիմում են դէպ ի հին կլասիկական աղդերի և մինչև միջին դարու կեանքը: Սակայն նոցա գրուածքը արարչութենից և ճարտարութենից զուրկ լինելով, արժանի չեն մանրամասնեայ տեսութեան:

Ճառենք այժմ ճարտարախօսութեան և փիլիսոփայութեան վերայ։

Ֆրանսիայի մէջ կրօնական վերանորոգութեան հեղինակը է նոյն և ամենամեծ ճարտարախօսը ԺԶ դարու, որ ոչ միայն կենդանի խօսքով յառաջացրեց մի ամբողջ ազգի բարոյական վերակենդանութիւնը, այլև իւր գրուածներով մեծապէս արդիւնաւորեց դուռանուեցաւ լեզուի մշակութեան հանդիսում։ Կալվինի քարոզները ճարտարախօսութեան մի մի գեղեցիկ օրինակներ են, բայց նորա մատենագրական պարծանքը հաստատուեցաւ այն գրուածով, որ ասվում է Institution de la Religion chretienne, իսկ նորա որպէս աստուածաբանի պարծանքը «Commentaires sur l'Ecriture sainte» գրքով։ Առաջին գործի մէջ երևում է հեղինակի բոլոր բնաւորութիւնը, Կալվինի ճարտարախօսութիւնը չէ շարժում մարդկային զգացողութիւնը շնորհալից և գթառատ խօսքերով, այլ գրաւում է ազդու և զօրաւոր պատճառաբանութեամբ. այսինքն, նա ներգործում է ոչ սրտի, այլ մտքի վերայ։ Մատենագիրը երբէք ջանադիր չէ փայլել. նորա ոճը ամիսի ու ազդու է, ամենայն տեսակ աւելորդաբանութենից հեռի։ Իւր քարոզների մէջ նա միշտ վկայութիւնք է բերում Աւետարանից և երբէք դիմում չէ դէպի արտաքին, հին մատենագիրների վկայութիւնքը, թէպէտ զարմանալի աջողակութեամբ և գեղեցիկ գրում էր լատիներէն, այնպէս որ, եթէ նոր ժամանակի մտքերը չլինէին, կարծելու էիր թէ մի հին մատենագրի գործ ունէիր քո աչքի առաջև։

Փիլիսոփայութեան և առհասարակ ԺԶ դարու ամենամեծ հանճարը Ֆրանսիայում իրաւամբ համարվում է Մօնտէյնը (Michel de Montaigne)։ Որպէս նորա գրեթէ բոլոր ժամանակակից երևելի մարդիկը, Մօնտէյնը չէ մեծարուած արժանապէս իւր կենդանութեան օրերում. միայն ԺԸ դարու մատենագիրքը խոստովանում են նորան իւրեանց նախորդը և հայրը։ Մօնտէյնը ծնաւ 1533 ին. հայրը մի զարմանալի կրթութիւն տուեց նորան. սանտուի մօտում մանուկ Մօնտէյնը ունէր մի գերմանացի ուսուցիչ, որ միայն լատիներէն էր խօսում նորա հետ. այդպէս վարվում էին նորա հետ իւր բոլոր շրջակայքը, այնպէս որ նա իւր վեցամեայ հասակում խօսում էր լատիներէն իբրև իւր մայրենի լեզուն։ Իսկ յունարէնը նա աւելի անդան սկսաւ ուսանել և այս պատճառով այդ լեզուին երբէք չհմտացաւ կատարելապէս։ Մօնտէյնը լինելով զինուորական միանգամայն և աշխարհասէր մարդ, տեսաւ պալատը և ծանօթացաւ իւր ժամանակի գրեթէ բոլոր երևելի մարդերին։ Սակայն լինելով այնպիսի բնաւորութեան տէր մարդ որ կարող չէր ճակատը դէմ դնել քաղաքական փոթորիկներին, առանձնացաւ և ապրում էր միայն, ունելով իւր կենակից իւր գրեանքը և իւր անձը։ Այն ժամանակ, գրականութեան և քաղաքագիտութեան մէջ իւրաքանչիւր ոք ասում էր "Ես ամենայն ինչ գիտեմ"։ Բայց Մօնտէյնը ընտրում է իւր համար այսպիսի առած. "Ի՛նչ գիտեմ ես". ոչ թէ մի բացարձակ պիրհոնականութիւն, այլ մի սկեպտիկուութիւն, որ քարոզում է խղճի ազատութիւնը։

Մոնտէյնը թողեց մի ընդարձակ բարոյական և փիլիսոփայական գրուած "փորձք" (Essais) անունով, որոյ մէջ նկարագրում է մարդս այնպէս, որպէս է նա ամենայն տեղ, և, իւր նպատակին հասանելու համար, սկսում է քննել իւր անձը։ Մօնտէյնը սահմանում է մարդս իբրև մի "շարժուն և բազմօրինակ էակ" (un être ondoyant et divers). Նա քննութեան ներքոյ է ձգում մարդկային բնաւորութեան բոլոր կողմերը։ Բարոյական խորհրդածութիւնների, պատմական փիլիսոփայական և կրօնական քննասիրութեան մասին, նորա "փորձերի" գիրքը, լցէ թէ, չէ այնքան նորաղիւտ ըստ մտքին, բայց նոյնքան և նորաղիւտ է ըստ ձևին։ Մօնտէյնը մի կամաղաշտ և խոռին մտածող է, որ հետ զհետէ խօսում է բանաստեղծութեան, բժշկականութեան, բնագիտութեան, կրօնքի և բարոյականութեան վերայ, իւր հաճոյքին և կամքին հետևելով։ Երևակայութիւնը Մօնտէյնի ոճի գլխաւոր յատկութիւնն է, և նորա պատկերների երանգները այնպէս կենդանի են, որ կարծես թէ ընթերցողն մատնով շօշափել է տալիս նկարագրելի նիւթը։ Նորա գրուածների մէջ հաճութեամբ զգում է մարդ Ֆրանսիական խօսքի հնութիւնը մանաւանդ, որոյ մէջ հանդիպում են նորան հին Ֆրանսիական լեզուի համարձակ և համեմային ձևերը, ազատ և թեթևաշարժ ընթացքը. բայց եթէ մտածենք թէ որչափ հանճար հարկաւոր էր և թէ ինչ դժուարութիւնների պէտք էր յաղթել, մինչև այդ աստիճան կոկելու և վայելչացնելու մի ոճ, որ մինչև այն ժամանակ անծանօթ էր—այնուհետև ընթերցողի հաճութիւնը փոխվում է դէպի զարմացք։

Ինչպէս վերոյիշեալ պարագլուխ մատենագիրքը, ամենքը իւրեանց տեսակում հեռևողներ գտան, նոյնպէս և Մօնտէյնը, որոյ հետևողքը եթէ ոչ ձևի, գոնեայ բովանդակութեան մասին մօտենում են նորան։ Այսպէս են Էթիեն դը լա Բոեսի, բարեկամը Մօնտէյնի, Շարոն աշակերտը նորա և Բոդէն։

Պատմագրական և յիշատակագրական գործերը առատ են այս դարում, բայց այս հանդէսներում մեծ յառաջադիմութիւնք չերևցան։ ԺԶ դարու առաջին պատմագիրն է Օգոստինոս դը Թու, սակայն և նորա գրուածը «l'histoire universelle» (համաշխարհական պատմութիւն), ձևի կողմից պակասաւոր է, որովհետև գրած է լատիներէն։ Աւելի նշանաւոր են այս դարու Ֆիլոլոգիական վաստակները. Գուլիելմոս Բիւդէի, Սկալիգերի և Կազաբոնի անունները միշտ կը յիշուին Ֆրանսիական ըղձրութեան տարեգրքի մէջ։

Լուդովիկոս ԺԴ-ի դարը այնպիսի պայծառ լուսով փայլում է Ֆրանսիական պատմութեան մէջ, որ սովորած են համարել այս թագաւորը այն միջնակէտը, ուր ձգտում էին ԺԷ դարու բոլոր մատենագիրքը. բայց այդ սխալ կարծիք է, թէպէտ շատ ներելի։ Գրականութիւնը չէր կարող օտար մնալ այն նշանաւոր փոփոխութիւններից, որ կատարուեցան քաղաքական աշխարհում Հենրիկոս Դ-ի մահուց (1610) մինչև Լուդովիկոս ԺԴ-ի թագաւորութիւնը (1661)։ Հենրիկոս Դ-ի կրօնական ան-

խորողութիւնը յարդարելով այս իշխանի ճանապարհը դէպ ի արքայական գահը, յառաջացուցել էր խաղաղութեան պայմանքը պատերազմից ձանձրացած բաժիններին մէջ: Բավայեաքի չարագործութիւնը դարձեալ բացեց կրօնական ախտերի ասպարէզը և բորբոքեց Երեսնամեայ պատերազմը: Մարիամ Մեդիչիու փոխանորդական խնամակալութիւնը և Լուդովիկոս ԺԳ-ի չափահասութեան առաջին տարիները լի էին խռովութեամբք և դայթակղեցուցիչ գործերով: Վան վերադառնալու դէպ ի կարգը տէրութեան մէջ, դէպ ի այն մեծամեծ խորհուրդքը, որ ամրացնումեն թագաւորութիւնները, պէտք էր, որ մի մեծահանճար մարդ դարձեալ կապէր և նորոգէր ընդհատած (մէջից կորած) շղթան. այդ մարդը եղաւ կարդինալ Ռիշելիեօ. Սա ամրացուց Ֆրանսիական միապետութիւնը և պինդ կապերով միաւորեց միմեանց հետ այդ ընդարձակ տէրութեան բոլոր հերձուածքը: Մի ճարտար իտալացի Մազարէն անուն, ժառանգելով Ռիշելիեոյի առաջնորդական կանոնքը, պահպանեց կարգադրութիւնքը այնպէս, որպէս նա դտած էր: Սորա ժամանակում կատարուեցաւ ԺԷ դարու առաւել նշանաւոր անցքը. խօսքս Վեստֆալեան խաղաղութեան վերայ է (1648) որ հիմք ձգեց նոր Եւրոպայի հրապարակական իրաւունքին, և Աւստրիայի քաղաքական դերակշռութիւնը փոխադրեց դէպ ի Ֆրանսիա: Թէպէտ նոյն դարու մէջ ծագեցաւ մի այլ քաղաքական պատերազմ Ֆրանսիայում, որ յայտնի է պատմութեան մէջ անունով Ֆրոնդ (la Fronde), բայց շուտով վերսին հաստատուեցաւ խաղաղութիւնը, և միապետական իշխանութիւնը, որ այնքան քաղաքական պատերազմների և ազգի տկարութեան աղբիւր էր դարձած, նոր զօրութիւն ստացաւ: Այնուհետև սկսումէ այն փառաւոր շրջանը ժամանակի, որ իրաւամբ կոչուած է Լուդովիկոս ԺԴ-ի դար: Այս իշխանի պատմութեան մէջ ամփոփվումէ բոլոր Եւրոպայի պատմութիւնը: Ֆրանսիան այն ժամանակ կազմումէր մի կենտրոն, որոյ շուրջ պտոյտ էր գալիս ամենայն բան. նորա թագաւորը քաղաքական և մտաւոր գործողութեան գլխաւոր շարժարանն էր: Քննենք այս տեղ քաղաքականութեան ազդեցութիւնը գրականութեան ընթացքի վերայ:

Լուդովիկոս ԺԴ-ի և Ռիշելիեոյի օրերում երկու նշանաւոր ընկերութիւնք արդէն հաստատուած էին Փարիզում. մինը, Ֆրանսիական Ակադեմիան վասն մշակութեան և պահպանութեան Ֆրանսիական լեզուի, միւսը—Բամբոյլէի պալատը (l'Hôtel de Rambouille), մատենագիրների և վերին հասարակութեան ժողովատեղին, Այս վերջին ընկերութեան կենդանութիւն տուողքը կանայք էին (les précieuses) որ եղելք առնելով միմեանց հետ աշխատումէին փայլել, և այս պատճառով կամաց կամաց մի նոր լեզու ստեղծուեցաւ, որ հասկանալի էր այս ընկերութեան անդամներին միայն: Փարիզը դոցա լեզուով ասվումէր Ամէնք, Նոթր Դամ կղզին—Դելոս, Լէոն քաղաքը—Միլետ. Եքսը Կորնթոս, Ֆրանսիան—Յունաստան: Լուդովիկոս ԺԴ անուանվումէր Ալէքսանդր, Ռիշելիեօն դարձած էր Սենեքա և Մազարէնը

Կատոն: Արդարև մեծ էր այս ընկերութեան կշիռը իւր հիմնարկութեան սկզբում, բայց Լուդովիկոս ԺԴ-ի թագաւորութեան օրերում այդ ընկերութիւնը ըստ մեծի մասին կորուս իւր ազդեցութիւնը, և մտաւոր շարժողութեան կենտրոնը դարձաւ թագաւորական պալատը: Այն մարդը, որ ասած էր "Տէրութիւնն ես եմ" (l' Etat c'est moi), կարողացաւ ասել նոյնպէս "Իմ դարու ճարտարութիւնքը, դպրութիւնը, միտքը ես եմ": Նախ թագաւորանիստը տեղափոխվումէ Լուվրից դէպ ի Վերսայլ, Հարդուէն Մանսար շինումէ այն ընդարձակ պալատը, որ յայտնումէ աշխարհին Լուդովիկոսի թագաւորութեան խորհուրդը, փառաւորութիւնը, անչափելի և անգութ անձնապաշտութիւնը: Լըբրեօն ճարտարապետը զարդարումէ նորան նկարներով և բերումէ դնումէ բոլոր Ոլիմպոսը իւր տիրոջ ոտքի մօտ. ոչ մի տեղ չէ երևումէ Ֆրանսիայի պատկերը. Լը Նոթրը ստեղծումէ այս արքայական բնակարանի համար մի դաշտավայր, ուր ծառերը աճումեն քանոնով և անկիւնաչափով միայն. հաղարաւոր դիցաբանական արձաններ, որովք զարդարվումէ նա, աստուածագործումեն և փառաւորումեն նորա սիրակցութիւնքը: Լուդովիկոս իւր պալատականների, որպէս և իւր պալատի հոգին է. նա է, որ ներշնչումէ քաղցրութիւն և խմացականութիւն կանանց, քաջութիւն և քաղաքադիտութիւն պատերազմական մարդերի մէջ: Նորա մի հայեացքը կեանքի կամ մահու դատաքնիք է իւր պալատականներին: Սորանից հեշտ կարելի է դուշակել թէ ինչ բնաւորութիւն պիտի ստանար գրականութիւնը այդպիսի թագաւորի իշխանութեան ներքոյ: Աւելի քան թէ կլասիական, իտալական և սպանիական ազդեցութիւնքը, ծանրացաւ նորա վերայ արքայական պալատի լուծը: Դէկարտի և Պասքալի հպարտ ազատութիւնը պիտի տեղի տայ իշխանական զօրութեանը: Ֆրանսիական լեզուի այնքան հին պիտոյքը, այսինքն պարզութիւն և ճշդութիւն, պիտի ամենին յաղթող հանդիսական արձակ գրուածների մէջ, բայց բանաստեղծութիւնը պիտի պայմանական դառնայ: Բանաստեղծներից պիտի պահանջուի պարզ և ընտիր լեզուախօսութիւն: Արքայական պալատը, որ դատաւոր է նոցա վերայ, համարելով իւր անձը ամենակատար օրինակ մեծութեան և վայելչութեան, ախտաբորբոք կրակը Ողբերգութեան մէջ և հոգեմայլութիւնը Տաղերգութեան մէջ պիտի ստորադրուին այն կանոնի ներքոյ, որ դնումէ ընտիր հասարակութիւնը (la bonne société): Այս ընդհանուր ծանօթութիւնքը տուած, դանք ԺԷ դարու հեղինակների գրուածքը քննելու, ընտրելով միայն ամենագլխաւորքը:

Դրամատիկական բանաստեղծութիւնը այս դարու սկզբում դտաւ վերջապէս իւր ճշմարիտ նահապետը: Պեարոս Կորնեյլ (Pierre Corneille), Ռուան քաղաքի երիտասարդ փաստաբանը առաջին անգամ երևումէ Փարիզում 1629 թուականին Մելիտ ասած կատակերգութեամբ, որին շուտով յաջորդումեն ուրիշ նոյն տեսակ գրուածներ—Կլեսանդը, Այրի կինը, Արքայական ճեմելիքը և այլն: Ողբերգութեան մէջ նորա առաջին փորձը եղաւ Մեդէա, Սենեքայի նմանողութիւն, որ թէև թիւր

ըմբռնուած և վատ գրած լինելով, սակայն ցուցանումէ քանի մի հատուածք այնպիսի զօրաւոր մտքերով և այնպիսի գերապանծ ոճով, որ անծանօթ էին Կորնեյլից յառաջ: Սիդը (le Cid), մի նիւթ, զը կաստրօ սպանիական բանաստեղծից փոխ առած, Կորնեյլը գրչի և վերամշակութեան ներքոյ ընկնելով; ստացաւ նոր ձև և դարձաւ մի ճշմարիտ արարչութիւն: Այս գործի յանդիմանութիւնը թատրոնական բեմի վերայ ողջունուեցաւ հոգեմտյլութեան և զարմացման աղաղակով, թէ ահա դատած է Ողբերգութիւնը. ցեսէք: Բիշըլիեօն, որ նոյնպէս ողբերգական գրուածների մէջ փորձած էր իւր կարողութիւնը, խռովեցաւ տեսանելով Կոռնեյլի փառաւոր յաղթանակը, և բանաստեղծի թշնամիների պարագլուխ դարձաւ: "Սիդ" գործից յետոյ երևեցան "Հորատեանք (les Horaces): Հորատեանք դատապարտուեցան Ցամնպետներից և արձակուեցան ժողովրդից": Այս խօսքերով պատասխանեց Կորնեյլ Սիդի վերայ գրած կրիտիկաներին և այն սպառնալից դատաւորներին որ պիտի հանդէս մտանէին նորա "Հորատեանք" գրուածը դատապարտելու համար: Այս ողբերգութիւնը Կորնեյլի հանճարի առաւել զօրաւոր, առաւել ինքնատեղծ արգասիքն է: "Ցիննա և Պոլիեյկտէս" յաջորդումն Հորատեանց: Հորատեանք կացուցանումն մեր աչքի առաջև այն պարզամիտ և խիստ առաքինութիւնքը, որ պիտոյ է յառաջացնէր հասարակապետական ժամանակների աղատութիւնը: Սորա հակառակ, Ցիննան ցուցանումէ մեզ այն տակաւին աղնիւ, բայց չափազանց զգացմունքը, որ հռոմէական ազատութենից յետոյ կենդանի էին մնացած այն ցաւի մէջ, որ ազդումէր այդ աղատութեան կորուստը: Ցիննան համարվումէ Կորնեյլի ճարտարապետական գործը: Արդարև, Օգոստոսի ընդդէմ կազմուած դաւաճանութեան պատկերացոյցը, այն մեծ տեսարանը, ուր կայսրը խորհրդածումէ, արդեօք պիտո՞ էր հրաժարուիլ կայսերութենից, թէ պահպանել նորան, և ի վերջոյ Օգոստոսի քաջաղնական ներողամտութիւնը առ դաւաճանքը, գերազանց է. միայն թէ այս գերապանծ գեղեցկութիւնքը վերացնէին այն հակառակութիւնը, որ է, քանի մի, բեմի վերայ երևեցող անձնաւորութիւնների անզուգութիւնը այն կարևոր խնդրի հետ, որ յանկարծ փոխվումէ դաւաճանողներից դէպի կայսրը: Պոլիեյկտէսի մէջ (Polyeucte, որ Ցուننայ կեանքից է առած) Կորնեյլ աւելի մօտենումէ կատարելութեան գաղափարին. այս տեղ բանաստեղծի հանճարը հաւասար զօրութեամբ ցուցանումէ ամենամեծ ճարտարութիւն և բնականութիւն: Այս ողբերգութեան գեղեցկութիւնը միմեանց ընդդիմադրած բնաւորութիւնների հարմոնիկական ներհակութեան մէջ է. խօսակցութեան ձևը զարմանալի ճշգութեան և ազդուութեան է հասուցած, ողբերգութեան բոլոր մասունքը մեծ ճարտարութեամբ կապած իրեարու հետ: Ցիննայից և Պոլիեյկտէսից յետոյ կարող էր բանաստեղծը ևս առաւել բարձրանալ. նա կարող էր միայն բազմօրինակել և բազմապատկել իւր արգասիքը: "Պոմպէոսի մահով" սկսումն շարք ողբերգութիւնների, որոց մէջ Կորնեյլի հանճարը զգալի կերպով տկարանումէ, որպէս զի

նա զզուումէ թէատրոնից. և թէպէտ դարձեալ գրիչ ձեռք է առնում Ա.Գեղեցիկոս, Ռոդոն, Ասոխիս և ուրիշ ողբերգութիւնք գրելու, բայց սոքա բոլորովին անարժան են Կորնեյլի անուանը:

Կորնեյլի, իբրև ողբերգական բանաստեղծի, խորհուրդն է մարդկային հոգին դէպի վեր բարձրացնել, և այս նպատակիս հասանելու համար, նա փորձէ փորձած նկարագրել քաջաղնական հոգին իւր բոլոր տեսակներով: Արդարև, նա չէ ունեցած այն պատուասիրութիւնը յանդիմանել կացուցանելու բոլոր մարդկութիւնը իւր բովանդակութեամբ, այլ մանաւանդ թէ ցուցանելու մարդկային հոգու աղնիւ կողմը: Նա հանդիսացուցել է ախտերը ճակատ առ ճակատ պատերազմելով պարտականութեան հետ, և կամենալով բարոյականութեան աստիճանը բարձրացնել և մեր թուլութիւնքը և տկարութիւնքը ներհակ յատկութիւնների օրինակով յաղթահարել, նա ցուցել է պարտականութիւնը յաղթող ընդդէմ ախտին: Կրիտիկան յանդիմանած է Կորնեյլը այն մասամբ, թէ նա ողբերգութեանը չափից դուրս յաճախ տուած է իբրև շարժառիթ զարմացքը, մի զգացողութիւն, որ հեշտ ձանձրանումէ և սառչումէ: Այս մեղադրութիւնը լինելով մասամբ միայն հիմնաւոր, կը լինէր ամենեին արդարացի, եթէ այս մեծ բանաստեղծը զարմացքի հետ խառնած չլինէր ցաւակցութիւն և զարհուրանք: Կորնեյլի ոճը հռետորական է աւելի, քան թէ բանաստեղծական, ազդու քան ներդաշնակ, հաստատուն քան բազմօրինակ: Նա ունի կրակ աւելի, քան թէ քաղցրութիւն, շարժողութիւնք քան թէ պատկերք. նորա խօսքերը շատ անդամ չունին ճշգութիւն. չկայ մի ուղիղ համեմատութիւն նորա ձայների երևութի և մտքերի խորութեան մէջ:

Կորնեյլը իւր ողբերգութեան հիմը գրած էր Զարմացքի զգացողութեան վերայ. մի այլ բանաստեղծ ողբերգութեան հիմը դրեց Սիրոյ վերայ. սա էր Ցովհ. Ռասին (Jean Racine 1639 1699): Սկզբումը Ռասին Կորնեյլի հետևողն էր. նորա "Թեբայոյ" (la Thebaïde) և Ադեքսանդրը ցուցանումեն թէ ինչ զօրաւոր տպաւորութիւնք գործած էին նորա մանկական սրտի վերայ մեծամեծ օրինակներ— Կորնեյլի ողբերգութիւնները: Վերջումը Անդրոմաքէ մէջ գտանումէ Ռասին այն նոր ճանապարհը, որոյ վերայ պիտի տարածէր այնքան լոյս: Ռասինի ողբերգութիւնքը կարելի է բաժանել երեք կարգ. առաջինը պարունակումէ իւր մէջ Եւրիպիդէսից փոխ առած նիւթեր. բայց Ռասինը սորկաբար չէ հետևում յոյն բանաստեղծին, նա կերպարանափոխ է առնում բոլոր փոխ առած նիւթերը և դրոշմումէ նոցա վերայ նոր ժամանակի և քրիստոնէական կրօնի կնիքը: Նա ընդունումէ նիւթը, գործողութեան կենտրոնը փոխադրումէ մի այլ տեղ: Ռասինի "Անդրոմաքէն" չէ մի հասարակ ըստրուկ աղախին, որ հետ զհետէ ստիպուած էր լինել իւր բոլոր տէրանց սիրոյ նիւթ. ոչ, նա է մեծ հեկտորի աղնիւ և հաւատարիմ ամուսինը, Աստիանաքսի գորովագութ մայրը: Անդրոմաքէն լինելով պերճ և վսեմ, առանց դուրս դալու մարդկային սահմանից, քաջաղնական կին առանց ուրանալու իւր կանացի բնութիւնը, — Անդրո-

մաքէն մի զմայլեցուցիչ պատկեր է: Իֆիգենիան (Iphigénie) մի արքայական կոյս է, հպարտ և անձնուրաց նոյն իսկ թշուառութեան մէջ: Մի և նոյն կանոնքը առաջնորդումն Ռասինին իւր պատմական ողբերգութիւնների մէջ (Բայազէդ, Միհրիդատ), որ պատկանումն նորա գրուածների երկրորդ կարգին: Պատմութիւնը նորա համար մի զգեստ է, որով նա զգեստաւորումէ իւր բանաստեղծական գաղափարները: Երրորդ կարգի ողբերգութիւնների նիւթքը քաղումէ Ռասին սուրբ գրքից (Եսթեր, Գոթոլիա): Ռասինի ամենակատարեալ գրուածը ողբերգական բանաստեղծութեան մէջ, է Փեդրա (Phèdre), որոյ մէջ մարդկային ախտերը վերլուծած են խորին հասկացողութեամբ և գործողապէս հանդիսացուցած են ճարտարապետական կերպով: Աւելորդ է խօսիլ մաքուր և դաշնակաւոր Ֆրանսիախօսութեան վերայ (մանաւանդ «Եսթերի» մէջ իւր գերհամբարձ գաղափարներով և ամենապարկեշտ զգացողութեամբք) որ Ֆրանսիական գրականութեան մէջ համարվումէ օրինակ կատարելութեան:

Լուդովիկեան դարու մատենագիրներից ոչ մինը ազգային մոլար կանխադատութիւններից այնպէս ազատ չէ գտանուած, միանգամայն և իւր ազգի հոգուն այնպէս չէ յարմարուած, որպէս Յովհ. Մկրտիչ Պոկլէն (F. B.Poquelin 1620—1573), որ գրականութեան մէջ ծանօթ է Մոլիէր անունով: Այս առաջին կատակերգական բանաստեղծը Ֆրանսիայի, 15 տարու հասակից մեծ սէր ցոյց էր տուած դէպ ի թէատրոնը. թէպէտ նորա ծնողքը կամեցած էին հեռացնել նորան թէատրոնական ասպարէզից զինի ցոյց տալու նորան այդ ասպարէզը, սակայն նորա սէրը քանի զբնաց, աճեց և զօրացաւ: Քանի միամեայ հասակումէր նա, երբ Փարիզի մէջ կատակերգական խաղարկուների խումբ կազմուելով և նա սոցա պարագլուխ դարձած, 12 տարի անդադար ճանապարհորդեցաւ Ֆրանսիայի մէջ, ցուցանելով իւր ճանապարհի վերայ զանազան թեթև կոմեդիաներ, միանգամայն և թատրոնական խաղարկուի պաշտօն լցուցանելով: Բայց Մոլիերին պէտք էր վերադառնալ Փարիզ, որ կարողանար զարգացնել իւր քանքարը: Լուդովիկոս ԺԴ-ի հրամանները կոչեցին նորան դէպի մայրաքաղաքը 1658 թուականին: «Les précieuses ridicules» առաջին գործն էր, որով Մոլիեր հռչակուեցաւ իբրև կատակերգական բանաստեղծ: Այս գրուածի մէջ Մոլիեր ծաղր է առնումէ Ռանբոյլէի ապականեալ ճաշակը (1659): Երկու տարի յետոյ Մոլիեր գրեց «Ամուսնաւոր արանց դպրոցը» և «Կին մարդերի դպրոցը» (l' Ecole des Maris, l' Ecole des Femmes): Այս երկու մատենագրութիւնքը են մի կծու երգիծաբանութիւն այն հասարակուած հայեացքի վերայ, որ այն ժամանակին ունէին կանանց ստորին արժանաւորութեան և խոնարհութեան մասին: «Քաղաքացի ազնուականը» (le Bourgeois gentilhomme) հարուած է տալիս ազնուականութեանը: «Ագահի մէջ» (l' Avare) տեսանումենք մի ճարտարապետական գործ ընտանական հանճարի: Հաբպագօնի անձնաւորութիւնը կը մնայ մի մշանջենաւոր տիպ ագահութեան և մի զարհուրելի օրինակ այն արատների, որ յառաջացնումէ ագահութիւնը: «Մարդատեացի» մէջ (le Mysanthrope) Մոլիերի խորհուրդն է ցոյց տալ, թէ ինչ պակասութիւնների պիտի մեղներող լինել, եթէ կամենք մարդերի հետ ապրիլ: «Տարտիւֆ» (Tartufe) ասած գրուածի մէջ Մոլիերը խորտակելով բացել է սուտ երկիւղածութեան դուռները. նա որսած է կեղծաւորը մինչև նորա սուրբ ճանապարհների վերայ, մերկացուցել է նորան նոյն իսկ սեղանների ոտքումը, որ պղծումէր նա իւր արատներով, և այն բաղմութեան առաջև, որ խաբումէր նա ծամածռելով երեսը: Մոլիեր թէատրոնական բեմը զարդարելով մի անմահ գործով, կտակած է բոլոր դարերին ամենանգութ, ամենահարկու խաբեբայութեան ճիշդ նկարագիրը: Այս Տարտիւֆը, կոմիկական բեմի ճարտարապետական գործը, է մի շնորհ, որ Մոլիերի ականաւոր հանճարը պարգևած է մարդկութեանը: Վերջապէս «Երեւակայական հիւանդը» (le Malade imaginaire), Մոլիերի վերջին յաղթանակը, միանգամայն և գերեզմանը: Թողումենք այս տեղ յիշել բանաստեղծի միւս բաղմաթիւ գրուածները, որոց մէջ Մոլիեր յարձակվումէ իւր ժամանակի հասարակութեան պակասութիւնների վերայ: Մարդ պէտք է այդ գրուածները ընթերցասիրէ, որ կարողանայ արժանապէս գնին հատանել երևելի բանաստեղծի արդիւնաւորութեանը: Նորա կատակերգութիւնների հանդիսացոյց անձինքը միշտ իւրեանց տեղումն են և իւրեանց բնաւորութեանը միշտ հաւատարիմ: Իսկ լեզուն, չքնաղ ու աննման լեզուն կը մնայ միշտ օրինակ կատակերգական գրուածների:

Մոլիերի դպրոցի բաղմաթիւ աշակերտների մէջ, յիշատակութեան արժանի է Ժան Ֆրանսուա Ռընեար (Regnard): Ֆրանսիական թէատրոնի բեմը չունի աւելի զուարճացուցիչ կոմեդիայք, քան թէ le Joueur անունով գործը, ուր հեղինակը նկարագրումէ ինքը իւր անձը. այլև le Légataire et les Ménechmes (Դպակաշտասանգ նոմոնոպիդ) կոչուած գործերը: Արդարև Ռընեարը զուարճացնումէ լսողքը, բայց ուսուցանումէ ոչինչ և քաջ ի բաց հեռի է ուղղելուց որոյ և իցէ բարք:

Քնարերգական և վիպասանական բանաստեղծութեան մէջ չէ երևումէ նոյն առատութիւնը. թէպէտ ծէ դարու առաջին կիսումէ քանի մի բանաստեղծներ, որպէս Բական, Մէնար, Սարազէն, Շաբլէն, Սկիւդերի և Սկարրոն, Մալհերբի սկսածը յառաջ տարան, բայց բանաստեղծական և տաղաչափական արուեստը հաստատուն կանոնների ներքոյ ստորադրողը եղաւ Բուալօ (Nicolas Boileau Despréaux 1636—1711), որ իւր ժամանակակիցքը անուանեցին «Ֆրանսիական Պարնասի օրէնսդիր»: Իւր վիճակը մի քանի անգամ փոխելուց յետոյ, Բուալօն հասկացաւ վերջապէս թէ իւր կոչումը բանաստեղծութիւնն էր, մանաւանդ դորա երգիծաբանական տեսակը: 1660 ին նա հրատարակեց իւր առաջին երգիծաբանական գրուածը, իսկ յետոյ ութ միւս այդպիսի գրուածք, որ նորա «Epîtres, l' Art poétique, Lutrin» անուն գործերի հետ անմահացնումեն նորա յիշատակը: Իւր Սատիրների մէջ Բուալօն հրատարակումէ պատերազմ բոլոր անպիտան մատենագիրներին և ծաղրալի է կացուցանումէ այն սպա-

նիական վիքոցուռոյց ոճը, այն խոալական սրամիտ խաղարկութիւնը բառերի հետ, այն սուր մեղկասիրա շաղակրատանքը փողոցների, այն կատակասիրութիւնքը և չափազանց համարձակութիւնը, որ տակաւին թագաւորական դրականութեան մէջ։ «Բանաստեղծութեան արուեստը» պարունակում իւր մէջ մատենագրութեան կանոնները։ Թէպէտ Բուալօն այս քերթուածի մէջ երևում է ոչ միշտ խորամիտ քննիչ, այլև ոչ միշտ ուղիղ հասկանում է բանաստեղծութեան ներքին էութիւնը, սակայն միշտ կը մնան զարմանալու արժանի նորա վսեմ իմացականութիւնը, նորա նուրբ ճաշակը, նորա խօսքի մաքրութիւնը և ընտիր ճոխութիւնը, այլև ինչ ինչ տողեր այնպիսի ընդհանրութեամբ ճշմարիտ, որ առակք են դարձած։ «Lutrin» (դրակալ) մի ծիծաղաշարժ վէպ է, որոյ մէջ Բուալօն երգում է «Սենտ Շապել» ասած եկեղեցում բացուած վէճը այն ենչին խնդրի վերայ, արդեօք դրակալը այս տեղ պիտի դրուի, թէ մի այլ տեղ։ Այդ զրուածը, որ մի երգիծաբանութիւն է այն ժամանակի հոգևոր դասու վարք ու բարքի վերայ, առանց մօտենալու կրօնական նիւթերի, նշանաւոր է այն խորհրդով, որ նորա մէջ երևում է առաւել աշխոյժ կոմիկական հանճարի և բանաստեղծական գիտ։ Այս բանաստեղծութիւնը ունելով այնքան զարմանալի մանաւոր գեղեցկութիւնք, սառն է, որովհետև չկայ համեմատութիւն նիւթի աղքատութեան և արուեստի ճոխութեան մէջ։

Լուդովիկեան դարումը ծաղկեցաւ նոյնպէս Ֆրանսիայի առաջին առակախօսը (La Fontaine 1621—1695) բարձրացնելով այդ խրատաբանական տեսակը բանաստեղծութեան դէպի այնպիսի աստիճան կատարելութեան, որ զուշակած ևս չէին անգամ։ Ամենամեծ հնարագիտութիւնը նորա աչքում, որպէս և բոլոր ճարտարապետների, այն էր, որ ծածկէ այդ հնարագիտութեան հետքը. այն արժանաւորութեանը, որ է հաւանութիւն գտանել, նա կցորդեց էաբար և այն արժանաւորութիւնը, որ է երևիլ, թէ նա մտածում չէր այդ բանի վերայ։ Այս տեղից յառաջացաւ այս աննմանելի (inimitable) մատենագրի ինքնաստեղծութիւնը և քաղցրութիւնը. ինչ որ լսացնում է թէ մինը և թէ միւսը, է այն, որ ճշմարիտ հոգեզգեստութեան ներքոյ, որ առաջնորդում է նորան, մեք նկատումենք միշտ մարդուս սիրտը։ Լա Ֆոնտէնի առակները են մի գիրք բովանդակ կեանքի համար. նորա զուարճացնումեն մանուկները, ուսուցանումեն երիտասարդները, մխիթարումեն ծերութիւնը։

Թէպէտ և ԺԷ դարը ընդհանրապէս ձեռնտու չէր մտքի ազատութեանը, սակայն ազատութիւնը երևեցաւ աստուածաբանութեան մէջ Ժանսենիստների շնորհով, և փիլիսոփայութեան մէջ Դեկարտի զրուածներով։ Ըընէ Դեկարտ (René Descartes 1596—1650), Ֆրանսիական փիլիսոփայութեան հայրը, իւր սկզբնական կրթութիւնը ստացաւ Ջիսուսեանց դպրոցում, մանուկ հասակից մեծ աջողակութիւն ցոյց տուեց մաթեմատիկական գիտութիւնների մէջ և շուտով խելամուտ եղաւ դատարկութեանը այն բանի, որին այն ժամանակ ասումէին փիլիսոփայութիւն։ Երկար միջոց ճանապարհորդելուց յետոյ, իւր բնակութիւնը հաստատեց Դեկարտ Հոլլանդիայում, ուր և կանոնադրեց իւր համար մի առանձին, փիլիսոփայական կեցութեան կարգ, սակաւ ուտելով և խմելով, և, որքան կարելի է, հոգին ազատ կացուցանելով մարմնից, որպէս զի կարողանայ ճնշել երևակայութիւնը և ախտերը և ապրիլ միայն իմացականութեամբ։ Շատ պարզ է այն ոճը, որով Դեկարտը կամի հաստատել Աստուծոյ և արտաքին աշխարհի գոյութիւնը։ „Ես մտածումեմ. մտածողութիւնը չէ սեփականութիւն չգոյութեան. այս մի բանը, որ մտածումէ, էակ է, և այդ էակը ես եմ. ուրեմն ես գոյութիւն ունիմ, և այս տեղ մի մարդ բոլոր մարդկութեան փոխանակ է։ Բայց այն դաղափարների մէջ, որ պարունակում է այս իմացականութիւնս, կայ մի այնպիսի, որ փակում է իւր մէջ նոյն իսկ գոյութիւնը այն առարկայի, որ նա պատկերացնում է մտքով. այդ է դաղափարը հարկաւոր և անսահման էակի — դաղափարը Աստուծոյ։ Եթէ հարկաւոր էակը մտքով ըմբռնելի է, ուրեմն նա ունի գոյութիւն։ Եւ արդ փորձը ուսուցանում է մեզ, թէ մտածութեան ցուցակի մէջ գտանվում է անհնարաւորութիւն ըմբռնելու անդոյը, ուրեմն ըմբռնողութիւն հարկաւոր էակի, որ հարկաւոր է ամենայն տեղ, վասն զի, եթէ դուք սահմանափակում է գոյութիւնը, այնուհետև դուք ուր և իցէ դնում է անկարելի չգոյութիւնը. որ հարկաւոր է ամենայն ժամանակ. պատճառ, եթէ դուք թոյլ էք տալիս տեղութեան մէջ որ և իցէ ընդհատութիւն, այդ է դարձեալ չգոյութիւն։ Ուրեմն կայ և է հարկաւոր ու անսահման էակը. անսահմանը, որ պարունակում է իւր մէջ կատարելութիւնը, հարկաւոր էակը ճշմարիտ է. ուրեմն նա չէ խարած մարդս մատացածին երևութով. և որովհետև մարդս անյաղթելի կերպով հաւատում է արտաքին երևոյթների իրականութեանը, ուրեմն բնութիւնը կայ, և մեք գտած ենք ի միասին ամենայն բան, Աստուածը, մարդս և տիեզերքը։ Այս օրինակ, խիղճը տալիս է մարդկային մտածութիւն, մտածութիւնը — Աստուած. Աստուծոյ դաղափարից հետևում է նորա գոյութիւնը. Աստուծոյ գոյութենից նիւթի իրականութիւնը։» Այսպէս է Դեկարտի մտածութեան ընթացքը։ Նորա ճառը „Ցաղագս քննութեան Եղանակի„ և «Խորհրդածութիւնքը» (Discours de la Méthode et les Méditations) պարունակումեն նորա վարդապետութեան ընդհանուր կանոնքը և ցոյց են տալիս թէ ինչպէս է եղած Դեկարտի զննող հոգու գնացքը և որպիսի են այն արմատական ճշմարտութիւնքը, որոց ակնյայտնի հաւաստութիւնը ճանաչած է նա։ Սոցանից առաջինը համարվում է նոր ժամանակների ֆրանսիական արձակ խօսքի առաջին ընտիր զրուածը։ Այս չէ Մօնտէյնի առանձնական լեզուն, մի խառնուրդ ֆրանսիականի, լատինականի և գասկոնականի, այլ հասարակաց լեզու, որոյ վերայ դրոշմած է մի հատ մարդու հանճարի կնիք։

Դեկարտին ժամանակակից էր մի այլ երևելի մտածող ֆրանսիացի — Բլէզ Պասքալ (Blaise Pascal)։ Սա արդէն իւր մանկութեան օրերում զարհուրեցնումէր

հայրը իւր հանճարի մեծութեամբ և զօրութեամբ: 12 տարու հասակում, միայնակ և առանց գրքի առաջնորդութեան ստեղծումէր նա իւր աղատ ժամերում երկրաչափութեան հիմունքը. իսկ տասնեվեց տարու հասակում շարադրեց նա իւր ճառը կոնոսաձև մարմինների վերայ (Coniques): Աւելի չափահաս տարիների պտուղն են նորա հռչակաւոր գաւառական նամականիքը (Lettres Provenciales): Առաջին երեք նամակների մէջ խօսումէ նա «Շնորհաց» վերայ, խնդիր, որ այն ժամանակի Սորբոնեան աստուածաբանների մէջ մեծամեծ վէճերի առիթ տուեց: Չորրորդ նամակից սկսած, նա փոխադրումէ պատերազմը դէպ ի մի այլ տեղ. նա յարձակվումէ յիսուսեան կրօնաւորների բարոյասութեան վերայ: Այս նամակների մէջ Պասքալ հետզհետէ հեգնախօս և սաստկախօս, անցանումէ ճարտարախօսութեան բոլոր աստիճանները: Մօլիերի ամենալաւ կատակերգութիւնքը— ասումէ Վ.օլտեր— չեն ցուցանում աւելի համեմիչ աղ, քան թէ Պասքալի առաջին նամակները: Այնու ամենայնիւ այս ընտիր գործը, որ սահմանադրեց Ֆրանսիական լեզուն, որ և մնացել է մի անմանելի օրինակ, չէր Պասքալի նախապատիւ սիրով վաստակած վաստակը: Նա լռութեամբ պատրաստումէր նիւթեր մի մեծ աշխատութեան, որ կանխահաս մահը չթողից նորան աւարտել. բայց դորա ցիր ու ցան հատակոտորքը, որ հրատարակուեցան մակադրութեամբ «Մտածութիւնք» (Pensées) բաւական են զարմացման նիւթ տալու մատենագրի հանճարի վերայ: Պասքալ կամէր Դեկարտից աւելի յառաջ գնալ, և ընտրող ու տարակուսասէր ընթերցողը ըմբռնելով, իբրև հնազանդ և հաւատացող մարդ, ածել դէպ ի կրօնի ոտքը: Նորա աչքում չկայ ոչ բանականութիւն, ոչ արդարութիւն, ոչ ճշմարտութիւն, ոչ օրէնք բնականք. բնութիւնը, սկզբնական պատուիրանազանցութենից յետոյ, մինչև ի խորքը ապականուած է. Շնորհը է միակ աղբիւրը, Հաւատը—միակ ապաստանարանը մեր բանականութեան, որ փորձով վերահասու է իւր տկարութեանը: Այդ «Մտածութիւնների» մէջ Պասքալ ցուցանումէ իւր հոգու մեծութիւնը իբրև մարդ և իբրև մատենագիր: Ոչն և-ս հոգու պէս աննման զեղեցկութիւնք ունի:

Որչափ դատաստանական ճարտարախօսութիւնը ԺԷ դարում աղքատ էր, նոյնչափ և-ս հոգևորը ճոխ ու նշանաւոր էր, որովհետև վայելումէր աղատութիւն: Քաղաքացու ձայնը խեղդած էր, իսկ քահանան, մանաւանդ կաթոլիկեան եկեղեցու քահանան, կարող էր ամենայն բան ասել: Ոչ մի ազգ այնքան եռանդով աշխատած չէ կատարելագործել այն ճառախօսութեան տեսակը, որին ասումեն Քարոզ, որքան Ֆրանսիացիք: ԺԷ դարու Ֆրանսիայի քարոզիչքը Մասկարոն, Բօսիւէ, Ֆենելօն, Ֆլեշիէ միշտ օրինակ կը մնան հոգևոր ճարտարախօսութեան:

Բոսիւէ (Jacques Bénigne de Bossuet 1627—1704) ծնած է Դիժոն քաղաքում. նա ուսանումէր յիսուսեան կրօնաւորների դպրոցում. բայց փոխադրուելով դէպ ի Փարիզ, սկսաւ այս տեղ պարապիլ յունական լեզուին և փիլիսոփայութեան, առանց աչքից հեռացնելու եկեղեցական Հարց գրուածքը և Սուրբ գիրքը, որ այնքան արդասաւոր պիտի կացուցանէին նորա հանճարը: Ցասնեվեցամեայ էր Բոսիւէ, երբ նա պաշտպանեց իւր առաջին վիճաբանական գրուածը. սորա համբաւը տարածուելով, Բոսիւէի առաջև բացուեցան Բամբոյլէի պալատի դուռները: Նորա քարոզութիւնքը փարիզեան ամբիոնից 1659—1669, այնքան փառաւորեցին նորա անունը, մինչև թագաւորը 1671 թուակ. յանձնեց նորան իւր աթոռի ժառանգի դաստիարակութիւնը: Բոսիւէ, իւր աշակերտի հետ ուսումնասիրելով պատմութիւնը, գրեց իւր հռչակաւոր «Ճառք Տիեզերական պատմութեան» վերայ (Discours sur l' histoire universelle): Սորանից յառաջ գրած էր իւր «Քարոզութիւն կաթոլիկեան հաւատոյ» (Exposition de la foi catholique) և դամբանական ճառեր Աւստրիական Աննայի և Անգլիայի թագուհու վերայ: Արքայական ժառանգի դաստիարակութիւնը աւարտելուց յետոյ կարգուեցաւ Բոսիւէ Մօ քաղաքի վիճակաւոր եպիսկոպոս: Այդ պաշտօնում գրեց նա իւր յօդուածները դալլիական եկեղեցու վերայ (les articles de l' Église gallicane) և մի այլ գործ—Պատմութիւն փոփոխութեանց պրոտեստանտեան եկեղեցիների (l' Histoire des variations des églises protestantes): Պրոտեստանտների ընդդէմ յարուցած սարսափելի գրաւոր պատերազմը հաղիւ թէ աւարտած, և ահա գրիչ ձեռք առաւ պատերազմելու ընդդէմ Անաքաղ սիրոյ (pur amour) վարդապետութեանը, որոյ պաշտպան էր հանդիսացած Ֆենելօն. բայց նորա հետ վարուեցան որպէս մի յաղթուածի հետ, հարստահարեցին թէ նորա յատուկ անձը և թէ նորա բարեկամքը: Կամբրէի արքեպիսկոպոսը Պապի ձեռամբ դատապարտուած, խոնարհեցաւ վերհանձնաբար և քաջազնական ցածութեամբ հրաժարուեցաւ այն բանից, որ ամենասիրելին է մարդուս աշխարհի վերայ—իւր յատուկ սրտի վկայութիւններից: Այս վէճերի միջոցում գրեց Բոսիւէ երկու այլ գործ. Վերհամբարձումներ մատց ու Աստուածի ծոմ խորհրդոց (Elévations sur les Mystères) և խորհրդածութիւնք ի վերայ Աւետարանի (Méditations sur l' Évangile): Այդ մեծ մարդը վախճանեցաւ 1704 թուականին, իւր բոլոր կեանքը նուիրած լինելով այս երկու պաշտօնիս. լինել եռանդնոտ պաշտպանող թագաւորների բացարձակ իշխանութեան և նախանձախնդիր պահպանող հոգևոր դասու կարողութեան:

Բոսիւէի բազմաթիւ գրուածներից, տիեզերական պատմութեան վերայ գրած ճառը և դամբանական քարոզները գտած են առաւել շատ ընթերցողներ: Ուշադրութեամբ ընթերցասիրելով նորա դամբանական ճառերը, նկատումենք, որ նա կամեցած է զարմացք բերել իւր ունկնդիրների վերայ, ահ ու դող ձգել նոցա սրտի մէջ: Նորա լեզուն նման է մրրկալից ծովի, որոյ ալիքները մի բոպէ հանդարտումեն, որ աւելի սաստկութեամբ վերստին բարձրանան: Այս տեսակ ճարտարախօսութիւնը զարհուրեցուցիչ է, այլ ոչ սիրտ շարժող: Բոսիւէն շատ լաւ գիտէր, որ «երկրաւոր իշխանների» դաղաղի շրջակայ անձինքը չէին արտասուող բարեկամներ, այլ մեծ

թագաւորի պալատականները, և այս պատճառով խօսումէր նոցա հետ շքեղ և փառաւոր լեզուով, որ միայն կարող էր հաճելի լինել նոցա:

Բօսիւէն քարոզչի ամբիոնից իջանումէր արդէն, և ահա մի ուրիշ քարոզիչ Բուրդալու (Bourdaloue) անուն, ոտք կոխեց նորա վերայ: Բուրդալու բոլորովին տարբեր է Բօսիւէից: Նորա քարոզների մէջ (les Sermons) չէն տեսանվում Բօսիւէի ոճի ճարտասանական ձևերը, նմանախօսութիւնք և այլաբանութիւնք. նա հաստատ ու արագ քայլերով դիմումէ դէպ ի իւր նպատակը, որ է ուսուցանել և մտածել: Բուրդալուն ոչինչ է համարում խօսքի շքեղութիւնը, այլ, ինչպէս ասումէ Ֆենելօն, դործ է դնում խօսքը, որպէս մի համեստ մարդ իւր զդեստը այն միակ խորհրդով, որ ծածկէ իւր մերկութիւնը:

Բօսիւէի պէս, Ֆենելօն (Francois de Salignac de Lamothe—Fénelon 1651—1765) տան և հինգամեայ հասակում սկսած էր քարոզել և կարճ միջոցում այնպիսի հրաչակաւոր անուն ստացաւ, որ Փարիզու արքեպիսկոպոսը նորադարձ կաթոլիկների դաստիարակութիւնը յանձնեց նորան: Այս պարապմունքը խլեցին Ֆենելօնից տասնամեայ մատենագրական գործունէութիւն. այդ տարիների միակ դրաւոր արդիւնագործութիւնն է նորա «Ճառը Աղջիկների դաստիարակութեան վերայ» (Traité de l' Éducation des filles): Այդ միջոցում Ֆենելօն բարեկամական սիրով շաղկապուեցաւ Բօսիւէի հետ, որ յետոյ թշնամացաւ Ֆենելօնին: Հետևելով Բօսիւէի օրինակին, հրատարակեց Ֆենելօն իւր դրուածը «Հոգևոր հովիւների պաշտօնը» (le Ministère des Pasteurs): Բօսիւէի մտերիմ վստահութիւնը, Բովեյեի դուքսի բարեկամութիւնը, երկու, հասարակաց աչքում յարգելի դրուածք, մի վարք, առաքինութեան օրինակ, լի ուսումնասիրութեամբ, դիտութեամբ և քաղցրութեամբ, դրաւիչ զօրութիւնը նորա անձնաւորութեան և նորա ճարտարախօսութեան, վերջապէս դուրս հանեցին նորան իւր առանձնակեցութեան միջից: Յանձնուեցաւ նորան առաքելական պաշտօնի վիճակը Պօաթու քաղաքի, այն միջոցին, երբ Նանտեան կրօնական թոյլտուութեան հրովարտակը վերացուցած էր Լուդովիկոս ԺԴ-ի ձեռամբ: Այն զարմանալի կշտամբական նամակը, որ Ֆենելօն ուղղեց առ թագաւորը իւր առաքելական վիճակից վերադառնալով, ապացուցանումէ, որ նա բաց ի հանճարից և լուսաւոր երկիւղածութենից ունէր և կրօնական թոյլտուութիւն և քաղաքական քաջասրտութիւն: Այս արժանաւոր հովուապետը, որ, մինչև թագաւորական զօրքը հեռացուցած չէր այն գաւառից, չկամէր սկսանել իւր առաքելագործութիւնը, չկարողացաւ խաղաղ աչքով նայել հարկերից ճնշուած, քաղաքական պատերազմներից աղքատացած, քահանաների մոլեռանդութեամբ հալածուած և բռնակալութեան ներքոյ ոռնակոս եղած ժողովրդական կեանքի վերայ: 1689 ին Ֆենելօն կարգուեցաւ դաստիարակիչ Բուրգոյնի դուքսին, որ Լուդովիկոս ԺԴ-ի թոռն էր և ժառանգը: Իւր արքայական աշակերտի համար էր, որ նա գրեց Առասպելները (Fables), իւր

Խօսակցութիւնք մեռելոց (Dialogues des Morts), այլև Տելեմաքի Արկածքը (les Aventures de Télémaque): Հինգ տարի յետոյ ստացաւ նա Կամբրէի արքեպիսկոպոսութեան վիճակը, և այն պատերազմը, որ յարուցած էին նորա հակառակորդքը, կամելով ճնշել և հարստահարել մարդու սրտի զգացողութիւնը կրօնական բաների մէջ, ձգեց նորան թագաւորի աչքից: Ֆենելօն իւր կեանքի վերջին 18 տարիքը անցոյց առանձնութեան մէջ, դառնալով մխիթարիչ հրեշտակ աղքատների և վշտացածների:

Ֆենելօնի գրուածքը ամենամաքուր բարոյականութեան և ամենաջերմ մարդասիրութեան հետ միասին շնչումեն մի ախորժելի անուշահոտութիւն հնութեան, մի փառահեղութիւն լի ճաշակով և քաղցրութեամբ, որ այնպէս կատարեալ է, որպէս բասինի մէջ, որ և երևումէ աւելի պարզ: Թելեմաքը է ամենասիրելին Ֆրանսիական գրականքից: Ֆենելօն հրաշալի պատմութիւնը և բարոյական ակնարկութիւնը լծորդելով միմեանց հետ, յանդիման կացուցանելով հեթանոսական Ոլիմպոսը մի քրիստոնէական գրուածի մէջև տալով հեթանոսներին յոյժ քրիստոնէական կերպարանք, արդարև յարուցանումէ մեր մէջ փոքր ինչ սառնութիւն և օտարութիւն. բայց մեք զարմանումենք գործի աջողակ, ճարտարամիտ դիւտի, այն ոգևորութեան վերայ, որով դրած է նա. մեք մնումենք զմայլուած պատմութեան յարմարակիչ ոճի, նկարագիրների ճշմարտութեան և թարմ ու դալար ճառագրութեան վերայ. մեք զարմանումենք այն ճոխ գիտնականութեան վերայ, որ պարունակումէ իւր մէջ այդ գրուածը, և այն խորութեան վերայ, որ մատենագիրը հանդէս է հանում առանց որևիցէ պճնասիրութեան: Ի՞նչպէս պիտոյ էր գովասանել այն վառաւոր և պարզ արձակախօսութիւնը, որ երկար դարձուածներով պտոյտ պտոյտ շրջանակումէ նորա մտածութիւնը, և այն պատկերները ու ներդաշնակութիւնը, որով զդեստաւորումէ նա իւր մատենագրութեան նիւթը:

Պրոտեստանտեան ճարտարախօսների մէջ նշանաւոր են համարում Յովհաննէս Քլոդ (Jean Claude 1619—1687), որ հռչակուած է իւր հակաճառական դրուածներով ընդդէմ Բօսիւէի, Նիկոլի և Արնոյի: Նորա բացախօսութիւնը է պարզ և աղնիւ. Լսահակ դը Բոսօրը (1659—1738), որ թողել է մեզ Մանիքեցւոց պատմութիւնը (l' Histoire du Manichéisme), Պատմութիւն Վալդիկեանց և պատմութիւն Ալբիգեանց. դրուածք, որ վկայումեն նորա բազմահմուտ աջողակութիւնը մատենագրութեան մէջ և մեծ դիտնականութիւնը: Յովհ. Սօրէն (1699—1730), ամենից հռչակաւորը, որ ստացել է մականունս «Պրոտեստանտեան ճարտարախօսութեան Բօսիւէ»: Շատ անդամ դանդաղաքայլ, տարօրինակ, երկայնախօս, անուղիղ իւր ճառախօսութեան մէջ, երբեմն զիտէ Սօրէնը այնպիսի բարձր թռիչք առնուլ, որպէս Մոյսի եպիսկոպոսը. նա ունի այս մեծ ատենարանի բոլոր խորութիւնը, բոլոր մեծվայելչութիւնը, բոլոր վերասլացութիւնը: Նորա դեղեցիկ ճառերի մէջ չկայ ոչինչ չափազանցու-

թիւն, ոչինչ ճգնողութիւն արուեստի. ամենայն ինչ այդ տեղ է աշխոյժք, ամենայն ինչ երևումէ այդ տեղ ներշնչութիւն, ամենայն ինչ արձակվումէ, թափվումէ ճարտարախօսի նոյն իսկ սրտից: Նա չէ կորուսանում աչքից ոչ իւր բնաբանը, ոչ իւր լսողքը, նա համարձակութեամբ յառաջ է տանում իւր խորհրդածութիւնքը, նա շարժուած է իբրև ատենաբան:

Մինչև ցայժմ մեք տեսանք կրօնական դաւանութիւնը բարոյական ուսմանից անբաժան. այսպէս ահա Պասքալ, Բուրդալու, Բօսիւէ, Ֆենելօն են առաւել քրիստոնէական ճարտարախօսք և փիլիսոփայք, քան թէ բարոյախօսք, յատկապէս: Այս անունս պատկանումէ միւսերին առաւել մասնաւորապէս:

Խորհրդածութիւնքը այն փոքրիկ գրքի մակագրութեամբս "Հիմնական առածք" (Maximes), որոյ հեղինակը է Լա Բօշեֆուկօ (La Rochefouauld 4613—1680), լի են զօրաւոր մտածութեամբք և ձևաւորուածք իբրև վարդապետական սկզբունք, բայց մատենագիրը չգիտէ փաստերով խոստովանելի կացուցանել ճշմարտութիւնը և սիրա շարժել. Նորան անծանօթ է հոգեշմայլութիւնը, որովհետև նա չունի հաւատ դէպ ի մարդկային առաքինութիւնը: Առ հասարակ, Նորա խօսքի ոճը կծու է, հատու և սառցային: Բօշեֆուկօն ապրումէր այնպիսի ժամանակում, երբ անձնական օգուտը և ամենաչնչին շահախնդրութիւնքը էին տէրութեան շարժառիթքը, այնպիսի մարդերի մէջ, որ չէին վրդովում ժողովրդի խաղաղութիւնը և չէին ձգում իւրեանց անձը որ և իցէ երկմտելի ձեռնարկութեան մէջ, բայց միայն հաճեցնելու իւրեանց ճղճիմ ախտերը և անձնասիրութիւնը: Բօշեֆուկօն զետեղուած էր մի այնպիսի բարեյարմար պատուանդանի վերայ, որ կարող էր քաջ զննել անձնապաշտութեան բոլոր ծակամուտքը, և զարմանալի չէ, որ նա մի մտացածին բան է համարած ամենայն բարոյականութիւն, որ չէ յառաջանում այս աղբիւրից: Սակայն Բօշեֆուկօյի գիրքը մի պատուական գիրք է, բայց ոչ կատարեալ. նա ճարտարութեամբ նկարագրած է մարդկային կեանքի մի լոկ հայեցումը, և ոչ աւելի, որովհետև նա ծանօթ չէր միւսերին: Բարոյական ուսումը Լա Բռիւերի (La Bruyère 1644—1696) աւելի լաւ է. նա հասկանումէ ընկերութեան վիճակը աւելի լայն մտքով: Այն աջողակ միմեանց հետ խառնումը նկարագրած պատկերների և ամենանուրբ ու ամենախորին խորհրդածութիւնների տալիս է Նորա «Caractères et moeurs de ce siècle» գործին մի համեմային գրաւողութիւն, որ շատ անգամ պակաս է բարոյախօսների գրուածներին: Լա Բռիւերը նկարումէ առանց խնայութեան, բայց և առանց դառնութեան: Նա ունի մի կիրք միայն, այն է, ճշմարտութեան և արդարութեան սէրը. խաբէութիւնը վերաւորումէ Նորան և անարդարութիւնը վշտացնումէ Նորան. միակ վրէժը, որ նա խնդրումէ դոցանից, է այն, որ այդ արատները յանդիմանելով կացուցանում կենդանի օրինակներով. և որովհետև մարդկային բնութեան հիմքը փոխվում չէ, այլ մի և նոյն թերութիւնքը և արատքը մարդերի մէջ կան և հանդիպումեն միշտ զանազան ձևերով և կերպարանքով,

վասն որոյ Նորա գիրքը եղած է մի կանխափոյթ նկարագրութիւն յաջորդ դարերի: Այն մեծապարունակ պատկերը, որ դնումեն մեր առաջև յիշեալ նկարագիրքի: Այն մեծապարունակ պատկերը, որ դնումեն մեր առաջև յիշեալ նկարագիրքը, զարդարած է նոյնպէս մի այնպիսի ոճով, որ մատենագրի խորհրդածութիւնքը, զարդարած է նոյնպէս մի այնպիսի ոճով, որ մատենագրի խորհրդածութիւնները տալիս է ինքնատեղծութեան կնիք, պատկերացոյց երևոյթների գծագրութեանը մի տեսողական տիպ և երանգներ, որ երբէք գունատուած չեն: Սակայն, խոսնը մի տեսողական տիպ և երանգներ, որ երբէք գունատուած չեն: Սակայն, խոստովանելով Բռիւերի արժանաւորութիւնքը իբրև կենդանագիր մատենագրի, պիտոյ է ասել, որ նա չունի ոչ թեթևաշարժութիւնը և ոչ բնական պարզութիւնը այն ճարտարապետների որ յարդարած էին Նորա ճանապարհը:

Դեկարտը դրած էր մարդու արժանաւորութիւնը Նորա հանճարի և մտածութեան մէջ: Նիկոլաս Մալեբրանշը (1638—1715) դրեց Նորան հոգու և Աստուծոյ մէջ: Նորա վարդապետութեան կարգը հանդիսացուցած է "ճշմարտութեան հետազննութիւն" մակագրած գործի մէջ (la Recherche de la Vérité), որ փայլում, ինչպէս Նորա բոլոր միւս գործերը, ոճի փառաւորութեամբ և արամախօսութեան զօրութեամբ: Նա ցուցել է այդ տեղ մի արդասաւոր և ականաւոր երևակայութիւն, թէպէտ գրած է ինչ ինչ շատ գեղեցիկ թերթեր ընդդէմ երևակայութեան, որին ասած է նա "տան խելագար կինը" (la folle de la maison): Նոյն ժամանակամիջոցում, Նպիկուրոսի վարդապետութիւնքը, որ յառաջ պաշտպանած էր Գասսանդի (1592—1655), գտան իւրեանց դաւանողք հռչակաւոր ճանապարհորդը Բերնիէ, Սէնտ—Էվրըմոնտ, գիտնական Հիւէ, հեշտասէր ընկերութիւնը Նինոնի դը լ' Անքլօ (Ninon de l' Anclos) և առաւել սանձարձակ ընկերութիւնը որ յաջորդեց նախընթացին անուամբս "Ընկերութիւն Տաճարի" (la société du Temple): Կալվինական Պետրոս Բայլ (Pierre Bayle 1597—1706), փախստական լինելով դէպ ի Հոլանդիա, իւր պատմական և կրիտիկական բառարանի (Dictionnaire historique et critique) մէջ ենթարկեց մարդկային կարգերը և կարծիքները մի գիտական և այպանական սկեպտիկամիտ քննութեան: Բայլ — ասած են — է Վոլտերը ԺԷ դարու. արդարև Նորա մէջ տեսանումենք նոյն հաստատութիւնը ճաշակի, նոյն նրբութիւնը զննութեան, նոյն մեծահանճար սրամտութիւնը: Բայլի ոճը, թէպէտ և բնական և պարզ, բայց երկարախօս, մեղկ, անուղիղ և ընտանի է:

ԺԷ դարու բազմահայեաց գրականութիւնը յառաջացրեց և թեթև նամակագրութեան տեսակը, որոյ մէջ պարագլուխք հանդիսացան Բալզաք, Վուաթիւր և Մանաւանդ տիկին Սեվինիէ, որոյ նամականիքը առ իւր դուստրը, մի կենդանի, անչափ քնքուշ և սիրալից լեզուով գրած, համարվումեն Լուդովիկեան դարու առաւել բնական և առաւել ինքնաբոյս արգասիքը: Պատմագրութիւնը թէպէտ և ճոխ է, մանաւանդ թէ Լուդովիկեան դարու կեանքը պատկերացնող յիշատակաբաններով, բայց, իբրև գիտութիւն, ԺԹ դարուց շատ յառաջ չէ գնացած:

Ս. Պալասանեանց, ուսուցիչ Քրիստոնեական լեզուի և գրականութեան:

ԴԱՄԲԱՆԱԿԱՆ ՃԱՌԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Միքայէլ Տէր Գրիգորեան բժշկապետի դագաղի վերայ վանքի եկեղեցում, Հոկտեմբերի 18ին.

ՄԵԾԱՊԱՏԻՒ ՀԱՆԴԻՍԱԿԱՆ.

Մեր Հայկազեան հասարակութեան յարգելի անդամներից մինը չկայ այսօր: —Բազմատանջ, երկամեայ հիւանդութեան մահճից յետոյ, այրական տարիների լիութեան մէջ, նա դուրս է խլուած իւր օգտաւէտ գործունէութեան ասպարէզի միջից: Մի ազնիւ աշխատաւոր եղբայր յաւիտեան բաժանուած է մեզանից. Աղէտալի մտածութիւն: Արդարև, ոչ մի հարուած այս երկրաւոր կեանքիս մէջ, չէ այնչափ ազդողապէս, որչափ մահը, յիշեցնում մեզ այն ճշմարտութիւնը, թէ մեք մարդիկս ժամանակաւոր հիւրք ենք այս տեղ, պանդխտականք, որ այսօր կամ վաղիւն պիտի վերադառնանք դէպ ի մեր ամենեցուն հայրենիքը երկնքում: Երանի՞ մեզ, իմ եղբարք, որ մեք հրաւիրուած ենք դէպ ի Քրիստոնէութիւն, որոյ աստուածեղէն վարդապետութեամբ կոչուած է մարդս լինել երկու աշխարհի քաղաքացի, որ և այս կարճատև, սակաւօրեայ կեանքից յետոյ կարող է յուսալ մի մշանջենաւոր կեանքի ժառանգութիւն: Բայց այս բոպէիս, անընդդիմանալի, զարթնումն մեր մէջ տրրտում յիշատակներ. մեր կորսի մեծութիւնը ցաւելի լուսափայլութեամբ նկարվում մեր աչքի առաջև, երբ որ մտածումենք մեր հանգուցեալ եղբայրակցի վերայ, երբ որ մեք մեր սրտում որոճումենք այն սուրբ և քնքուշ յարակցութեան կապերը, որովք նա երբեմն կապուած էր այս մեր հասարակութեան հետ, որք և այս բոպէիս մահու անգութ ձեռամբ յանկարծ և անփոփոխելի կտրած ու պատառուած են: —Թոյլ տուեցէք ինձ քանի մէ բոպէ գրաւել Ձեր ուշադրութիւնը մի ճառախօսութեամբ թէ ո՞րպիսի ճանապարհով մի պատուական կեանք հասած էր իւր երկրաւոր նպատակին: Մեր ննջեցեալ բարեկամի անցեալը ցուցանում մեզ մի փառաւոր, բազմամանեայ աշխատութեան հանդէս: Նա ծնած էր Թիֆլիզում 1827 թուականին. իւր ուսումնական նախապատրաստութիւնը ստացաւ այս քաղաքիս գիմնազիոնի մէջ: Ցետոյ զգալով իւր մէջ գիտնական կոչումն, նուիրած է նա իւր անձը բժշկական արուեստի ուսումնասիրութեան Մոսկուայի համալսարանում, իբրև կովկասեան կոմիտեի աշակերտ: Մոսկուայում եղած է նա համալսարանի աշխատասէր և ականաւոր աշակերտներից մինը, իբրև խոհական անձն ամենայն կարևոր դէպքում մերձաւոր խորհրդակից բարեկամ իւր առաւել երիտասարդ հայ եղբայրակիցներին: Ցաջողութեամբ աւարտելով իւր ուսման ընթացքը և արժանաւորուելով դոքտորական աստիճանի, Մոսկուայից տեղափոխուած է դէպ ի իւր հայրենի Թիֆլիսը, ուր մօտ տասն տարի աշխատաւոր է գտանուած իբրև զիտուն և օգտաւէտ անդամ քաղաքիս հասարակութեան: Իմ ազնիւ բարեկամներ, մի փշալից նոյն և փառաւոր գործակատարութեան ասպարէզ է բժիշկ մարդու կեանքը, եթէ նա կամէր բարեխղճութեամբ և անձնանուիրութեամբ լցուցանել իւր պարտականութիւնքը դէպ ի հիւանդ և ցաւագար մարդկութիւնը: Մեք կարող ենք ասել—թէ մեր հանգուցեալ եղբայրը, գովանի ջեռմեռանդութեամբ լցուցել է այդ ծանր և դժուարին պարտականութիւնքը, իւր ճարտարութեամբ բժշկական արուեստի մէջ շատերի կեանքը փրկած է մահու վտանգից, յարգելի ծնողներ պահպանելով իւրեանց գերդաստաններին և սիրելի զաւակներ իւրեանց սիրող ծնողներին: Մեր հանգուցեալը եղած է Ներսիսեան դպրոցի հոգաբարձական ժողովի անդամ, երէցփոխան Բեթղեհեմի Աստուածածնայ եկեղեցու, և գործակալ նորա օրիորդական ուսումնարանի: Այս բոլոր ազգասիրական պարտքը նա վճարած է լի չափով, և ամենայն ժամանակ գտած է հասարակութեան յարգութիւնը և սէրը: Իւր մասնաւոր կեանքի մէջ նա եղած է մի ազնիւ, բարեմիտ և բարեգործ մարդ, իւր առանձին կեցութեան մէջ—քնքուշ սիրով սիրող ամուսին այր և զաւակներով օրհնած հայր:

Ահա, որպիսի հասարակաց և ընտանեկան առաքինութեամբք զարդարուած ու լցացուցած կեանք այսօր ուղարկաւորումենք մեք դէպ ի հող դերեզմանի. ցաւալից և տխուր պարտականութիւն, իմ ազնիւ բարեկամներ: Քանի մի բոպէից յետոյ, մեր պատուական ընկերակցի նազելի պատկերը յաւիտեան կը ծածկուի մեր աչքից. հողը կը դարձուցանենք հողին. բայց նորա հոգու վաստակները մնումն միշտ մեր անկողոպտելի սեփականութիւնը: Ուրեմն չափաւորենք մեր տրամութիւնը և տեղի տանք աւելի մեզմ մտածութիւնների: Իբրև երկիւղած քրիստոնեայք օրհնենք կամքը ամենակալ Տիրոջ, որ իշխանն է մահու և կեանքի, որ և ինչպէս պարգևած էր մեզ այդ շնորհը—այդ ականաւոր մարդը մեր հայկական հասարակութեան Թիֆլիզում, նոյնպէս առած է մեզանից, բայց և ոչ ամենևին. որովհետև նորա քաղցրը յիշատակը միշտ դալար ու կանաչ, միշտ ծաղկափթիթ մնալու է մեր սրտի մէջ սիրոյ և բարեկամութեան անմահացուցիչ զօրութեամբ:

Այժմ դարձուցանումեմ խօսքս առ Քեզ, ով ցաւերժացած դու, նախ, յանուն այս նուիրական տաճարիս, իսկ յետոյ, յանուն այս տեղ առաջիկայ հասարակութեանս: Քո մայրը, այս սուրբ եկեղեցիս, որոյ սրբարար աւազանից վերածընեցար դու, իբրև քրիստոնեայ, այսօր մատուցանելով Քեզ իւր հրաժարական ողջոյնը, վկայումէ այսպէս. Դու պահեցիր հաւատքը, պատերազմեցար բարւոք պատերազմը, կատարեցիր ընթացքը. երթ դէպ ի խաղաղութիւն: Քո եղբայրակից և վաստակակից հոգաբարձուքը Ներսիսեան դպրոցի և սորա մատաղերամ մանկունքը մատուցանելով Քեզ իւրեանց սիրոյ վերջին ողջոյնը, ձայնարկումեն առ Քեզ, բարեաւ

մեա, մեր ազնիւ աշխատակից ընկեր, մեր անմոռանալի երախտաւոր: Բեթղեհէմի օրիորդաց ուսումնարանի որբացած աշակերտուհիքը իւրեանց կուսական շնորհունքով բարբառումեն առ քեզ, իւրեանց սրտցաւ բարեկամը. խաղաղաւէտ ճանապարհ քեզ, դու ուղևորդ դէպ ի մշանջենաւորութիւն: Առ քեզ մեծարական շնորհակալութեամբ ձայն է արձակում քաղաքիս հասարակութիւնը. Օրհնեալ լինի քո յիշատակը, ազնիւ հոգի դու, որ այսքան տարիք դատանուած ես ցաւակից բարեկամ և դարմանող խնամարկու մեր գերդաստաններին: Լալով և արտասուելով քեզ մատուցանումեն իւրեանց հրաժարական ողջոյնը և քո սգաւոր ամուսինը, քո ծաղկափթիթ զաւակները և դոչումեն առ քեզ. Բարեաւ մեա, քաղցր ամուսնակից, դու մեր պատուական ծնող, մինչև ցկրկին երանաւէտ տեսութիւնը հանդերձեալ աշխարհում:

Ս. Նալչաջեանց.

ԶԵԿՈՒՅՈՒՄՆ

Մեծապատիւ Հայկազեան Հասարակութեանը.

Ներսիսեան Հոգևոր Ազգային դպրոցի Հոգաբարձուքը դիտաւորութիւն ունէին այժմէն իսկ առաջի դնել պատուելի Հասարակութեանը յիշեալ դպրոցի նոր պրոգրաման, այսինքն ուսման ընթացքի նախագիծ ցուցակը, որ և պատրաստի էր. սակայն, ինչպէս գործի փոքր ինչ շրջահայեաց քննութենից յետոյ դուրս երևեցաւ, պրոգրաման չլինելով լիակատար, այլև ոչ ըստ ամենայնի զուգայարմար ժամանակի բազմամանեայ պիտոյքին, յետ պահուեցաւ մինչև ցկրկին վերաքննութիւն: Հոգաբարձուքը կամէին յառաջագոյն խոհական խորհրդով և զգուշաւոր դատողութեամբ կշռել և վճռել այն կարևոր խնդիրը, արդեօք Ներսիսեան դպրոցը, միտ դնելով նորա բուն կոչմանը և ներքին խորհրդին, որ է մեր լուսաւոր օրերի համար պատրաստել արժանաւոր պաշտօնեայք Աստուծոյ սեղանի, բանագէտ քարոզիչք և ժրաջլուխ հովիւք հայկազեան ժողովրդի, նոյն և քահանայ մարդիկ, որ օտար չէին այժմեան ընդհանուր մարդկային կրթութենից—արդեօք Ներսիսեան դպրոցը իւր իսկական խորհուրդը ճշմարտապէս լցուցանելու և ազգի բազմամասնեայ հոգևոր ու բարոյական կարիքին դարման մատուցանելու համար, որպիսի ներքին կազմութիւն պիտի ստանար, այսինքն, որպէս պիտի լինէր նորա կատարելի ուսումնական ընթացքը, մանաւանդ որ գիտական կրթութեան հետ հարկաւոր է երևում, այլև ցանկալի միանգամայն, զուգակցել գործնական արդիւնաբերութեան կարողութիւնը և աջողակութիւնը կեանքի ասպարէզի մէջ, որովհետև

քահանայ մարդը, ըստ իւր կոչման, բազմամասնեայ հաղորդակցութիւնք ունելով իւր ժողովրդի հետ, ի ժամու և ի տարաժամու պարտական է խորհրդակից լինել իւր հոգևոր տեսչութեանը յանձնած հասարակութեանը և դարման տանել նորա զանազան կարիքին: Հոգաբարձական ժողովը վերոյիշեալ մեծ և կարևոր խնդիրը շրջահայեաց և հիմնաւոր կերպով քննելուց և վճռելուց յետոյ, կը ձեռնարկէ աշխատասիրելու Ներսիսեան դպրոցի լիակատար պրոգրաման, հանդերձ կարևոր ծանօթաբանութեամբք, որ և իւր ժամանակին յանդիման կը կացուցանէ պատուելի Հասարակութեանը:

ՊԱՏԿԵՐ ՈՒՍԱՆԵԼԻ ՆԻՒԹԵՐԻ

Որ ներկայումս աւանդվումեն Ներսիսեան դպրոցի մէջ.

1. Ուսումն կրօնի.
2. Հայկազեան լեզու և Պատմութիւն Հայկազեան դպրութեան.
3. Ռուսական լեզու.
4. Ֆրանսիական լեզու.
5. Ընդհանուր Պատմութիւն և Աշխարհագրութիւն.
6. Քաղաքական պատմութիւն Հայաստանեայց աշխարհի, հանդերձ երկրագրական տեսութեամբ:
7. Թուաբանութիւն.
8. Տառահաշուութիւն (Ալգեբրա).
9. Երկրաչափութիւն.
10. Ֆիզիքա.
11. Բնապատում գիտութիւն և Ֆիզիքական աշխարհագրութիւն.
12. Վայելչագրութիւն հայերէն և ռուսերէն.
13. Նկարչութիւն և գծահանութիւն երկրաչափական ձևերի.
14. Եկեղեցական երգեցողութիւն.

Ա. Հոգաբարձուք Ներսիսեան դպրոցի.

Նախագահ աթոռակալ հոգաբարձական ժողովի, Մակարիոս վեհաւոր արքեպիսկոպոս Վրաստանի.

1. Իշխան Միքայէլ Բէհբուդեանց.
2. Բարսեղ Խոջայեանց.

3. Ստեփանոս Բաստամեանց.
4. Յովհաննէս Չիթախեանց.
5. Տէր Թադէոս Խոջէյնաթեանց.
6. Տէր Գրիգոր Տէր Բարսեղեանց.
7. Նիկողայոս Ալադաթեանց.
8. Գրիգոր Իզմիրեանց.
9. Զաքարիաս Գրիգորեանց.
10. Հէջուբ Հէջուբեանց.
11. Սաղոմոն Վարձելեանց.
12. Յովհաննէս Տէր Յովսէփեանց.

Բ. Ուսուցիչք Ներսիսեան դպրոցի.

1. Տեսուչ դպրոցի Ստեփանոս Նազարեանց.
2. Նոյնը, ուսուցիչ Հայկազեան լեզուի և դպրութեան, այլև ազգային պատմութեան վերին դասատներում.
3. Ստեփանոս աւագ քահանայ Մանդենեանց } Ուսուցիչք կրօնագիտութեան.
4. Ղևոնդ քահանայ Խարազեանց }
5. Գրիգոր Տէր Յարութիւնեան, ուսուցիչ Հայկազեան լեզուի երկու առաջին զուգընթաց դասատներում և երկրորդում.
6. Միքայէլ Փրիդոնեանց, ուսուցիչ ռուս լեզուի երեք առաջին դասատներում:
7. Կարապետ Ֆոյաջեանց, ուսուցիչ Ֆրանսիական լեզուի երկու առաջին զուգընթաց դասատներում:
8. Ստեփան Ռիժով և Մանդէն Մանդէնեանց, ուսուցիչք ռուսական լեզուի հինգերորդ և չորրորդ դասատներում.
9. Ստեփանոս Պալասանեանց, ուսուցիչ Ֆրանսիական լեզուի 2. 3. 4 և 5 դասատներում, այլև Հայկազեան լեզուի 3 և 4 դասատներում.
10. Պետրոս Սիմէոնեանց, ուսուցիչ Ընդհանուր պատմութեան և աշխարհագրութեան.
11. Մարտիրոս Սիմէոնեանց, ուսուցիչ Թուաբանութեան, Տառահաշուութեան և Երկրաչափութեան, այլև Ֆիզիքայի.
12. Զաքարիաս Գրիգորեան, ուսուցիչ բնապատում գիտութեան.
13. Միքայէլ Սալամբէգեանց, ուսուցիչ ռուսական վայելչագրութեան, Նկարչութեան և Գծահանութեան:
14. Պաւղոս Բենքլեանց, ուսուցիչ Հայկազեան վայելչագրութեան.
15. Յարութիւն քահանայ Սուսանաճեանց, ուսուցիչ Երգեցողութեան.

Գ. Վերակացուք.

1. Պաւղոս Բենքլեանց
2. Գրիգոր Տէր Յարութիւնեանց
3. Մանդէն Մանդենեանց

Դ. Որդեգիրք Ներսիսեան դպրոցի.

1. Աղէքսանդր Խուդեանց.
2. Նիկողայոս Լալայեանց.
3. Նիկողայոս Մամաջանեանց.
4. Վաղթանգ Հասան—Ջալալեանց.
5. Յովսէփ Մատաթեանց.
6. Նշան Մատաթեանց.
7. Մակար Տէր Սարգսեանց.
8. Յովհաննէս Սուլանաճեանց.
9. Յովհաննէս Ղազարեանց.
10. Սէդրակ Արարատեանց.
11. Աստուածատուր Աւետիքեանց.
12. Ադամ Սարդարեանց.
13. Գաբրիէլ Տէր Գաբրիէլեանց.
14. Բարսեղ Տէր Աբրահամեանց.
15. Աւետիք Տէր Յակոբեանց.
16. Սահակ Աղեկեանց.
17. Արշակ Սիմոնեանց.
18. Արշակ Թէմուրազեանց.
19. Միքայէլ Կարախանեանց.
20. Գրիգոր Բօչարեանց.
21. Միքայէլ Տէր Գալստեանց.
22. Գէորգ Աբուլեանց.
23. Միհրան Բաղդասարեանց.
24. Անուշաւան Մելումեանց.
25. Աղէքսանդր Խոջայեանց.

1058

Ե. Ստիպենդիատք Ներսիսեան դպրոցի.

1. Յովհաննէս Լալայեանց.
2. Յովհաննէս Խիզանեանց.
3. Գրիգոր Յարութիւնեանց.
4. Բաղարատ Սայաթնեանց.
5. Սահակ Խախանեանց.
6. Սահակ Տէր—Մինասեանց.

Զ. Ներսիսեան դպրոցի ուսուցիչների Ստիպենդիատք.

1. Նիկողայոս Չիգիանեանց.
2. Միքայէլ Փիրումեանց.

ՀՀ Ազգային գրադարան
NL0330725